

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ՝ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Լ. Հ. ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԱՐԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ—ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներկայումս գիտության, տեխնիկայի, արտադրական գործունեության տարրեր բնագավառների հսկայական առաջընթացի շնորհիվ երևան են գալիս գիտական բազմաթիվ հասկացություններ և համապատասխանաբար վերջիններս բնորոշող նոր տերմինաբանություն:

Քանի որ «տերմինաբանությունը ներկայացնում է հասարակության գիտական ու տեխնիկական առաջադիմության ողջ բովանդակությունը և ապահովում բարձր զարգացման հասած տեխնիկայի, արտադրության ու գիտության զանազան ճյուղերի կազմակերպումն ու հետագա առաջընթացը» (25,85)¹, այդ իսկ պատճառով աշխարհի զարգացած բոլոր երկրներում բառապաշարի տերմինաբանական շերտերի հետազոտության հետ կապված հարցերը հետզհետե ավելի ու ավելի են դրավում գիտական հասարակայնության ուշադրությունը:

Հասկապես վերջին երկու տասնամյակում երևան են եկել տարբեր լեզուների գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանության ուսումնասիրությանը նվիրված բավական մեծ քանակությամբ լեզվաբանական աշխատանքներ (այս կամ այն

¹ Օգտագործված գրականության հղումները տրվում են բուն շարադրանքում՝ փակագծերի մեջ, թվային նշանակումներով: Առաջին թիվը համապատասխանում է գրականության ցանկում տեղ գտած աշխատության համարին, իսկ երկրորդ թիվը ցույց է տալիս գրքերի կամ պարբերականների համապատասխան էջը:

բնագավառի տերմինաբանության կազմավորումը և զարգացումը կամ մի որևէ ժամանակահատվածի պատմությունը, ինչպես նաև կառուցվածքային-ֆունկցիոնալ, իմաստաբանական և բառակազմական, ստուգաբանական, կոնտեքստային և մի շարք այլ հայեցակետերով վերլուծություն): Դրանց թվում գերակշռողը հոգվածներն ու թեկնածուական դիսերտացիաներն են: Իհարկե, կան նաև առանձին ժողովածուներ, մենագրություններ և աշխատություններ, որոնք շատ քիչ են քանակով²:

Տերմինաբանության կարգավորման և միասնականացման խնդիրները, բնական է, որ առանձնապես պետք է հուզեն ազգային լեզուների տերմինաբանության մշակման հարցերով զբաղվող մասնագետներին: Հանրահայտ է այն ճշմարտությունը, որ «ամեն մի լեզու, որ ուզում է մնալ արդի զարգացած լեզուների շարքում, հանդես դալ որպես գիտության լիարժեք լեզու, պետք է անընդհատ համալրվի, մշակվի, ճշգրտվի» (26,93):

Գիտության զարգացման բուռն ընթացքից ետ չմնալու համար հայոց լեզվի տերմինաբանությունը, որի ակունքները գտնվում են դարերի խորքում, հասկանալի է, որ ներկայումս էլ ավելի պետք է «փոփոխվի և հարստանա՝ գիտական հասկացությունների փոփոխության և նոր հասկացությունների առաջացման պրոցեսին զուգընթաց» (26,93):

Քանի որ հայ լեզվաբանական գրականության մեջ առ այսօր ընդհանուր առմամբ բացակայում է գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանությանը նվիրված համակողմանի ուսումնասիրություն, ուստի և նման կարգի աշխատանքների երեւելան գալը, թվում է, որ խիստ անհրաժեշտ և հրատապ է:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գիտության առանձին բնագավառների և ճյուղերի տերմինաբանության ուսումնասիրությունն է առավելապես հնարավորություն տալիս պարզելու «տվյալ բնագավառի տերմինների ներքին և արտաքին հարաբերությունը միասնականացնելու սկզբունքները և հեշտացնելու եղած տարբերակներից կատարվող ընտրությունը» (26,97—98), մենք որպես հետազոտության առարկա վերցրել ենք մեկ գիտակարգի՝ լեզվաբանության տերմինաբանությունը:

Գիտության հիշյալ բնագավառի տերմինաբանության, որպես

2 Տե՛ս ներկա աշխատանքի տերմինաբանական գրականության ցանկի համապատասխան բաժինները:

հատուկ ուսումնասիրության առարկայի, ընտրությունը բխում է ժամանակի պահանջներից:

Լեզվաբանական տերմինաբանության բնագավառում ավելի շատ կատարվել են գործնական (բառարանագրական) բնույթի աշխատանքներ, որոնց կարևոր նշանակությունը գնահատում ենք ըստ արժանվույն: Բառարանագրական աշխատանքը, փաստորեն, պայմանավորված է լեզվաբանական տերմինաբանության կարգավորման հրատապ պահանջով³, Բայց և այնպես, միանգամայն հասկանալի է, որ հիշյալ բնագավառում չպետք է սահմանափակվել միայն զուտ կիրառական բնույթի աշխատանքներով: Այդ իսկ պատճառով հայրենագիտության մեջ հետզհետե ավելի ու ավելի են ծավալվում լեզվաբանական տերմինաբանության՝ տարբեր լեզուներով կատարվող բազմակողմանի հետազոտությունները⁴:

Լեզվաբանական տերմինաբանության ուսումնասիրությունը անհրաժեշտ է նաև անդրլեզվաբանության կամ էլ լեզվաբանության անդրտեսության համար: Վերջին ժամանակներս անդրտեսական և անդրմեթոդաբանական հետազոտությունները մեծ ընդունելություն են գտնում գիտության կողմից: Դրանք լեզվաբանության համար ունեն թե՛ տեսական և թե՛ գործնական նշանակություն:

³ Լեզվաբանական տերմինաբանության բնագավառում եղած հանրածանոթ բառարաններից են՝ Օ. Ս. Ախմանովայի (102), Յ. Վախեկի (103), Ժ. Մարուզոյի (104), Ա. Լ. Տրախտերովի (105) և է. Խեմպի (106) աշխատությունները: Բացի Օ. Ս. Ախմանովայի բառարանից, մյուսները չունեն տերմինաբանության համակարգման և կարգավորման նպատակ: Միայն Օ. Ս. Ախմանովայի բառարանում է, որ ընդգրկված և բացահայտված են լեզվաբանական բոլոր գիտակարգերի (հնչյունաբանություն, հնչույթաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն և այլն) ընդհանուր գործածական և ճանաչում գտած տերմինները:

Բանասիրական գիտությունների թեկնածուներ Լ. Զ. Պետրոսյանի, Ս. Ա. Գալստյանի, Թ. Ա. Ղարազյուզյանի՝ տարիներ առաջ տպագրության պատրաստ եղած և վերջին ժամանակներս լույս աշխարհ եկած «Լեզվաբանական բառարանը» հայ իրականության մեջ առաջին փորձն է ներկայացնելու ինչպե՛ս հայ, այնպե՛ս էլ ընդհանուր լեզվաբանական տերմինաբանությունը: Մ. Հարությունյանի՝ ձեռագրի իրավունքով հրատարակված բառարանը ըստ էության լեզվաբանական գրականության թարգմանությանը ծառայող ձեռնարկ է (101,7):

⁴ Լեզվաբանական տերմինաբանությանը նվիրված ուսումնասիրություններից կարելի է հիշատակել հետևյալները՝ (83) (84) (87) (90) (91) (95) (97) (100) և այլն:

Հայ իրականության մեջ լեզվաբանական առանձին տերմինները՝ հատկապես նրա աղբյուրների և զարգացման սկզբնական շրջանների, իմաստային տարբեր ըմբռնումների և կիրառությունների ու նման կարգի մի շարք այլ հարցերի մասին բազմաթիվ տեղեկություններ կան լեզվի և լեզվաբանության պատմությանը նվիրված աշխատություններում, ինչպես նաև այլ բնույթի ուսումնասիրությունների զգալի մասի լեզվական այս կամ այն իրողության հարցի պատմությանը հատկացրած բաժիններում: Փաստորեն, մեղանում լեզվաբանական տերմինաբանությունն էլ ամբողջությամբ չի եղել տերմինաբանական բնույթի հետազոտության հատուկ առարկա⁵:

Նման կարգի հետազոտությունները կապված են մի շարք դժվարությունների հետ, որոնք հիմնականում պայմանավորված են տերմինաբանության՝ որպես մի ամբողջական համակարգի համակողմանի ուսումնասիրության մեթոդի մշակված չլինելու հանգամանքով:

Հուսալի արդյունքների հասնելու համար ուսումնասիրությունը սկսել ենք ամենապարզ եղանակից. սովետական շրջանում լույս տեսած հայ լեզվաբանական գրականությունից (աշխատություններ, դասագրքեր, գիտական մենագրություններ ու հոդվածներ և այլն) քարտազրել ենք լեզվաբանների գործածած գրեթե բոլոր տերմինները⁶: Այդպես ենք վարվել նաև այն նկատառումով, որ մեր ձեռքի տակ չենք ունեցել հայերեն լեզվաբանական տերմինների ամբողջական համակարգն ընդգրկող տպագիր բառարան. հանգամանք, որն, անշուշտ, ամեն մի հետազոտողի պետք է կանգնեցներ մի շարք լուրջ դժվարությունների առջև: Բնական է, որ նախքան բուն ուսումնասիրությանն անցնելը, մենք պետք է ձեռնամուխ լինեինք անհատ ուսումնասիրողի համար բավականին աշխատատար մի գործի, այսինքն՝ կազմեինք հայերեն լեզվաբանական տերմինների հնարավորին չափ լրիվ բառացանկ:

⁵ Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մուրադյանի «Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում» (76) արժեքավոր ուսումնասիրությունը իր բնույթով պատմա-լեզվաբանական աշխատանք է:

⁶ Տերմիններ ենք քաղել նաև նախախորհրդային շրջանում լույս տեսած այն աշխատություններից, որոնց հեղինակները (Մ. Արեղյան, Հր. Աճառյան, Ստ. Մալխասյան) շարունակել են ստեղծագործել խորհրդային շրջանում:

Աշխատանքի ընթացքում հանդիպած մի շարք այլ դժվարությունները կապված են եղել՝ ա) տերմինաբանական դրականության մեջ տեղ գտած տերմինների (խոսքը բուն տերմինագիտությանը վերաբերող տերմինների մասին է) դեռևս կարգավորված չլինելու, բ) հայերեն լեզվով զուտ տերմինաբանական բնույթի հետազոտություններ չունենալու, հետևապես և հիշյալ կարգի տերմինների՝ հայերեն համարժեքների բացակայության հանգամանքների հետ: Ուստի, բնական է, որ մեր կողմից թարգմանված ու կերտված և սույն շարադրանքում գործածված այդ տերմիններից ոչ բոլորը կարող են հաշույն և ընդունելի լինել:

Ներկա ուսումնասիրությունը, որը նվիրված է հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային (ինչպես նաև իմաստաբանական, հասկացական, գործառական) վերլուծությանը, ըստ էության, ունի թե՛ տեսական և թե՛ գործնական բնույթ:

Տերմինաբանության հետազոտության նման հայեցակետի ընտրությունը հիմնավորվում է նրանով, որ ներկայումս, «օբյեկտի համակարգային և կառուցվածքային (ընդգծումները մերն են—Լ. Ղ.) առանձնահատկությունների ուսումնասիրությունը դարձել է տեսական գիտակարգերի մեծ մասի կենտրոնական խնդիրներից մեկը...» (18,8):

Հետազոտությունը հիմնականում կատարված է համաժամանակյա տեսանկյունով:

Տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծությունը (անգամ գիտության մի որոշակի բնագավառի տերմինների հիման վրա), հասկանալի է, որ իր մեջ ընդգրկում է շատ խնդիրներ: Պարզ է, որ նման աշխատանքում հնարավոր չէր լինի շոշափել բոլոր այդ հարցերը: Այդ իսկ պատճառով այստեղ քննել ենք առավել կարևոր և, ըստ մեզ, հրատապ նշանակություն ունեցող խնդիրներ, որոնք, թվում է, որ կարող են պատկերացում տալ հայերեն լեզվաբանական տերմինների համակարգի և կառուցվածքի մասին: Բացի այդ, առաջադրված որոշ հարցերին պատասխան ենք տվել ընդհանուր գծերով միայն և աշխատանքում ընդգրկել ենք հավաքված նյութի (հազարավոր տերմիններ) մի մասը:

Ներկա աշխատանքում նորմավորման բնույթի խնդիրներ չառաջադրելը և բոլոր տերմիններին հանգամանալից բնութագրումներ չտալը ամենևին էլ չի խոսում սուր և վիճելի հարցերից

խուսափելու միտումի ու վերլուծության վերացական բնույթի մասին: Պարզապես այստեղ անհնար էր լուծել նման կարգի խնդիրներ: Քանի որ քննությունը կատարվել է բազմաքանակ տերմինների հիման վրա, ուստի և դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կատարած մերժման կամ ընդունման առաջարկի հիմնավորումը հասկանալի է, որ շատ հեռուն կտաներ: Բացի այդ, առայժմ վատարել ենք միայն նախնական աշխատանքը՝ տվյալ դեպքում, լեզվաբանական տերմինաբանության օբյեկտիվ ուսումնասիրությունը, որի կարիքը, թվում է, որ ունի գիտության ցանկացած ճյուղի տերմինաբանության կարգավորումը:

Հիմնվելով լեզվաբանական տերմինների համակարգի և կառուցվածքի առանձնահատկությունների ու ընդհանուր օրինաչափությունների, ինչպես նաև միտումների վրա, թվում է, որ հնարավոր կլինի մշակել այնպիսի հանձնարարականներ, որոնք կարելի է օգտագործել հայ լեզվաբանական տերմինների հետագա կատարելագործման և միասնականացման ուղղությամբ:

ՏԵՐՄԻՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ՏԵՐՄԻՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒ ԲՆԱԳԱՎԱՌ

Նախքան տերմինաբանության բուն տեսական հարցերի քննությունն անդրադառնալը, պարզենք, թե ո՞րն է տերմինաբանության՝ որպես գիտական ուսումնասիրության հատուկ բնագավառի էությունը, որո՞նք են տերմինաբանության ուղղությամբ տարվող աշխատանքները, ի՞նչ տեղ է գրավում տերմինաբանությունը լեզվաբանության և մնացած գիտությունների շրջանակում:

Մասնագետները գիտության լեզվի, գիտական, տեխնիկական և հասարակական-քաղաքական, ինչպես նաև լեզվաբանական տերմինաբանության միասնականացմանը վերաբերող ընդհանուր հարցերի մշակումը դասում են կիրառական լեզվաբանության ոլորտը: Վերջինիս միջոցով, ինչպես հայտնի է, իրականացվում է լեզվաբանության և այլ գիտությունների ու տեխնիկայի տարբեր բնագավառների կապը:

Ա. Ա. Ռեֆորմատսկին նշում է, որ տերմինաբանության բնագավառում լեզվաբանության և լեզվաբանների առջև դրված

են երկու կարգի խնդիրներ: Դրանցից մեկը, որն ընդհանուր է, միաժամանակ ունի և՛ տեսական, և՛ գործնական (կիրառական) բնույթ: Նա տեսական ոլորտին է հատկացնում տերմինի և տերմինաբանության բառագիտական խնդիրը, տերմինաբանական տիպաբանության բացահայտումը, գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանության կազմի և աղբյուրների ուսումնասիրությունը: Իսկ գիտության և մարդկային գործունեության ցանկացած բնագավառի տերմինաբանության օրինաչափությունների մշակումը, ինչպես նաև տարբեր գիտությունների և տեխնիկայի այս կամ այն բնագավառի տերմինաբանության կարգավորումը, գիտական և ճյուղային տերմինաբանական բառարանների կազմման աշխատանքները, փաստորեն, ունեն գործնական բնույթ: Երկրորդը Ռեֆորմատսկին դիտում է իբրև մասնավոր և առանձնահատուկ կարգի խնդիր (93,126): Պարզ է, որ այս մասնավոր համարվող խնդիրը ևս, կարող է ունենալ թե՛ տեսական, թե՛ գործնական բնույթ:

Տերմինաբանությունը, որպես գիտական աշխատանքի մի առանձնահատուկ բնագավառ, ունի իր ուսումնասիրության ուրույն ոլորտները:

Տերմինաբանական աշխատանքի տարածված տեսակներից են գիտության այս կամ այն ճյուղի տերմինաբանության կարգավորումը, ստեղծումը, տերմինաբանության համաձայնությունը (այսինքն, միջազգային տերմինաբանական աշխատանքը), հասկացությունների, ինչպես նաև դրանք բնորոշող տերմինների համակարգը կազմելու գործընթացը և տերմինների հիմքում ընկած գիտական հասկացությունների սահմանումը:

Տերմինաբանության կարգավորումը, բնականաբար, կատարվում է այն դեպքում, երբ գիտության և տեխնիկայի որոշակի բնագավառում արդեն այս կամ այն լեզվով կա այդ ճյուղի հասկացությունների զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող տերմինաբանություն: Տվյալ դեպքում տերմինաբանական աշխատանքի խնդիրն է քննադատորեն վերանայել առանձին տերմինները կամ ամբողջ տերմինաբանությունը:

Տերմինաբանության ստեղծման դեպքում հնարավորության սահմաններում տերմինները պետք է կերտել մայրենի լեզվի հիմքի վրա: Ինչպես հայտնի է, քիչ տարածում չունի այն տեսակետը, համաձայն որի ազգային տերմինը կարելի է ստեղծել այլ լեզվի տերմինի թարգմանության ուղիով: Այս կապակցությամբ

իրավացի են այն մասնագետները, որոնք գտնում են, թե ազգային նոր տերմինների կերտումը նախ և առաջ ստեղծագործությունն է և ոչ թե ուրիշ լեզուների հայտնի տերմինների թարգմանություն:

Տերմինաբանության համաձայնությունը ունի համազգային նշանակություն: Ժամանակակից միջազգային տերմինաբանական աշխատանքի գլխավոր խնդիրը միակ, համաձայնեցված հասկացությունների հաստատումն է: Բնականաբար լավ կլինի, որ այդ հասկացությունները բնորոշող տերմինները արտահայտվեն ազգային ձևով:

Հասկացությունների, ինչպես նաև դրանք բնորոշող տերմինների համակարգը կազմելու ժամանակ որոշվում է տվյալ հասկացության և տերմինի տեղը նախ հավասարաթեք այլ հասկացությունների և տերմինների համեմատությամբ, ապա այդ իսկ հասկացության տեղը առավել լայն ու առավել նեղ հասկացությունների շրջանակում: Այստեղից, բնականաբար հետևում է այն, որ բոլոր դեպքերում տերմինների համակարգի կարգավորմանը պետք է նախորդի հասկացությունների համակարգի կարգավորումը:

Գիտական հասկացության սահմանման դեպքում հաստատվում է տերմինի իմաստը, ճշգրիտ կերպով ընդգծվում են տերմինի միջոցով բնորոշվող հասկացության սահմանները, բովանդակվում են տվյալ հասկացության առանձնահատկությունները ստեղծող անհրաժեշտ և բավարար հատկանիշները:

Քանի որ տերմինաբանական աշխատանքը հիմնականում ունի հանձնարարողական բնույթ, ուստի մասնագետներն առաջարկում են սկզբնական արդյունքները ներկայացնել տերմիններ պարունակող երկլեզվյան, ինչպես նաև բազմալեզվյան ժողովածուների (տերմինարաններ) մեջ:

Տերմինաբանության ուղղությամբ տարվող աշխատանքի եղանակները այնքան բազմազան և առանձնահատուկ են, որ տերմինաբանությունը, ինչպես մասնագետներն են նշում, հնարավոր է, որ ներկա պայմաններում վերածվի մի առանձին գիտակարգի (69, 79):

Տեսական առումով, տերմինաբանությունը որպես գիտական ուսումնասիրության առանձին բնագավառ, կարելի է ասել, որ առաջին հերթին անմիջականորեն առնչվում է տրամաբանության հետ: Այսպես օրինակ, հասկացությունների կազմավորման գործընթացը, հասկացության մեջ արտացոլված առարկայի կամ

երևույթի էական հատկանիշները, լեզվական նշանի և հասկացության միջև եղած հարաբերությունը, հասկացությունների, ինչպես նաև դրանք բնորոշող տերմինների միջև եղած կապերն ու փոխհարաբերությունը և նման կարգի այլ կարևոր խնդիրներ, որոնք մշտապես գտնվում են տերմինաբանության հարցերով զբաղվողների ուշադրության կենտրոնում, անհնար է բավարար չափով լուսաբանել, առանց իսկ հաշվի առնելու տրամաբանությանը վերաբերող հիշյալ հարցերի ինքնատիպ առանձնահատկությունները:

Գիտության որոշակի բնագավառներում առաջացած տերմինները լայն տարածում գտնելու և լեզվի բառային կազմը հարըստացնելու շնորհիվ դառնում են լեզվաբանության, առաջին հերթին բառագիտության ուսումնասիրության առարկա: Իսկ ինչպես հայտնի է, իմաստաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է հետևել լեզվում գործածություն ունեցող տարբեր գիտակարգերի տերմինների ճշգրտությանը, իմաստային որոշակիությանը:

Ասվածից բոլորովին էլ չպետք է հանգել այն եզրակացության, թե տերմինաբանությունը խառնվում է գիտության այլ բնագավառներին: Այսինքն, ուսումնասիրության խնդիրների առանձնահատկությամբ պայմանավորված, տերմինաբանությունն անհրաժեշտ կապ ստեղծելով լեզվաբանության և գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառների միջև, այնուամենայնիվ իր բնույթով մնում է լեզվաբանական գիտակարգ և չի խառնվում այլ գիտությունների շրջապատում: Ուրեմն, խնդրի լեզվաբանական տեսանկյունից ելնելով, կարելի է, ասել, որ տերմինաբանությունը լեզվաբանության (հատկապես բառագիտության) մի առանձին բաժին է:

Հայտնի է, որ գիտության ցանկացած բնագավառի տերմինները սկսում են երևան գալ այդ իսկ գիտությունների ձևավորման շրջանից սկսած: Նման երևույթ է նկատվում նաև տերմինաբանության՝ դեռևս ձևավորման գործընթացի մեջ գտնվող բնագավառում: Եվ ներկայումս լեզվաբանության այս բաժնում արդեն ստեղծվել են բավական քանակությամբ տերմիններ, որոնք բնականաբար դեռևս հեռու են բավարար չափով կարգավորված լինելուց⁷:

⁷ Այսպես օրինակ, հիմնական տերմիններից մեկը՝ տերմինաբանությունը ինչպես ուսերենում, այնպես էլ հայերենում բազմիմաստ է: Терминология

Քանի որ տերմինաբանությունը, ինչպես ասվեց, կապված է լեզվաբանության մի շարք բաժինների, ինչպես նաև գիտության այլ ճյուղերի (հիմնականում տրամաբանության) հետ, ուստի այս բնագավառի տերմինների մեծ մասը վերցված են բառագիտությունից, բառակազմությունից, իմաստաբանությունից, տրամաբանությունից⁸։ Այսպես օրինակ՝ տերմինի իմաստ, տերմինի համակարգայնություն, տերմինաբանական համակարգ, տերմինի սահմանողական գործառնություն, տերմինաբանական դաշտ, տերմինների հոմանիշություն (նույնանիշություն), ապատերմինացում, տերմինի բնորոշում, անվանակարգ (անվանակարգություն), տերմին-բառակապակցություն (բաղադրյալ տերմին), տերմինի բաղադրիչ, ատրիբուտ-տերմին, տերմինի որոշիչ բաղադրիչ, տերմինի որոշյալ բաղադրիչ և այլն⁹։ Նման կարգի տերմինների գործածությունը տեղ է գտել ինչպե՛ս տեսական, այնպե՛ս էլ գործնական բնույթի աշխատանքներում։

ՏԵՐՄԻՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Տերմինի՝ որպես գիտական լեզվի բառապաշարի հիմնական միավորի վերաբերյալ եղած բնորոշումների քննությունը ցույց է տալիս, որ սովորական լեզվաբանները և տերմինաբան-մասնագետները գեոևս չեն հանգել մեկ տեսակետի¹⁰։

տերմինի տակ հիմնականում հասկացվում է՝ 1) լեզվի մասնագիտական բառապաշարի զարգացման օրինաչափություններն ուսումնասիրող գիտակարգ, 2) գիտության, տեխնիկայի, արվեստի առանձին բնագավառների տերմինների ամբողջությունը և 3) գիտության մի որևէ ճյուղի հանձնարարվող տերմիններ պարունակող ժողովածուները, Պրոֆ. Գ. Սևակը այս երեք տարրեր իմաստների համար առաջարկում է առանձին տերմիններ. առաջինի՝ համար՝ տերմինագիտություն, երկրորդի՝ տերմինաբանություն և երրորդի՝ տերմինաբան։ Թվում է, որ այս տերմինները ճիշտ են բնորոշում իրենց հիմքում ընկած հասկացությունների էությունը։ Ի դեպ, ռուսական մասնագիտական զրականության մեջ առաջարկվել է терминоведение տերմինը՝ համապատասխան գիտակարգը բնորոշելու համար։

8 Հետաքրքիր և գործնական տեսակետից օգտակար կլինի հենց տերմինագիտության տերմինների ուսումնասիրությունը։

9 Քանի որ հայ իրականության մեջ համարյա չկա տերմինաբանությանը վերաբերող տեսական բնույթի ուսումնասիրություններ, ուստի եղած տերմինների գերակշռող մասը դեռևս շուրջի հայերեն համարժեքներ։

10 Հայտնի է, որ տերմինի էության հարցը քննարկվել է միայն սովորական լեզվաբանության մեջ։ Արտասահմանյան լեզվաբանությունը, որը զբաղվում է միայն տերմինաբանության խիստ գործնական խնդիրներով, տերմինի տեսական հարցերի մշակմանը դեռևս հատուկ ուշադրություն չի դարձրել։

Որոշ լեզվաբաններ և տերմինաբան-մասնագետներ էլ ընդհանուր առմամբ խուսափում են տերմինը բնորոշելուց: Նրանք գտնում են, քանի որ թե՛ տերմինները և թե՛ ընդհանուր գործածական բառերը օժտված են ընդհանուր շատ հատկանիշներով, հետևապես դժվար է դրանց միշտ խիստ սահմանազատում անցկացնելը և վերջապես տերմինը բնորոշելը:

Տերմինի տարբեր սահմանումների համար ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում էլ նկատի է առնվում, որ տերմինը այս կամ այն կերպ կապված է տրամաբանական հասկացության հետ (36,8) (10,13): Եվ նայած այն հանգամանքին, թե այդ կապն ինչպես է բացատրվում, այսինքն կախված այն բանից, թե տերմինի համար, որ գործառնությունն է հիմնականը համարվում, ըստ այդմ էլ որոշվում է տերմինի սահմանումների միշտ եղած տարբերությունը:

Այսպես, Գ. Օ. Վինոկուրը գտնում էր, որ «տերմինները հատուկ գործառնությամբ բառեր են» (36,5): Եվ այդ հատուկ գործառնությունը, որով բառն հանդես է գալիս իբրև տերմին, անվանման գործառնությունն է: Ապա շարունակում է. «Կենցաղային (սովորական—լ. Ղ.) տերմինը իրերի անվանում է: Բայց և այնպես գիտա-տեսական տերմինը հասկացության անվանում է» (36,5—6):

Գ. Օ. Վինոկուրի այս դրույթը ընդունելություն գտավ որոշ լեզվաբանների շրջանում, իհարկե փոքր-ինչ այլ մեկնաբանություններով: Այսպես, Ե. Մ. Գալկինա-Ֆեդորովը (ինչպես նաև մի շարք այլ ուսումնասիրողներ) գտնում է, որ տերմինը անվանում է արտադրության կամ գիտության տվյալ բնագավառի առանձնահատուկ օբյեկտները (11, 117): Ն. Պ. Կուզկինը, որը տերմինաբանական և ոչ տերմինաբանական բառապաշարի միջև էական տարբերություն չի տեսնում ո՛չ ձևական, և ո՛չ էլ բովանդակության տեսանկյունից, փաստորեն, հանգում է վերոհիշյալ տեսակետին: Գտնելով, որ միակ իրական տարբերությունը պայմանավորված է արտալեզվական գործոններով, Կուզկինը կարևոր է համարում տերմինի՝ իրականության առանձնահատուկ օբյեկտների համապատասխանությունը (48, 143):

Տերմինի՝ որպես անվանողական գործառնությամբ հանդես եկող բառի տեսությունը քննադատության տեղիք տվեց: Ա. Ա. Ռեֆորմատսկին անվանողականությունը համարելով բոլոր բառերի համընդհանուր գործառնություն, գտնում է, որ նման դիրքո-

որոշմամբ հնարավոր չէ բացահայտել տերմինի առանձնահատկությունը (61,47—48)։

Ինչպես հայտնի է, լեզվի ընդհանուր գործածական բառերն էլ օժտված են նման հատկանիշով։ Տվյալ դեպքում խախտվում է ընդհանուր գործածական բառի և դիտական տերմինի սահմանազատման չափանիշը։ Այնինչ կարևորը հենց այդ չափանիշը պահպանելն է։ Բացի այդ, գիտության, տեխնիկայի և հատկապես արտադրական գործունեության ցանկացած բնագավառում գործածվում են անվանողական հատկանիշով օժտված բազմաթիվ լեզվական նշաններ (օրինակ՝ այբուբենի տառերի, մականիշների, ցանկացած պայմանական ու վերացական նշանների ցանկը, ինչպես նաև մեքենաների հազարավոր մասերի անունները, առարկաների պիտակավորումները և այլն)։ Ելնելով դրանից մի՞թե կարելի է ասել, որ այդ բազմաթիվ լեզվական նշանների քանակին էլ համապատասխան կան տերմիններ։ Պարզ է, որ՝ ո՛չ։ Դրանց մի մասը անվանակարգային նշաններն են (номенклатурные знаки), որոնք ամեն մի բնագավառում իրենց ամբողջությամբ մի առանձին համակարգ են կազմում։

Փաստորեն, անվանողական գործառնությամբ հնարավոր չէ սահմանազատել տերմինաբանական և ոչ տերմինաբանական բառապաշարը։ Հետևապես դրանք պետք է տարբերակել այլ մոտեցումով։

Ակադ. Վ. Վինոգրադովն անվանողական գործառնությունը վերագրում էր լեզվի ընդհանուր բառապաշարին։ Նա գտնում էր, որ տերմինաբանությունը հատուկ է բնորոշիչ (դեֆինիտիվ-սահմանողական) գործառնություն։ Բնորոշման տակ Վինոգրադովը նրկատի ունեւ տերմինի տեղի նշումը հասկացությունների և համապատասխան նշանակումների որոշակի համակարգում (10,12—13)։

Մի շարք լեզվաբաններ (Լեկովսկայա, Կապանաձե և ուրիշներ) ու տերմինաբան-մասնագետներ ընդունելով Վ. Վինոգրադովի հիշյալ դրույթը, գտնում են, որ տերմինը մի այնպիսի հատուկ կարգի բառ է, որը սահմանում (բնորոշում) է դիտական հասկացությունը (52,358,359) (42,80)։

Կ. Ա. Լեկովսկայան տերմինի՝ սահմանողական գործառնության բնորոշ լինելու դրույթը չի հասկանում այնպես, թե իբր դիտական բոլոր տերմիններն էլ օժտված են բնորոշիչ հատկանիշով։ Նա իրավացիորեն գտնում է, որ տերմին-բնորոշումների

Վողգին գիտության ցանկացած բնագավառում կան տերմին-անվանումներ, այսինքն, այնպիսի տերմիններ, որոնք հանդես են գալիս միայն որոշակի երևույթների անվանումների դերով (52,358), ի դեպ, այդ կարգի տերմինները, նայած թե որ բնագավառին են պատկանում, կարող են նույնիսկ գերակշռել: Շարունակելով իր միտքը լեկտվսկայան նշում է, որ թեպետ անհրաժեշտ է տարբերել երկու կարգի տերմիններ, բայց և այնպես բնորոշիչ դերով շօտված գիտական տերմիններն այնուամենայնիվ կապված են հասկացությունների սահմանումներին (ի դեպ, կապը իրականանում է տերմինների միշտոցով): Մի բան, որ գիտական տերմինաբանությունը տարբերում է մաքուր անվանողական, զբաղմունքի տերմիններից (52,359):

Տերմինի և հասկացության կապը մեկնաբանվել է նաև հետևյալ երկու տեսանկյուններով՝ ա) տերմինը հասկացություն արտահայտող (63, 4) (34,3—4) (31,6) և բ) տերմինը հասկացություն նշանակող հատուկ կարգի բառ է (29,5) (51,5) (40,4) (73,5):

Այսպիսով, հիշատակված տեսակները նախ հիմնվում են տերմինի գործառական բնորոշման վրա (այսինքն, բոլոր սահմանումները գործառական են) և երկրորդ, նայած այն հանգամանքին, թե տերմինի՝ գիտական հասկացության հարաբերության մեջ ո՞ր գործառությունն է հիմնականը համարվում, ըստ այդմ էլ առանձնացվում են անվանողական, սահմանողական (բնորոշիչ), արտահայտչական (էքսպրեսիվ), նշանակական (սիգնիֆիկատիվ) գործառությունները:

Ա. Ա. Ռեֆորմատսկին, ինչպես նաև մի շարք հետազոտողներ, հրաժարվում են տերմինի մեջ միակ, «գերակշռող» գործառության փնտրումներից: Նա գտնում է, որ տերմինների հիմնական և անհրաժեշտ հատկանիշն այն է, որ դրանք գործածվում են հատուկ ոլորտներում: Փաստորեն, տվյալ դեպքում առաջնայինը համարվում է ոչ թե տրամաբանական, այլ զուտ գործառական չափանիշը: Այսինքն, կարևորը պատկանելությունն է գիտության և տեխնիկայի որոշակի լեզվին: Իսկ տերմինների և ոչ տերմինների մնացած տարբերությունները նա երկրորդական է համարում:

Գործառական չափանիշը ընդունելով որպես գիտական տերմինների կարևոր հատկանիշ, բայց և այնպես, թվում է, որ բո-

լոր դեպքերում էլ անհրաժեշտություն է զգացվում առանձնացնել տերմինի համար առավել բնորոշ գործառությունը:

Կտրականապես շանտեսելով տերմինի անվանողական դերը, որն ավելի հատուկ է տեխնիկական գիտությունների և արտադրական գործունեության տարբեր բնագավառների տերմինաբանությանը, միևնույն ժամանակ կարևոր ենք համարում ակադ. Վ. Վ. Վինոգրադովի և նրա հետևորդների կողմից առաջ քաշված այն դրույթը, ըստ որի «գիտական, հատկապես ճաստակալան գիտությունների տերմինաբանության համար բնորոշ է տերմինի հարաբերակցությունը հասկացության հետ: Հետևաբար, այստեղ ավելի ցայտուն կերպով հանդես է գալիս տերմինի սահմանող դերը (ընդգծումները հեղինակինն են—Վ. Ղ.)» (76,115—116):

Սահմանողական գործառությունը ըստ էության, ծառայում է տերմինաբանական բառապաշարի շրջանակների համար, ներգրավելով այստեղ միայն հասկացությունների տերմին-սահմանումները, այսինքն, գիտական, տեխնիկական տերմինաբանությունը այդ բառի նեղ իմաստով: Տերմինի հիշյալ գործառությանն առաջնություն տալու դեպքում, թվում է, որ մի կողմից ավելի հստակ է առանձնացվում տերմինի սահմանը ընդհանուր գործածական բառից, իսկ մյուս կողմից՝ գիտական լեզվի բառապաշարի մի այլ շերտից՝ անվանակարգային նշաններից:

Ուրեմն, լեզվաբանական տերմինը հանդես է գալիս որպես համապատասխան հասկացության տրամաբանական բնորոշման միջոց¹¹:

ՏԵՐՄԻՆԻ ԻՆՈՐՈՇ ՀԱՅԱՆԻՇՆԵՐԸ

Տերմինի բնորոշ հատկանիշները առանձնացնելիս, թվում է, որ պետք է հաշվի առնել ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնները: Վերջիններս միևնույն դերը չեն խաղում տերմինաբանության և ընդհանուր գործածական բառապաշարի ստեղծման գործում: Այսպես, հասարակական կյանքի զարգացումը տարրեր կարգի ազդեցություն է գործում բառերի և դիտա-

¹¹ Տերմինի սահմանողական դերը, պարզ է, որ չի բացարձակացվում: Քանի որ ներկա ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել լեզվաբանական տերմինները, որոնց հատուկ է համապատասխան հասկացության բնորոշիչ գործառությունը, այդ իսկ պատճառով այստեղ ընդգծվում է տերմինի՝ որպես տրամաբանական սահմանման գերակշռող դերը:

կան տերմինների վրա: Նոր բառերը ընդհանուր առմամբ ի հայտ են գալիս տարերայնորեն, դրանք կերտող հեղինակներին գտնելը սովորաբար դժվար է: Իսկ նոր տերմինների երևան գալը միշտ էլ պայմանավորված է նոր հասկացության յուրացմամբ:

Ընդունելով սահմանողական (բնորոշիչ) գործառությունը որպես գիտական տերմինի գլխավոր առանձնահատկություն, մի շարք լեզվաբանների հետևության մեծ է ևս ելնում ենք այն բանից, որ լեզվում գոյություն ունի տերմին և ոչ տերմին հակադրությունը, այլ խոսքով՝ տերմինի և ընդհանուր գործածական բառի հիմնական գործառությունների՝ բնորոշում և անվանում հակադրությունը:

Տերմինի բնորոշ հատկանիշները փորձենք բացահայտել տերմինները ընդհանուր գործածական բառերին հակադրելու միջոցով:

Որ բոլոր տերմինները բառեր են, կասկած չկա, այսինքն, դրանք կազմում են տվյալ լեզվի ընդհանուր բառապաշարի մի մասը: Բայց ոչ բոլոր բառերը կարելի է համարել տերմիններ: Եվ տերմինները լեզվի ընդհանուր գործածական բառերից տարբերվում են մի շարք հիմնական և երկրորդական հատկանիշներով:

Քննությունը սկսենք տերմինի հիմնական հատկանիշների բացահայտումից: Նշենք, որ տերմինի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են մենիմաստությունը, ինչպես նաև բազմիմաստությունից, նույնանիշությունից, համանունությունից զերծ լինելը և այլն, թվում է, որ չպետք է զուգահեռ դիտարկել այնպիսի գործոնների ու հատկանիշների հետ, ինչպիսիք են՝ տերմինի՝ հասկացության հետ ունեցած կապը և համակարգայնությունը, ինչպես նաև որոշակի տերմինաբանության անդամ լինելու հանգամանքը: Վերջիններս առաջինների համեմատությամբ տերմինների համար ունեն շատ կարևոր նշանակություն: Դրանք փաստորեն տերմինի հիմնական, գլխավոր հատկանիշներն են:

Սակայն տերմինաբանության հարցերով զբաղվողների մի մասը մենիմաստությունը դիտում է իբրև տերմինների առանձնահատկություն կամ ամենաէական հատկանիշ (11,117): Որոշ լեզվաբաններ էլ կա՛մ գտնում են, որ տերմինը մենիմաստ է (8,33 և 36), կա՛մ էլ մենիմաստ լինելու միտում ունի (17,99)՝ (49,267):

Իհարկե, տերմիններն ունեն մենիմաստություն ձեռք բերելու միտում: Բայց, ըստ երևույթին, այնքան էլ ճիշտ չէ տերմինի ամենագլխավոր, առանձնազատիչ և բնորոշ հատկանիշը մենիմաստությունը համարելը: Եվ այս կապակցությամբ ճիշտ են վարվում այն մասնագետները (Ն. Պ. Կուզկին, Բ. Ն. Գուլովին), որոնք գտնում են, որ մենիմաստությունը, ինչպես նաև ճշգրտությունը ու մի շարք այլ հատկանիշներ չեն բացահայտում տերմինի էությունը (48,141) (38,19): Չէ՞ որ գիտության ամեն մի բնագավառում էլ կան տերմիններ, որոնք օժտված չեն մենիմաստությամբ, չունեն իմաստային ճշգրիտ սահմաններ: Բացի այդ, ընդհանուր գործածական բառապաշարի մեջ էլ կան այնպիսի միավորներ, որոնք զուրկ չեն մենիմաստության, ճշգրտության հատկանիշներից:

Տերմինի և հասկացության հարաբերությունը

Ընդհանրապես ուսումնասիրությունների մեծ մասում այն վարծիքն է իշխում, համաձայն որի տերմինն անմիջապես արտահայտում է հասկացության էությունը, իսկ բառիմաստը միջնորդավորված ձևով է կապված հասկացության: Մասնագետների մի մասը այս հանգամանքը հիմք է ընդունում տերմինը լեզվի ընդհանուր գործածական բառերից տարբերակելու համար: Իսկ Ռ. Ա. Բուդաղովը գտնում է, որ երկու դեպքերում էլ կապը անմիջական է, միայն թե «տերմինի կապը հասկացության հետ ավելի թափանցիկ, հստակ է» (8,34):

Ուրեմն, եթե ընդհանուր գործածական բառն էլ, տերմինն էլ անմիջականորեն կապված են հասկացությանը, այսինքն երկուսին էլ բնորոշ է հասկացական բովանդակությունը, ապա թվում է, որ դրանց տարբերությունը պետք է փնտրել արտահայտված հասկացությունների մեջ:

Ընդհանուր գործածական բառերի հիմքում ընկած են կենցաղային, առօրեական հասկացություններ: Դրանք որպես կանոն ստեղծվում են մարդու ամենօրյա պրակտիկայի ընթացքում: Չնայած որ առօրեական (շարքային) հասկացությունների մեջ արտացոլվում են նաև առարկաների առանձնահատուկ, էական հատկանիշները, բայց, այնուամենայնիվ, դրանք չեն պահանջում լրացուցիչ, բանական ճիգեր: Իսկ դիտական տերմինները բնորոշում են այնպիսի հասկացություններ, որոնք ընդհանրացման,

տրամաբանական բարձր աստիճանի վերացարկման արդյունք են:

Ուրեմն, ընդհանուր գործածական բառն անվանում է շարքային հասկացություն, իսկ տերմինը՝ գիտական: Գիտական հասկացությունները, ինչպես հայտնի է, մշտապես գտնվում են զարգացման ընթացքի մեջ, անընդհատ փոփոխվում են: Եվ նման կարգի հասկացությունների բնորոշման համար անհրաժեշտ են իրենց գործառնությամբ լեզվի ընդհանուր գործածական բառերից տարբերվող անվանումներ: Փաստորեն, այդպիսի բառերի դերում հանդես են գալիս գիտական տերմինները, որոնք այս կամ այն հասկացության համար դառնում են տրամաբանական բնորոշման միջոց:

Քանի որ գիտական հասկացություններն անընդհատ փոփոխվում են, ապա բնական է, որ տերմինը գլխավորապես պետք է հարաբերակցի ճանաչողության որոշակի աստիճանում գտնվող հասկացության հետ: Այսպես օրինակ, լեզվաբանական տերմինը միշտ էլ բնորոշում է լեզվաբանական որոշակի հասկացություն: Այդ իսկ պատճառով տերմինի իմաստի փոփոխությունը միշտ էլ կապված է գիտական հասկացության փոփոխության հետ: Այստեղից մասնագետները հետևյալ կարևոր նախապայմանն են առաջ քաշում՝ տերմինի բովանդակությունը պետք է հավասարաթեք լինի հասկացությանը և տերմինը չպետք է հակասի հասկացությանը: Փաստորեն, սա տերմինաբանության կատարյալ վիճակը պահպանելու ամենակարևոր գործոններից մեկն է: Սակայն նշված համապատասխանությունը միշտ չէ, որ պահպանվում է: Ժամանակի ընթացքում անհամապատասխանություն է առաջանում հասկացության և այն բնորոշող տերմինի միջև: Տվյալ դեպքում այդ իսկ հասկացությունը բնորոշող տերմինի իրական իմաստը և բովանդակությունը պետք է ճշգրտվեն: Հակառակ դեպքում տերմինի նման իմաստը կարող է նրա նոր բովանդակության ճիշտ ըմբռնմանը արգելք հանդիսանալ:

Տերմինի նոր իմաստի դրսևորումը մասնագետները երբեմն կապում են հասկացության յուրաքանչյուր նոր սահմանման հետ: Իսկ ուրիշները գտնում են, որ տերմինի նոր իմաստի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ այն սկսել է նոր իրականություններ նշանակել կամ էլ դադարել է նախկին մի շարք իրականություններ բնորոշելուց: Սրանից հետևում է այն, որ եթե անվանման առարկան նախկինն է և միայն փոխվել է նրա

մասին հասկացության մեկնաբանությունը, ապա տերմինի իմաստը չի փոխվել, այլ փոխվել է միայն հասկացության բովանդակությունը: Այսինքն, տերմինի իմաստը հասկացության ծավալն է, բայց ոչ բովանդակությունը: Հասկացության բովանդակությունը կարող է փոխվել, խորանալ, այն դեպքում, երբ նրա ծավալը մնում է նախկինը:

Այս դեպքում էլ կարևորը տերմինի իմաստի և հասկացության հավասարաբեկության պահպանումն է: Ուստի թվում է, որ ճիշտ են վարվում այն մասնագետները, որոնք տերմինի բնորոշման հիմքում այս դրույթն են դնում՝ իբրև նրա վարկեր հատկանիշներից մեկի բացահայտման միջոց:

Քննվող հարաբերակցության մեջ բացի հասկացությունից կարևոր դեր ունի նաև տերմինը: Այդ հարաբերության մեջ տերմինը ոչ թե կրավորական կերպով է արձանագրում հասկացությունը, այլ իր հերթին ազդում է այդ հասկացության վրա, ճշգրտում է այն, առանձնացնելով խառը պատկերացումներից (8, 31):

Համակարգայնությունը ուրպես տերմինի և տերմինաբանության բնորոշող առանձնահատկություն. տերմինը ուրպես տերմինաբանական դաշտի անդամ

Ասվեց, որ տերմինը նախ և առաջ կապված է հասկացության հետ: Բացի դրանից, հասկացությունների միջև առկա կապի շնորհիվ այն կապված է նաև մյուս տերմինների հետ: Դրանով է պայմանավորված տարբեր գիտաճյուղերի տերմինաբանության գիտականությունը: Փաստորեն, գիտության այս կամ այն ճյուղի տերմինաբանությունը հանդես է գալիս ոչ թե իբրև տերմինների կամայական հավաքածու, այլ բառերի կամ բառակապակցությունների մի այնպիսի առանձնահատուկ համակարգ, որը համապատասխանում է այդ իսկ բնագավառի հասկացությունների փոխկապակցված և փոխպայմանավորված համակարգին: Դ. Ս. Լոտտեն հենց սա համարում է սովորական տերմինաբանության և գիտական տերմինաբանության միջև եղած տարբերությունը (54, 728):

Յուրաքանչյուր տերմին այլ տերմինների ստորադասությամբ արոշակի տեղ ունի տերմինաբանական տվյալ համակարգում,

որը կախված է այդ համակարգում հասկացության գրաված տեղից¹²,

Ուրեմն, գիտական տերմինաբանության բնորոշ առանձնահատկությունը համակարգայնությունն է¹³:

Տերմինների համակարգը տվյալ լեզվի ընդհանուր բառապաշարի համակարգի ներսում հանդես է գալիս որպես մի ընդգծված ենթահամակարգ (62, 121): Այս երկու կարգի համակարգերը ընդհանուր գծերի հետ միասին, ունեն նաև առանձնահատուկ կողմեր:

Մասնագետները նշում են, որ տերմինաբանությունը միևնույն ժամանակ և՛ փակ համակարգ է, և՛ բաց: Փակ է այնքանով, որքանով որ տերմինաբանական համակարգերին հնարավոր չէ ավելացնել կամ դրանցից դուրս հանել ինչ-որ տարրեր, առանց մյուս մասերը փոփոխելու և տերմինները վերախմբավորելու: Բացի այդ, տերմինաբանական համակարգերում եղած տերմինները շատ ավելի հազվադեպ են փոխարինվում նորերով: Ուստի այս առումով կարելի է խոսել տերմինաբանության՝ որպես ամենաճշգրիտ և ամենախիստ գիտական կառուցվածք ունեցող համակարգի մասին:

Պարզ է, որ նույն բանը չի կարելի ասել ընդհանուր գրական լեզվի բառապաշարի մասին: Այստեղ ավելի հեշտությամբ կարելի է ինչ-որ միավորներ ավելացնել կամ եղածը փոխարինել նորերով:

Ուրեմն, ի տարբերություն ընդհանուր գրական բառապաշարի, պարփակվածությունը տերմինաբանության բնորոշ հատկա-

¹² Հենց Դ. Ս. Լոտտեի աշխատանքների կարևոր արժանիքներից մեկը տերմինի՝ որպես տերմինաբանական համակարգի անդամի գաղափարն է: Նա գտնում էր, որ որևէ տերմին անհնար է մեկուսացված կերպով դիտարկել և գնահատել: Տերմինը պետք է գնահատվի որպես որոշակի համակարգի անդամ (54, 728): Այս դրույթը լեզվաբաններից հետագայում ավելի հետևողականորեն զարգացրեց Ա. Ա. Ռեֆորմատսկին:

¹³ Ի դեպ, մասնագիտական գրականության մեջ տերմինի համակարգայնությունը տարբեր կերպ է մեկնաբանված: Այսպես, լեզվաբանների մի մասը համակարգայնությունը ըմբռնում է որպես դասակարգողական էություն (տե՛ս օրինակ՝ 39, 58), մյուսները գտնում են, որ տերմինի համար բնորոշը բառակազմական համակարգայնությունն է (տե՛ս օրինակ՝ 61, 54), երրորդները զարգացնելով հիշյալ միտքը, գտնում են, որ տերմինը համակարգային է թե՛ որպես տերմինաբանական և թե՛ որպես լեզվական համակարգի տարր (տե՛ս օրինակ՝ 8, 33 և 36):

ներշն է, քանի որ այն օժտված է ներքին համակարգային խիստ համապատասխանություններով:

Տերմինաբանությունը նաև բաց համակարգ է (պարզ է, որ սա ընդհանուր գրական բառապաշարից ավելի պակաս բաց համակարգ է), քանի որ այն մեկընդմիջ տրված մի բան չէ, այլ փոփոխվում, զարգանում է: Սակայն տերմինաբանության համալրումը չունի կամայական բնույթ. գիտական հասկացությունների հիմքի վրա առաջացած նոր անվանումները այս կամ այն համակարգի մեջ ներմուծվում են խիստ անհրաժեշտության դեպքում:

Ընդհանուր գրական լեզվի բառապաշարը շատ դժվարությամբ և արհեստականորեն է բաժանվում ենթահամակարգերի (իմաստային և բառային դաշտերի, առարկայական-թեմատիկ խմբերի): Տերմինաբանական բառապաշարն, ընդհակառակը, շատ ավելի հեշտությամբ և բնականորեն է բաժանվում ճյուղային ենթահամակարգերի, քանի որ այն օժտված է ստորակարգության բնույթի կառուցվածքով: Ամեն մի տերմինաբանություն քանակապես ավելի բիշ է, այսինքն ունի որոշակիորեն սահմանափակ թվով տերմիններ, որի շնորհիվ այն ավելի կազմակերպված համակարգ է, քան ընդհանուր բառապաշարը:

Դ. Ս. Լոտտեն գտնում է, որ գիտության այս կամ այն բնագավառի տերմինները կարող են համակարգված լինել, եթե նախապես հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները: Ամենակարևորը, տերմինների կառուցման հիմքում պետք է դրված լինեն հասկացություններն իրենց զարգացման ընթացքի մեջ դիտարկող դասակարգումներ: Երկրորդ՝ հիշելով դասակարգումներից, պետք է առանձնացնել տերմինաբանական անմիջական արտացոլմանը ենթակա անհրաժեշտ և բավարար հատկանիշներ: Այսպանից հետո միայն պետք է ընտրել տերմինների կազմության համար անհրաժեշտ բառեր և դրանց բաղադրիչներ (55,73):

Տերմինաբանական համակարգերի գիտականությունը պայմանավորված է նաև մի շարք այլ գործոններով: Տերմինների և հասկացությունների համակարգը իրենց տարրերի քանակով պետք է հավասար լինեն, տերմինների համակարգի զարգացումը պետք է համաժամանակյա լինի հասկացությունների համակարգի զարգացմանը:

Տերմինը, որպես լեզվական գոյացություն, երկու կողմ ունի՝ արտահայտության և բովանդակության պլաններ: Այս բանը

նկատի ունենալով, մասնագետները գտնում են, որ տերմինա-
բանությունը պետք է համակարգային լինի թե՛ արտահայտու-
թյան և թե՛ բովանդակության պլաններում: Բովանդակության
պլանի համակարգայնությունն ասելով նկատի է առնվում տերմինա-
բանության իմաստաբանական կամ հասկացական հարա-
բերությունների առկայությունը: Արտահայտության պլանի
համակարգայնությունը որոշվում է տերմինաբանության մեջ առ-
կա բառակազմական հարաբերություններով: Տերմինաբանության
համակարգայնության համար շատ կարևոր է արտահայտության
և բովանդակության պլանի համապատասխանության հանգաման-
քը (68,33):

* * *

Հայտնի է, որ լեզվի ընդհանուր գործածական բառերի ի-
մաստը շատ դժգոհությամբ հասկացվում է խոսքի իրադրությունից,
բառային շրջապատից (այսինքն, համատեքստից): Իսկ քանի որ
գիտական տերմինները, որպես կանոն, բնորոշում են սահմա-
նափակ և հաստատուն կերպով արձանագրված հասկացություն,
ուստի բնական է, որ դրանք ընդհանուր առմամբ պետք է ան-
կախ լինեն համատեքստից:

Տերմինի իմաստային բովանդակությունը, ինչպես ասվել է,
պայմանավորված է այդ իսկ տերմինի հիմքում ընկած հասկա-
ցության իմաստով. այն չի կարող կախված լինել տվյալ տեր-
մինի՝ նախադասության մեջ գործածված տեղից, այլ այդ իմաստը
պետք է որոշվի միայն հասկացությունների ամբողջ համակարգով
և գիտության տվյալ ճյուղի տերմինաբանության համապատաս-
խանությամբ:

Փաստորեն, տերմինը պետք է կապված լինի մի այլ բնույթի
շրջապատի հետ, որը և տերմինաբանական դաշտն է: Տերմինի
համար դաշտը տվյալ տերմինաբանությունն է, հասկացություն-
ների ամբողջ համակարգով, որից դուրս բառը կարող է կորցնել
տերմինի իր բնույթը (61,51): Այս կապակցությամբ Ա. Ա. Ռե-
ֆորմատսկին նշում է, որ դաշտ տերմինը չպետք է հասկանալ
հուղաարտահայտչական, ոճական համատեքստի իմաստով
(61,46):

Հակադրելով տերմինաբանական դաշտը համատեքստին,
Ռեֆորմատսկին գտնում է, որ դրանք պատկանում են տարբեր

կարգերի: Ըստ նրա, առաջինի համար բնորոշ է գոյություն, իսկ երկրորդի համար՝ դործածության ոլորտը (62,121):

Հայտնի է, որ բացի տերմինաբանական դաշտից, այս կամ այն լեզվում գոյություն ունեն նաև բառային-քերականական և իմաստաբանական դաշտեր¹⁴:

Տերմինաբանական դաշտի և բառա-քերականական ու իմաստաբանական դաշտերի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Այս կապակցությամբ մասնագետները նշում են, որ բառային-քերականական դաշտը ընդհանուր իմաստի կրողն է, այն դեպքում, երբ տերմինաբանականը ունի անկախ, սահմանափակ և հաստատուն կերպով արձանագրված իմաստ (այսինքն՝ որոշակի իմաստ): Իմաստաբանական դաշտի մեջ բառերը իմաստային համընկնություններով միավորվում են այս կամ այն խմբերի մեջ, իսկ տերմինաբանականի մեջ դիտական անվանումները համախմբվում են տերմինաբանական միասնությամբ և ամբողջականությամբ:

Համեմատվող դաշտերը միմյանցից տարբերվում են նաև կապերի հարաբերության բնույթի տեսանկյունից: Առաջինի մեջ կապերը հաճախ որոշվում են բառային գործածություններով, այն դեպքում, երբ երկրորդին հատուկ են հասկացությունների միջև եղած հարաբերությունները բնորոշող կապերի տեսանկյունից: Այլ կերպ ասած, տերմինաբանական դաշտն ունի հասկացական բնույթ:

Կառուցվածքի տեսանկյունից այդ երկու կարգի դաշտերը նույնպես տարբերվում են միմյանցից: Իմաստաբանականը տարաշերտ է, իսկ տերմինաբանականը՝ բազմաշերտ, որի մեջ ամեն մի շերտն ունի տվյալ դաշտին բնորոշ հատկանիշ: Հենց այդ հատկանիշով է որոշում տերմինի տեղը գիտության այս կամ այն բնագավառում: Ամեն մի դաշտում միավորված տերմինները դրսևորում են դաշտի համար ինչպես ընդհանուր, այնպես էլ միմյանցից տարբերվող հատկանիշներ:

¹⁴ Դաշտերի տեսությամբ, ինչպես հայտնի է, լեզվաբանները սկսել են զբաղվել վաղուց: Նորհումրոլդականներ Ի. Տրիրը և Լ. Վայսգերրերը փորձում էին բառի իմաստը բխեցնել «հարևան» բառի իմաստից, այսինքն, այն պայմանավորել իմաստաբանական դաշտով: Տրիրը գտնում էր, որ իմաստաբանական դաշտից դուրս բառերի իմաստը որոշելն անհնարին է:

Այսպիսով, Ռեֆորմատիվու «տեղիմիտական դաշտի» տեսությունը ըստ էության համապատասխանում է Դ. Ս. Լոտտեի՝ տեղիմիտականությունը որպես տեղիմիտների ու հասկացությունների համակարգի ըմբռնմանը և դրա հետևողական զարգացումն է:

**Գիտակցված պատճառաբանվածությունը իբրև տեղիմիտ
բնույթ առանձնահատկություն**

Հայտնի է, որ «պատճառաբանվածություն» հասկացությունը մինչև այժմ բնորոշվել է շատ ընդհանուր ձևով և միևնույն ժամանակ տարրեր հիմունքներով: Այս կապակցությամբ Ի. Ն. Տորոպցևը գտնում է, որ պատճառաբանվածության էությունը չի կարելի բացահայտել առանց իսկ հստակ պատկերացում կազմելու այն մասին, թե ի՞նչն է գիտվում որպես պատճառաբանվածություն (խոսքը վերաբերում է պատճառաբանվածության առարկայի յուրահատկությանը) և այն, թե որո՞նք են պատճառաբանվածության միջոցները կամ էլ ո՞րն է պատճառաբանվածության հիմքը (23,147):

Սկզբից ևեթ նշենք, որ միանգամայն տարբեր հարցեր են ա) պատճառաբանված տեղիմիտն նախապատվություն տալը, թե՞ չպատճառաբանվածին և բ) ընդհանուր առմամբ ինչպիսի՞ն է գիտական տեղիմիտի բնույթը¹⁵:

Մասնագետների մի մասը (Դ. Ս. Լոտտե, Մ. Գ. Բերդեր, Կ. Ա. Լեկովսկայա, Վ. Ն. Սեմիչև և ուրիշներ) գտնում է, որ պատճառաբանված տեղիմիտներն ավելի նախընտրելի են, քանի որ դրանք ճիշտ են կողմնորոշում գիտական համապատասխան հասկացության բովանդակությունը (55,55) (17,108): Որոշ հետազոտողներ էլ (Պ. Իվիչ, Ա. Վ. Իսաչենկո և ուրիշներ) չընդունելով տեղիմիտի պատճառաբանվածությունը որպես դրական երեվույթ, իրենց տեսակետը հիմնավորում են այն փաստարկով, ըստ որի «տեղիմիտի իմաստաբանական հստակությունը կարող է ավելի շուտ թերություն լինել, քան՝ առավելություն...» (83,21):

¹⁵ Տեղիմիտի պատճառաբանվածության-չպատճառաբանվածության խնդիրը տեղիմիտակազմության օրինաչափությունների բացահայտման, ինչպես նաև տեղիմիտների կերտման գործում ունի կարևորագույն նշանակություն: Այն առնվում է նաև տեղիմիտների ազգային և միջազգային ձևերի ընտրության, տեղիմիտականության մեջ փոխառությունների հարցի հետ:

Պատճառաբանվածության դրսևորման մասին է խոսում այն հանգամանքը, որ գիտության այս կամ այն բնագավառում տերմինը ըմբռնվում և յուրացվում է իր ներքին ձևի բացահայտմամբ (80,99):

Երբ տերմինի պատճառաբանվածությունը որոշում ենք ներլիզվական գործոններով, անշուշտ, պետք է հաշվի առնենք գիտական լիզվի բառապաշարի հիշյալ միավորի արտահայտության և բովանդակության պլանների առանձնահատկությունները¹⁶:

Բովանդակության պլանում պատճառաբանվածությունը կորոշվի տերմինի ներքին ձևի (բառային իմաստի, որը վեր է հանվում տերմինի բաղադրիչների ձևաբանական և շարահյուսական կապերի հաշվառմամբ) և իր ժամանակակից իմաստի համապատասխանության աստիճանով: Բնականաբար, պատճառաբանված տերմինը պետք է ճիշտ բնորոշի իր հիմքում ընկած հասկացության բովանդակությունը: Բացի այդ պայմաններից, պատճառաբանված տերմինը պետք է որոշակի կերպով ցույց տա գիտական հասկացությունների համակարգում իր հիմքում ընկած հասկացության տեղը:

Արտահայտության պլանում տերմինը կարելի է համարել պատճառաբանված, եթե տվյալ տերմինի ու մյուսների միջև առկա է բառակազմական որոշակի կապ, և տերմինն իր ուրույն տեղն ունի ամբողջ համակարգում:

Լիզվաբանական բազմաթիվ բնագրերի քննությունը մեզ հանգեցրել է այն եզրակացության, որ տերմինները, ի տարբերություն ընդհանուր գործածական բառերի, որպես գիտության որոշակի բնագավառի լիզվական նշաններ, իրենց բնույթով ունեն նաև այլ կարգի պատճառաբանվածություն:

Ինչ գործոններ ու վիաստարկներ կան, որոնք վկայում են գիտական տերմինների՝ ի տարբերություն համագործածական բառերի պատճառաբանվածության առանձնահատկության մասին:

1) Տերմինի՝ որոշակի տեսությանը պատկանելու հանգամանք:

Հայտնի է, որ գիտնականներն ամեն կերպ աշխատում են տերմինները այնպես կերտել, որպեսզի դրանք ըստ հնարավորին համապատասխանեն իրենց տեսություններին, ինչպես նաև

¹⁶ Այս խնդրի մեկնաբանման ժամանակ երբեմն հիմնական ուղադրությունը դարձվում է այդ կողմերից միայն մեկի վրա:

որոշակի հասկացությունների այս կամ այն ըմբռնումներին: Այսինքն, տերմինները տրամաբանորեն հիմնավորված և պատճառաբանված գործածություն են ունենում գիտական լեզվում:

2) Գիտության որոշակի բնագավառում ընդհանուր գործածական բառերի իմաստի մասնագիտացումը:

Գիտական լեզվում համագործածական բառերը, որպես կանոն, հանդես են գալիս ոչ թե իրենց սովորական իմաստով, այլ գործածվելուց առաջ իմաստի մասնագիտացման են ենթարկվում: Այսինքն, լեզվի ընդհանուր գործածական բառերի տերմինացումը (բառի՝ տերմինի դերում հանդես գալու երևույթը) ունի ոչ թե ինքնանպատակ, այլ՝ այս կամ այն աստիճանի պատճառաբանվածության բնույթ:

Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը ևս, որ իմաստի մասնագիտացման են ենթարկվում նաև արմատական բառերը (օրինակ, հիմք, արմատ և այլն), որոնք ընդհանուր գործածական բառապաշարում չունեն ոչ մի կարգի պատճառաբանվածություն: Գիտական լեզվում դրանք նույնպես ստանում են պատճառաբանված գործածություն:

3) Տերմինի իմաստի մեջ հասկացության բնորոշ հատկանիշների արտացոլումը:

Որքան ավելի են տերմինի իմաստի մեջ արտացոլված հասկացության էական հատկանիշները, այնքան ավելի է այս կամ այն տերմինը պատճառաբանված լինում: Բնական է, որ ամենալավ պատճառաբանվածությամբ օժտված կլինեն այն տերմինները, որոնց բնորոշ հատկանիշները կհամապատասխանեն անհրաժեշտ և բավարար հատկանիշներին: Նման դեպքերում տերմինների ճբառային կառուցվածքը ակնհայտորեն ցույց է տալիս համապատասխան հասկացության բովանդակությունը» (68,47—48):

Ելնելով վերոհիշյալ փաստարկներից կարելի է ասել, որ պատճառաբանվածության դրսևորումը գիտական լեզվում և տերմինաբանության մեջ միշտ էլ ունի գիտակցված և տրամաբանորեն հիմնավորված բնույթ: Հանգամանք, որ հիմնականում առկա չէ լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի մեջ:

Հիշյալ առանձնահատկությունը մեզ հիմք է տալիս վերհանելու գիտական տերմինների՝ ի տարբերություն ընդհանուր գործածական բառերի առանձնահատկություններից մեկը:

Չնայած տերմինի սահմանումների միջև եղած տարածայնություններին, այնուամենայնիվ, դրա՝ որպես հատուկ կարգի բառի մի շարք այլ հատկանիշների կամ, ավելի ճիշտ ասած, առաջադրվող պահանջների (տերմինաբանությունը բազմիմաստությունից, հոմանիշությունից, համանունությունից զերծ պահելը և այլն) առանձնացման գործում տարբեր լեզվաբանների և տերմինաբան-մասնագետների տեսակետներն ընդհանուր առմամբ համընկնում են:

Այսպես, ելնելով համատեքստի և տերմինաբանական դաշտի հետևողական հակադրումից, մասնագետները գտնում են, որ տերմինը, իբրև որոշակի համակարգի տարր, ի տարբերություն լեզվի ընդհանուր գործածական բառի, պետք է ոճականորեն չեզոք լինի (61,53): Իսկ եթե այն տերմինաբանական դաշտից դուրս է (հատկապես այն դեպքում, երբ տերմինը գործածվում է գեղարվեստական գրականության մեջ), ապա պարզ է, որ տվյալ դեպքում նման պահանջ չի կարելի առաջադրել: Համակարգից դուրս բառը ապատերմինացվելով, կարող է ոճական չեզոքությունից զրկվել կամ էլ զրկվում է:

Ինչպես հայտնի է, ընդհանուր գործածական բառերին բնորոշ է արտահայտչականությունը (բառի հոգեբանական, հուզական կողմը) և այն անկասկած բնական լեզվի առավելություններից, հարստություններից մեկն է: Իսկ գիտական լեզվի համար, որը մտքի հատուկ բնագավառ է, նման երևույթի առկայությունը, թվում է, որ ոչ միայն ցանկալի չէ, այլև թերություն է: Քանի որ տերմինաբանությունն իրականության բանական ճանաչողության արդյունք է, ուստի այս բնագավառում միանգամայն ավելորդ է որևէ կարգի արտահայտչականություն (հուզականություն). Այսինքն, տվյալ դեպքում կարևորը խոսքի ճշգրտությունն է:

Ճշգրտության հատկանիշի տեսանկյունից պարզ է, որ լեզվի ընդհանուր-գործածական բառի և գիտական տերմինի միջև կա զգալի տարբերություն: Տերմինը ճշգրիտ է, քանի որ այն արձանագրում է գիտության կողմից մշակված հատուկ, որոշակի հասկացություն: Պատահական չէ, որ տերմին (terminus) բառը նշանակում է «սահման», «եզր»: Այսինքն, անվանման մեջ իսկ ընդգծված է ճշգրտության (ինչ-որ բանի սահմանայնության)՝ որպես լեզվական այս կարգի նշանի հատկանիշներից մեկը:

Տերմինի մյուս հատկանիշներից ճշգրտության հետ անմիջականորեն կապված է մենիմաստությունը: Նշված հատկանիշները ըստ էության տարբերվում են միմյանցից:

Քանի որ ճշգրիտ տերմինները բնորոշում են հասկանալի սահմանադատված հասկացություններ, ուստի տվյալ դեպքում հարաբերակցության համար կարևորը ուղակի կողմն է: Իսկ մենիմաստությանը բնորոշ է տերմինով ընդգրկված երևույթների ֆանալիկան կազմի հետ ունեցած կապը:

Այս կապակցությամբ Դ. Ս. Լոտտեն, Ռ. Ա. Բուդաղովը, Ա. Մ. Տերպիգորևը, ինչպես նաև մի շարք այլ մասնագետներ և լեզվաբաններ գտնում են, որ գիտական տերմինը, ի տարբերություն սովորական բառի, պետք է ունենա սահմանափակ, հաստատապես արձանագրված իմաստ (55, 18) (8, 18):

Հայտնի է, որ լեզվի ընդհանուր գործածական բառերի բազմիմաստությունը միանգամայն բնական և անհրաժեշտ երևույթ է: Ընդհանուր գրական լեզվում բառի մի իմաստը սովորաբար չի խանգարում մի ուրիշին, նրա հետ համագոյակցում է: Ընդհանուր գործածական բառի իմաստը կարելի է հասկանալ համատեքստից (8,30): Գիտական տերմինաբանությունն ըստ հնարավորին պետք է զերծ լինի բազմիմաստությունից: Այսինքն, լավ կլինի, որ տերմինը ունենա մեկ իմաստ:

Հասկանալի է, որ տերմինի մենիմաստության պահանջը չպետք է հասցնել ծայրահեղության: Բոլորովին էլ չի պահանջվում, որպեսզի տերմինը մենիմաստ լինի տվյալ լեզվի ամբողջ բառապաշարի սահմաններում: Այսինքն, պարտադիր չէ, որ տերմինը ունենա բացարձակ մենիմաստություն: Մյուս կողմից էլ նպատակահարմար չէ պահանջել, որ տերմինը մենիմաստ լինի գիտության կամ տեխնիկայի մի որևէ նեղ սահմանափակ բնագավառում:

Տերմինաբանության ճշգրտության համար, ինչպես Դ. Ս. Լոտտեն է նշում, բավարար է: որպեսզի տերմինը ունենա հարաբերական մենիմաստության հատկանիշ: Այսինքն, լավ կլինի, որ տերմինի մենիմաստությունը պահպանվի գիտության ու տեխնիկայի տվյալ և հարակից բնագավառների հասկացությունների համակարգի շրջանակում (55,25): Այլ կերպ ասած, տերմինը պետք է մենիմաստ լինի որպես տվյալ տերմինաբանական դաշտի անդամ (61, 52):

Գիտական լեզուն բազմիմաստ տերմիններից բացի հնարավորության սահմաններում պետք է զերծ լինի նաև համանուններից և հոմանիշներից:

Համանունության էությունն այն է, երբ առկա տերմիններից յուրաքանչյուրը բնորոշում է երկու և ավելի հասկացություններ: Այսպես օրինակ, ռուս լեզվաբանական գրականության մեջ, «խոսվածք» և «մակբայ» հասկացությունները բնորոշվում են համանուն տերմիններով (название), ի դեպ, վերջինս հոմանիշային հարաբերության մեջ է գտնվում диалект տերմինի հետ, երբ այն գործածվում է «բարբառ» հասկացության բնորոշման համար:

Համանունները, փաստորեն, բազմիմաստ տերմիններից տարբերվում են այն բանով, որ դրանք ոչ թե մեկ, այլ երկու և ավելի անկախ կառուցված բառեր (կամ բառակապակցություններ) են:

Հոմանիշությունը (նույնանիշությունը)¹⁷ տերմինաբանության հիմնական թերություններից մեկն է: Սա այն երևույթն է, երբ մի որևէ հասկացության բնորոշման համար գործածվում են մի քանի տերմիններ¹⁸:

Հոմանիշ տերմինները աննպատակահարմար են այն առումով, որ դրանք առաջին հերթին ավելորդ անգամ ծանրաբեռնում են հիշողությունը: Մի որևէ գիտական ռուսումնասիրության ժա-

¹⁷ Մասնագիտական գրականության մեջ լայն տարածում են գտել տերմինների համանունությունը, հոմանիշ տերմիններ արտահայտություններ: Թվում է, որ հոմանիշությունը, հոմանիշ անվանումներն այնքան էլ ճիշտ չեն բնորոշում տերմինաբանության մեջ առկա համապատասխան երևույթը: Գիտական լեզվում ավելի շատ առկա է նույնանիշության (կրկնակության, զուգաձևության) երևույթը, քան թե՛ հոմանիշության:

Ի տարբերություն ընդհանուր գործածական բառապաշարի, տերմինաբանության մեջ միևնույն հասկացության բնորոշման համար եղած մի քանի անվանումներն ընդհանուր առմամբ չունեն կամ չեն կարող ունենալ իմաստային նրբերանգներ: Այդ կարգի տերմինները, որպես կանոն, բնորոշում են միևնույն հասկացությունը: Ուստի թվում է, որ համեմատաբար ճիշտ կլինի լեզվական հիշյալ երևույթի բնորոշման համար գործածել տերմինների նույնանիշություն (կրկնակություն կամ զուգաձևություն), իսկ միավորների համար՝ նույնանիշ (կրկնակ կամ զուգաձև) տերմիններ անվանումները: Բայց քանի որ վերոհիշյալ ձևերը ավելի ճանաչում են գտել, ուստի մենք էլ սովորության համաձայն շարադրանքի մեջ կգործածենք դրանք:

¹⁸ Հայերեն տերմինների հոմանիշության քննության մասին տե՛ս 27, 96—110:

մանակ հարկ է լինում ծանոթանալ հասկացությունները բնորոշող մեծ քանակությամբ տերմինների հետ: Այս բոլորը պետք է ոչ միայն հիշել, այլև այնպես յուրացնել տերմինը, որ ամեն անգամ այն կապել որոշակի հասկացության հետ: Պարզ է, որ ավելորդ տերմինները դժվարացնում են ուսուցումը, առաջացնում են տերմինների համակարգայնության, ինչպես նաև տնտեսման սկզբունքի խախտում:

Փաստորեն, տերմինի վերը քննարկված հատկանիշները ինչ-որ չափով նույնանում են առաջադրված պահանջների հետ: Եվ սա բնական է, քանի որ տերմինների կերտումը և ընտրությունը կատարվում է գիտակցորեն, նախապես մշակված պահանջների հիման վրա: Երբ տերմինաբանական համակարգերում ընտրված բառերը իրենց հատկանիշներով համապատասխանում են մշակված պահանջներին, ապա դրանից հետևում է, որ տերմինի նման կարգի հատկանիշները կարելի է նույնացնել առաջադրված պահանջներին (48,145):

**ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՑԻՆ ԵՎ
ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Լեզվաբանության անդրլեզվի բառապաշարի հիմնական
շերտերը**

Ինչպես գիտության ամեն մի բնագավառի, այնպես էլ լեզվաբանության անդրլեզվի բառապաշարի հիմնական (աչքի ընկնող) շերտերից են տերմինաբանությունը և անվանակարգը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր գործառությունը¹⁹: Այսպես օրինակ, լեզվաբանության մեջ տեղ գտած հնչյուն, վանկ, բառ, շարույթ, նախադասություն և նրանցի բարբառ, իրանական լեզվախումբ, հնդեվրոպական լեզվաընտանիք, Կազանի դպրոց և նման կարգի այլ անվանումները նպատակահարմար ենք գտնում առանձնացնել միմյանցից: Անվանումների առաջին կարգը

¹⁹ Տերմինաբանության հարցերով զբաղվողների մի մասը նպատակահարմար չի գտնում գիտական լեզվի մեջ նման շերտերի առանձնացումը: Այսպես օրինակ, Ա. Ի. Մոխսեևը այն տեսակետն է արտահայտել, ըստ որի անվանակարգը և տերմինաբանությունը միմյանցից հստակորեն չի կարելի սահմանազատել (59,132—133):

պատկանում է տերմինաբանությանը, իսկ երկրորդը՝ անվանակարգին:

Գիտական լեզվի բառապաշարի մեջ նման համակարգերի հստակ սահմանադատման, դրանց միջև եղած տարբերությունների վերհանման համար ամենից առաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսի՞ն է հիշյալ շերտերի բառային կազմի բնույթը:

Եվ այսպես, բառային ի՞նչ կարգի միավորները պետք է համարվեն անվանակարգային նշաններ²⁰, Մասնագիտական գրականության մեջ այս հարցը մեկնաբանվել է տարբեր հիմունքներով (42,83) (102,6) (46,74—91),

Անվանակարգի (nomenclature) էության բացահայտման, բնորոշ գծերի առանձնացման գործում հատկապես կարևոր ծառայություններ ունեն Գ. Օ. Վինոկուրր և Ա. Ա. Ռեֆորմատսկին, որոնց տեսակետները լրացնում են միմյանց:

Դեռևս Գ. Օ. Վինոկուրր ժամանակին կարևոր էր համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ չպետք է խառնել տերմինաբանությունը՝ հասկացությունների համակարգը անվանակարգի՝ անվանումների համակարգի հետ (36,4): Անվանակարգը բնորոշելով որպես բացարձակ վերացական ու պայմանական նշանների համակարգ, Գ. Օ. Վինոկուրր գտնում էր, որ նրա «միակ դերն է առարկաները, իրերը նշելու համար տալ գործնական տեսակետից առավելագույն հարմար միջոցներ, առանց տեսական մտքի հետ ուղղակի գործ ունենալու» (36,8): Բայց նա հատուկ անունները չէր ընդգրկում անվանակարգի մեջ: Ա. Ա. Ռեֆորմատսկին հետագայում անդրադառնալով անվանակարգի խնդրին, այն տեսակետն առաջ քաշեց, ըստ որի հատուկ անուններն էլ պետք է համարվեն անվանակարգային նշաններ (61,48):

Հատուկ անունների և անվանակարգային նշանների համար բնորոշ է գործառնությունների ընդհանրությունը: Վերջիններս հնարավոր չէ հատկացնել գիտության այս կամ այն բնագավառի տերմինների շարքը, քանի որ դրանք հանդես չեն գալիս հասկացության բնորոշման դերով:

Հետևելով վերոհիշյալ լեզվաբաններին, ինչպես նաև մի շարք այլ հետազոտողներին, մենք ևս գտնում ենք, որ անվանա-

²⁰ Նկատի ունենալով վերոհիշյալ խնդրի կարևորությունը, այստեղ տեսական մի շարք հարցերի քննությանը անդրադառնում ենք մանրամասն կերպով:

կարգը, ի տարբերություն տերմինաբանության, ուղղակի կերպով չի կապված գիտության տվյալ բնագավառի հասկացությունների հետ (61, 47)²¹։

Տերմինաբանությունը օգտագործում է մարդկային գործունեության բարձրագույն աստիճանի՝ տրամաբանական իմաստավորման արդյունքները, իսկ անվանակարգը բավարարվում է ավելի ցածր կարգի վերացարկման աստիճանով։ Անվանակարգային նշանակումների համար այս կամ այն շահով նշանակություն չունի այն հանգամանքը, թե ինչու տվյալ առարկան անվանված է այսպես և ոչ թե՛ այնպես, այն դեպքում, երբ անվանակոչության հիմունքը տերմինի համար, որին բնորոշ է իմաստավորված ներքին ձև ունենալու միտումը, շատ կարևոր դեր ունի (36,8)։

Տերմինաբանությունն օժտված է տրամաբանական ներքին համակարգով, իսկ անվանակարգի մեջ բացակայում է նման բնույթի համակարգայնությունը։ Վերջինս դրա փոխարեն ունի արտաքին համակարգ։ Այս առանձնահատկությունը կապված է այն հանգամանքի հետ, որ տերմինաբանությունը բնորոշում է փոխկապակցված հասկացություններ (75,77), իսկ անվանակարգի մեջ տրվում է հատուկ օբյեկտների պարզ թվարկումը, առանց փոխադարձ էական կապերի վերհանման։

Լեզվաբանական տերմինների և անվանակարգային նշանների տարբերությունը, թվում է, որ հստակ երևում է գրական լեզու, խոսակցական լեզու, արհեստական լեզու, բնական լեզու, քեֆական լեզու, կցական լեզու, ժողովրդական բարբառ ու ճայոց լեզու, ռուսաց լեզու, էսպերանտո, գերմաներեն, կարեն բարբառ և նման կարգի մի շարք այլ անվանումների հակադրությունից։

Բերված երկու կարգի անվանումները միմյանցից տարբերվում են այն բանով, որ դրանցից առաջինները հանդես են գալիս համապատասխան հասկացությունների (տվյալ դեպքում՝ լեզուների տարբերակների և տիպերի) բնորոշման դերով, իսկ երկ-

21 Ա. Ա. Ռեֆորմատսկու հիշյալ դրույթը չպետք է հասկանալ այն առումով, թե ընդհանրապես ժխտվում է հասկացությունների կապը անվանակարգային նշանների հետ (այս կապակցությամբ տե՛ս Ա. Ի. Մոխեևի մեկնաբանությունը՝ 59, 132)։ Վ. Մ. Օվչարենկոն և Վ. Վ. Կոնդրաշեն իրավացիորեն գտնում են, որ անվանակարգային նշանները տվյալ լեզվական համակարգի տերմինների իմաստի միջոցով են հարաբերակցվում հասկացություններին։

որոգնեցրը պարզապես անվանում (պիտակավորում) են որոշակի օբյեկտները:

Բայց և այնպես, ինչպես Վ. Վ. Կոնդրաշեն է իրավացիորեն գտնում, անվանակարգի շրջանակների լայնացումից և նեղացումից ըստ հնարավորին խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի հստակ կերպով սահմանազատվի տվյալ տերմինաբանությունը այլ տերմինաբանությունից և նրա ներսում եղած տվյալ տերմինահամակարգը մյուս տերմինահամակարգերից (46,87—88):

Լեզվաբանության և գիտության մի շարք այլ բնագավառների տերմինաբանության առանձնահատկությունները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, թե դրանք ի՞նչ կարգի հարաբերության մեջ են գտնվում բնական լեզվի հետ: Այսպես, լեզվաբանության անդրլեզվում մեծ քանակությամբ տեղ են գտել բնական լեզվի տարրերը²²: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակական գիտությունների մեջ բնական լեզուն ունի գործածության լայն ոլորտ: Եվ գիտության քննվող բնագավառում, ինչպես նաև հասարակական մնացած գիտություններում տերմինների իմաստը շատ ավելի մոտ է բնական լեզուների ընդհանուր հասկացական հիմքին, քան թե նեղ մասնագիտական, մաթեմատիկական կամ քիմիական տերմիններին: Փոստորեն, հասարակական գիտությունների տերմինաբանության առանձնահատկությունն այն է, որ այդ բնագավառներում բառագործածության տերմինաբանական և ոչ տերմինաբանական խիստ սահմանը ջնջվում է, այն դեպքում, երբ մաթեմատիկական բնագրերում յուրաքանչյուր բառ գործածվում է իր նեղ տերմինաբանական իմաստով:

Ավելացնենք, որ տերմինաբանության և անվանակարգի հստակ սահմանազատման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև գիտության որոշակի բնագավառների անվանակարգային նշանների առանձնահատուկ բնույթը (էությունը): Ինչպես որ գիտության տարրեր բնագավառների տերմինաբանության միջև գոյություն ունի տարբերություն, այնպես էլ տարբերություն կա

²² Բայց և այնպես լեզվաբանության, մանավանդ նրա ժամանակակից անդրլեզուն զերծ չէ նաև արհեստական տարրերից, նորաբանություններից: Իհարկե, դրանց մեծ մասը փոխառված է գիտության այլ բնագավառների տերմինաբանությունից:

գիտութեան տվյալ բնագավառի անվանակարգի և մյուսների անվանակարգային նշանների միջև Այսպես օրինակ, տեխնիկական գիտութիւնների, ինչպես նաև աշխարհագրութեան, բուսաբանութեան, քիմիայի, բժշկութեան, լեզվաբանութեան անվանակարգային նշանները իրենց ընդհանուր գծերի հետ միասին միմյանցից տարբերվում են՝ յուրաքանչյուրն իր բնորոշ առանձնահատուկ գծերով։ Տարբերութիւնն առաջին հերթին, թվում է, որ պայմանավորված է այն հանգամանքով, թե նշանակման հիմքում ի՞նչ կարգի անուններ են ընկած։ Տեխնիկական գիտութիւնների անվանակարգի կազմի մեջ հիմնականում մտնում են առարկաների, իրերի, մեքենաների տարբեր մասերի անունները։ Քիմիայի անվանակարգի նշանների արտահայտման ամենաբնորոշ ձևը խորհրդանշաններն են։ Այստեղից հարց է ծագում. իսկ այն գիտութիւնները (օրինակ, լեզվաբանութիւնը), որոնք շունեն նյութական առարկաների անվանումներ, մի՞թե չեն օգտվում անվանակարգային նշաններից։ Այս կապակցությամբ Կոնդրաչևը նշում է, որ նման կարգի գիտութիւնները օգտվում են եզակի կամ տեսակալի՞ն ոչ նյութական օբյեկտների անվանումներից» (46,89—90)։ Այսպես, լեզվաբանութեան մեջ լայն տարածում գտած լեզվաընտանիքների, լեզվախմբերի, լեզվաճյուղերի, լեզուների, բարբառների, խոսվածքների, ինչպես նաև լեզվաբանական դպրոցների ու նման բնույթի մի շարք այլ անունները, ըստ էութեան անվանակարգային նշաններ են։ Օրինակ, սեմական լեզվաընտանիք, բանգալա լեզվախումբ, հայկական լեզվաընտանիք, արամեական լեզուներ, վանի բարբառ, Լոռու խոսվածք, Պրագայի լեզվաբանական խմբակ, Կազանի դպրոց և այլն։

Այլ հարց է, թե որոշակի բնագավառներում անվանակարգային նշանները գիտական տվյալ լեզվի բառապաշարի ո՞ր մասն են կազմում։ Օրինակ, լեզվաբանութեան մեջ, ինչպես ուսումնասիրութիւնն է ցույց տալիս, տեսական տերմինները քանակով գերազանցում են անվանակարգային նշաններին։ Ընդհակառակն, բուսաբանութեան, կենդանաբանութեան, աշխարհագրութեան, բժշկութեան գիտական լեզուն համարյա ամբողջությամբ օգտվում է անվանակարգային նշաններից։ Այս երևույթը, ինչպես հայտնի է, պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտական լեզուն մի դեպքում հենվում է վերացական հասկացութիւնների, ընդհանրացված կարգերի, իսկ մյուս դեպքում՝ առարկայական տարբեր օբյեկտների վրա։

Ի դեպ, լեզվաբանական բոլոր կարգի անվանումներին բնորոշ է վերացական բնույթը: Հատկանշական գիծ, որ գիտության հիշյալ բնագավառի տերմինահամակարգը ամբողջությամբ տարբերվում է գիտության, ինչպես նաև տեխնիկայի ու արտադրական գործունեության մի շարք այլ բնագավառների տերմինահամակարգերից, որոնց ավելի բնորոշ է առարկայական բնույթը:

Լեզվաբանական տերմինաբանության վերացականությունը, անշուշտ, պայմանավորված է գիտության հիշյալ բնագավառի առանձնահատկությամբ, ինչպես նաև տերմինացվող հասկացությունների բնույթով: Չնայած որ գիտության այս բնագավառի ուսումնասիրության առարկան լեզվական որոշակի նյութն է, բայց նման հանգամանքը չի խանգարում, որ ուսումնասիրողները կոնկրետից մեծ ընդհանրացումներ կատարեն: Բարձր աստիճանի վերացարկությունները, փաստորեն, հանգեցնում են համապատասխան բնույթի հասկացությունների, հետևապես, վերջիններս բնորոշող տերմինների առաջացմանը:

Անվանակարգը տերմինաբանությունից սահմանազատելու առաջարկից, պարզ է, որ բոլորովին չպետք է հանգել այն եզրակացության, թե իբր գիտական լեզվի բառապաշարի այդ երկու շերտերը կտրականապես անջատում ենք միմյանցից: Տվյալ դեպքում ամենևին էլ չի ժխտվում տերմինների և անվանակարգային նշանների միջև գոյություն ունեցող իրական կապերի փաստը:

Գիտության ցանկացած բնագավառի անվանակարգի և տերմինաբանության քննությունը ցույց է տալիս, որ դրանց կազմի մեջ կարող են հանդես գալ միևնույն բառերը: Գիտական լեզվի բառապաշարի հիշյալ շերտերի կապը միակողմանի է: Անվանակարգային նշանները չեն կարող մտնել տվյալ գիտության տերմինաբանության մեջ, այն դեպքում, երբ տերմինները կարող են մտնել անվանակարգի կազմի մեջ (46): Այսպես օրինակ, լեզու, լեզվաբանություն, լեզվախումբ, լեզվանյութ, բարբառ, խոսվածք և շատ ուրիշ լեզվաբանական տերմիններ հանդես են գալիս ամերիկյան (հնդկացիական) լեզուներ, հաբավ-կովկասյան լեզվաբանություն, բրիտանական լեզվախումբ, կելտական լեզվաճյուղ, Մեղրու բարբառ, Կանադայի խոսվածք և մի շարք այլ անվանակարգային նշանների մեջ: Թվում է, որ տերմինները անվանակարգային բառակապակցությունների մեջ հանդես են գալիս անվանակարգային նշանի դերով:

Լեզվաբանական տերմինաբանությունն ունի բազմաշերտ կառուցվածք: Տերմինաբանության նման բնույթը հնարավորություն է տալիս այն բաժանել մի շարք ենթահամակարգերի:

Այսպես, առարկայա-թեմատիկ սկզբունքով լեզվաբանական տերմինաբանության մեջ կարելի է առանձնացնել հնչյունաբանական (ինչպես նաև հնչույթաբանական), բառագիտական, ձևաբանական, շարահյուսական, ոճաբանական տերմինների ենթահամակարգեր: Ենթահամակարգերից յուրաքանչյուրը միավորում է տերմինների այնպիսի խումբ, որոնք գլխավորապես հանդիպում են որոշակի դաշտերում:

Այսինքն, տերմինաբանական դաշտը կազմված է լեզվաբանության տարբեր բնագավառների (բաժինների) տերմինաբանությունից:

Լեզվաբանական տերմինաբանությունն ամբողջությամբ մակրոդաշտ է, որը բովանդակում է բազմաթիվ միկրոդաշտեր: Ըստ որում այս կամ այն միկրոդաշտը մի այլ միկրոդաշտի նկատմամբ հանդես է գալիս որպես մակրոդաշտ: Այսպես օրինակ, հոլովական տերմինաբանությունը ձևաբանականի մի միկրոդաշտն է (սովյալ դեպքում վերջինս առաջինի նկատմամբ հանդես է գալիս որպես մակրոդաշտ): Ձևաբանականն իր հերթին քերականական տերմինաբանության միկրոդաշտն է: Վերջինս, որ մի առանձին մակրոդաշտ է, իր հերթին լեզվաբանական ամբողջ տերմինաբանության մի շարք միկրոդաշտերից մեկն է:

Պարզ է, որ լեզվաբանական տերմինաբանության մեջ էլ ամեն մի ենթահամակարգ իր հերթին կարող է բաժանվել մի շարք այլ ենթահամակարգերի: Եվ այսպես, ստորակարգության սկզբունքով տերմինների յուրաքանչյուր ենթահամակարգի մեջ առանձնանում են մի շարք խմբեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ միավորվում են որոշակի քանակությամբ տերմիններ: Այսպես օրինակ, հնչյունաբանական տերմինաբանության կազմի մեջ մտնում են հնչյունախոսության, հնչույթաբանության և պատմական հնչյունաբանության բնագավառներին պատկանող տերմինների համակարգերը²³: Հնչյունախոսության տերմինների հա-

²³ Հայերեն հնչյունաբանական տերմինների համակարգային վերլուծության մասին մանրամասն տե՛ս մեր «Հնչյունաբանական տերմինաբանությունը սովետահայ լեզվաբանության մեջ» հոդվածը, ԼՀԳ, 1972, № 11, էջ 31—40:

մակարդի ենթահամակարգերն են՝ հնչյունների տարատեսակները բնորոշող տերմիններ (սա էլ իր հերթին ունի բազմաշերտ կառուցվածք), արտահայտության պլանի միավորները բնորոշող տերմիններ, վերհատության միավորները բնորոշող տերմիններ և այլն: Նմանատիպ կառուցվածք ունեն նաև հնչյութաբանության բնագավառին պատկանող տերմինների համակարգերը:

Փաստորեն, գիտության քննվող բնագավառի տերմիններն էլ ոչ թե մեկուսացված են, այլ մնացած տերմինների հետ միասին հանդես են գալիս փոխկապակցված ձևով: Տերմինների այդ փոխկապակցվածությունը հասկացական, ինչպես նաև կառուցվածքային հարաբերություններն արտացոլող մի կայուն և կուռ համակարգ է:

Սակայն ինչպես որ համակարգայնության տարբեր աստիճանով են օժտված ընդհանուր դրական լեզվի և տերմինաբանական բառապաշարը, այնպես էլ համակարգայնության նույն աստիճանը չունեն գիտության տարբեր բնագավառների տերմինները: Ճշգրիտ գիտությունների և հասարակական գիտությունների տերմինաբանության ամենապարզ համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ առաջինների տերմիններն ավելի բարձր աստիճանի համակարգվածություն ունեն, քան երկրորդներինը:

Լեզվաբանական տերմինաբանության առարկայական-թեմատիկ բաժանումը, փաստորեն, արտացոլում է նաև լեզվաբանության՝ որպես գիտության որոշակի բնագավառի արտաքին կառուցվածքը: Ինչպես ամեն մի դասակարգում, այնպես էլ առարկայականը գերծ չէ թերություններից:

Նախ որ, թեմատիկ բաժանման դեպքում շատ դժվար է (երբեմն էլ անհնարին է) ընդհանուր համակարգում որոշել ժամանակակից լեզվաբանության տերմինների մի զգալի մասի տեղը: Բացի այդ, նման հիմունքով առանձնացված ենթահամակարգերի մեջ հնարավոր չէ ընդգրկել այն տերմինները, որոնք լեզվաբանության համար ունեն ընդհանուր բնույթ:

Հայտնի է, որ գիտության այս կամ այն բնագավառի հասկացությունների համակարգը բնորոշող տերմինները իրենց կազմով միասեռ չեն: Տվյալ գիտակարգի առանձին բնագավառներին և տեսություններին սլատկանող տերմինների հետ միասին գոյություն ունեն նաև այնպիսի տերմիններ, որոնք ընդհանուր են այդ գիտակարգի բոլոր ճյուղերի և տեսությունների համար, քանի որ դրանց հիմքում ընկած հասկացություններն արտացոլում

են նրա առարկայի ոչ թե մասնավոր կողմերը, այլ՝ ընդհանուր օրինաչափությունները: Այս կարգի տերմինների մեջ էլ մի առանձին խումբ են կազմում այսպես կոչված հիմնական կամ «միջուկային» հասկացությունները բնորոշող տերմինները: Նման կարգի հասկացությունները (ինչպես օրինակ, լեզու, խոսք և այլն) արտացոլում են հետազոտվող առարկայի ամենաընդհանուր օրինաչափությունները և, բնականաբար, հարաբերակցվում են տվյալ գիտակարգի բոլոր բնագավառների, ինչպես նաև տեսությունների հետ (СПИТТ, 10):

Հաշվի առնելով հիշյալ հանգամանքները, գտնում ենք, որ այս կարգի տերմինները հնարավոր չէ հատկացնել վերը առանձնացված ենթահամակարգերից որևէ մեկին: Ուստի դրանց ամբողջությունը լեզվաբանական տերմինաբանության մեջ կարելի է դիտել որպես մի առանձին և ուրույն համակարգ:

Լեզվաբանական տերմինաբանության շերտերը և ենթաճամակարգերը

Ջարգացման բավական երկար ուղի ունեցող գիտության ցանկացած բնագավառի տերմինաբանությունն իր կազմով չի կարող միատարր լինել: Ժամանակի ընթացքում նրա մեջ առանձնում են տարբեր շերտավորումներ: Այդ իսկ պատճառով հետզհետե ավելի է դժվարանում ամբողջ գիտության մասշտաբով համակարգային տերմինաբանություն ստեղծելու գործը (ПЯНТ, 82):

Այս առումով հետաքրքիր է պարզել, թե ներկայումս գիտության քննվող բնագավառի տերմինաբանությունը հիմնականում ի՞նչ կարգի շերտեր ունի և համապատասխանաբար ի՞նչ առանձնահատկություններով են օժտված դրանք: Այսինքն, տրվյալ դեպքում կարևոր է այն հարցը, թե ի՞նչ պատկեր ունի լեզվաբանական տերմինաբանության համակարգն իր ամբողջության մեջ:

Նման հարցերին քիչ թե շատ բավարար լուծում տալու համար, թվում է, որ պետք է հաշվի առնել ինչպե՛ս արտալեզվական, այնպե՛ս էլ լեզվական մի շարք գործոններ: Այսպես, կարևոր է այն հանգամանքը, թե լեզվաբանությունը, որպես գիտության առանձին բնագավառ, իր ձևավորման շրջանից սկսած զարգացման ի՞նչ հիմնական փուլեր է անցել և այս կամ այն փուլում ի՞նչ ա-

առանձնահատկությամբ է օժտված եղել, ինչպես նաև ի՞նչ հարաբերության մեջ է եղել գիտության մյուս բնագավառների հետ: Բացի այդ, տվյալ դեպքում հարկավոր է պարզել նաև եղած տերմինների բնույթը՝ ըստ ծագման, մասնագիտացման աստիճանի, տարածվածության, կողմնորոշության և նման կարգի մի շարք այլ հատկանիշների:

Եվ այսպես, լեզվաբանական տերմինաբանության մեջ վերոհիշյալ հիմունքներով փորձենք առանձնացնել մի շարք ընդհանուր և մասնավոր շերտեր:

* * *

Ըստ ժամանակի գործոնի լեզվաբանական տերմինաբանության մեջ առանձնանում են տերմինների ավանդական և ժամանակակից շերտեր:

Ի դեպ, սրանք լեզվաբանական տերմինաբանության ընդհանուր շերտերն են, որոնցից յուրաքանչյուրը իր մեջ բովանդակում է մի շարք մասնավոր այլ շերտեր:

Ավանդական տերմինները գիտության տվյալ բնագավառի տերմինաբանության ամենահին շերտն են: Դրանք մեծ դեր են խաղում նրա հետագա զարգացման գործում:

Հայտնի է, որ հազարամյակների ընթացքում յուրաքանչյուր դարաշրջան իր ներդրումն է կատարել լեզվաբանական տերմինաբանության ստեղծման գործում: Այդ տերմինների մի մասը ներկայումս էլ գործածվում է լեզվաբանության ժամանակակից անդրլեզվում: Այսպես օրինակ, անուն, ածական, դերանուն, սեռ, հոլով, ուղղական, հայցական, բայ, խոնարհում, սահմանական, հոսմայական, ըղձական, դեմք, ապառնի, անցյալ, ներկա, լծորդություն, մակբայ, շաղկապ, ենթակա, ստորոգյալ և այլն:

Ավանդական տերմինների գերակշռող մասը, փաստորեն, պատկանում է քերականագիտության բնագավառին: Վերջինիս՝ ի տարբերություն այլ գիտությունների տերմինաբանության՝ առանձնահատկությունն այն է, որ նա վերաբերում է լեզվի բառային կազմի առավել կայուն, քիչ փոփոխվող բնագավառին, որովհետև այդ տերմինաբանությունը կապված է լեզվի քերականական կառուցվածքի հետ, որը փոխվում է չափազանց դանդաղ և ծանայում է հասարակությանը մի քանի դարաշրջանների ընթացքում» (76,114):

Պրոֆ. Գ. Սևակը գտնում է, որ տերմինաբանության հարցում հղած նման ավանդականությունը պայմանավորված է նաև այդ իսկ գիտակարգի՝ քերականության առանձնահատուկ բնույթով²⁴, թե՛ որ «...քերականությունը, իբրև խոսքի կառուցվածքի իրականություններն ուսումնասիրող գիտություն, միջլեզվային գիտություն է, և եթե մի լեզվի քերականությունը զգալի փոփոխությունների ենթարկվի, նույնիսկ միայն տերմինների սահմաններում, դրանով մեծ ճեղքվածք կստեղծվի տվյալ լեզվից այլ լեզուների ուսումնասիրությանը անցնելու գործում» (77,190):

Այսպես, ուրեմն լեզվաբանական տերմինաբանության համար ընդհանուր առմամբ բնորոշն այն է, որ համապատասխան հասկացությունների զարգացումը չի հանգեցնում այն բանին, որ ավանդական տերմինը փոխարինվի նորով: Լեզվաբանական տերմինների նման առանձնահատուկությունը ըստ երևույթին կապված է այն հանգամանքի հետ, որ հին անվանումը մեծ մասամբ չի հակասում հասկացության նոր կողմերին (իհարկե, տվյալ դեպքում բոլորովին էլ չի ժխտվում այն փաստը, որ հիշյալ բնագավառի տերմինաբանության մեջ կան նաև նոր ըմբռնմանը հակասող անվանումներ), այլ նրա հետ համագոյակցում է:

Ավանդական տերմինները, համապատասխան հասկացությունների բովանդակության զարգացման պատճառով, կորցրել են իրենց երբեմնի պատճառաբանվածության հատկանիշը և ներկայումս վերածվել են սոսկ պայմանական անվանումների: Որպես օրինակ կարող ենք բերել լեզվաբանության մեջ արմատացած հոլովների ավանդական անվանումները: Քանի որ սրանց բնորոշման հիմքում ընդգրկված են ոչ թե հոլովների արտահայտած բազմաթիվ հարաբերությունները, այլ՝ դրանից միայն մեկը, այդ իսկ պատճառով այդ տերմինների և հոլովների արդի ըմբռնումների միջև չկա համապատասխանություն:

Սակայն ավանդական տերմինների (օրինակ՝ ֆեռականություն, նախադասություն, դեֆինիցիոն և այլն) պատճառաբանվածության կամ չպատճառաբանվածության մասին խոսելիս, թվում է, որ չպետք է միայն ելնել դրանց հիմքում ընկած հասկացու-

²⁴ Ավանդականությանը տուրք տալու պատճառով, լեզվաբանները տերմինաբորժածության հարցում երբեմն ցուցաբերել են ծայրահեղ պահպանողականություն: Այսպես, հայտնի է, որ զրաբարի քերականական տերմինաբանությունը երկար ժամանակ պահպանվել և գործածվում էր աշխարհաբարի համապատասխան իրողությունների և երևույթների բնորոշման համար:

թյունների ներկայիս ըմբռնումից և ժամանակակից լեզվի տեսանկյունից: Առավել ևս սխալ կլինի հիմնվել միայն բառի ոչ տերմինաբանական նշանակության վրա, քանի որ այս դեպքում ամենաշատը հնարավոր է պարզել քերականական հասկացության մի ինչ-որ կողմը, այն էլ ոչ էականը: Ուստի այս կարգի տերմինների գնահատման ժամանակ նպատակահարմար է հաշվի առնել այն հանգամանքը, թե այս կամ այն տերմինը ե՞րբ է ստեղծվել և համապատասխանաբար ի՞նչ կերպ է ըմբռնվել դրա հիմքում ընկած հասկացությունն այդ ժամանակաշրջանում:

Ելնելով այս սկզբունքից, կարելի է ասել, որ ներկայումս մեզ համար չպատճառաբանված ավանդական տերմինները նախապես (առաջին անգամ երևան գալու ժամանակ) գոնե ունեցել են այս կամ այն աստիճանի պատճառաբանվածություն, քանի որ դրանք, անկասկած, արտացոլել են լեզվական իրողությունների և երևույթների՝ տվյալ ժամանակի ըմբռնումները:

Նախապես պատճառաբանված տերմիններից է, օրինակ դեռանունը, որը կազմված է «դեռ» և «անուն» բաղադրիչներից: Այսինքն, այն նշանակել է «անվան դեր կատարող», «անվան փոխարեն գործածվող»: Ասել, թե նախապես այս տերմինը լրիվ պայմանական է եղել, պատճառաբանվածություն չի ունեցել, սխալ կլինի: Փաստորեն, այն իր մեջ արտացոլում է գերանվան՝ որպես խոսքի մասի նախնական ըմբռնումը, ըստ որի դերանունը դրվում է անվան փոխարեն: Այլ բան է, որ այդ տերմինի այժմյան ըմբռնումը լիակատար չափով չի համապատասխանում այն նշանակությանը, որ նա իրապես ունի քերականության մեջ:

Ելնելով ավանդական տերմինների այժմյան բնույթից (չպատճառաբանվածությունից և պայմանականությունից), մի՞թե կարելի է ասել, որ դրանք բոլորն էլ պետք է փոխարինվեն նոր անվանումներով: Պարզ է, որ տերմինաբանության մեջ միանգամայն աննպատակահարմար է նման տիպի հեղաշրջում կատարելը: Փորձը բազմիցս ցույց է տվել, թե որքան դժվար է ընդհանուր ճանաչում և լայն տարածում գտած տերմինները գործածությունից հանելը: Այսպես օրինակ, հանրահայտ ճշմարտություն է այն, որ գործածության այնքան լայն տարածում ունեցող մի տերմին, որպիսին եներակա-ն է, ներկայումս չի համապատասխանում նախադասության մեջ գործողություն կատարող առարկայի մասին մեր ունեցած պատկերացմանը: Բայց և այնպես այս հանգաման-

քը բոլորովին էլ չի խոսում այն մասին, որ այդ անվանումը պետք է փոխարինել մի այլ՝ նոր տերմինով: Այս կապակցությամբ Դ. Ս. Լոտտեն գտնում է, որ մշտապես պետք է հաշվի առնել այս կամ այն տերմինի «ներդրման» (արմատացման) աստիճանը (55, 35):

Տվյալ դեպքում կարևորը ոչ թե ավանդական տերմինների մերժումն է, այլ այն բովանդակությունը, որը պետք է դրված լինի այդ տերմինների մեջ: Այսինքն, կարևորը միշտ էլ տվյալ տերմինի միջոցով դրսևորվող հասկացության ճշգրտության պահպանումն է:

Այստեղ, բնականաբար, բոլորովին էլ չի ժխտվում տերմինաբանության մեջ որևէ կարգի նորարարության փորձ անելու առաջարկը: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի խոսել գիտական լեզվի զարգացման և առաջընթացի մասին: Նորարարության դեպքում, ինչպես Դ. Ս. Լոտտեն է նշում, անհրաժեշտ է հաշվի առնել գոյություն ունեցող այս կամ այն տերմինի վնասակարության աստիճանը և այն փոխարինել այնպիսի անվանումով, որն ակնառու գերազանցություն ունենա հնի նկատմամբ (55, 35):

* * *

Ասվեց, որ ներկայումս լեզվաբանության մեջ մի առանձին շերտ է կազմում ժամանակակից տերմինաբանությունը:

Ժամանակակից (հատկապես վերջին տասնամյակների) լեզվաբանական տերմինաբանության առանձնահատկություններն, անշուշտ, պայմանավորված են լեզվաբանության առարկայի՝ լեզվի ուսումնասիրության հայեցակետով, հնչյթաբանության բնագավառում ձեռք բերված հաջողություններով, լեզվաբանության մեջ մաթեմատիկական մեթոդների դորժադրմամբ, լեզվաբանական տարբեր դպրոցների և ուղղությունների նոր հասկացությունների ձևավորմամբ՝ և մի շարք այլ գործոններով:

Սակայն լեզվաբանական տերմինաբանության մեջ արմատական փոփոխությունը սկսվել է ավելի շուտ՝ դարիս 20-ական թվականներից, Ֆ. դե Սոսյուրի հայտնի աշխատության («Course de la linguistique générale») լույս տեսնելուց հետո: Այդ ժամանակվանից տարրեր լեզուների քերականությունների մեջ լեզվաբանական նախկին տեսությունները վերանայելու միտում է նրկատվում:

Ներկա ժամանակաշրջանում էլ մեզանում մեծ աշխատանքներ են տարվում արտասահմանյան գիտնականների՝ լեզվաբանական նոր միտումներ ներկայացնող աշխատությունների թարգմանության ու քննադատական յուրացման ուղղությամբ (79,167)։

Լեզվաբանության զարգացման նման բնույթը հանգեցրել է նոր տերմինաբանության մեջ մի շարք բնորոշ առանձնահատկությունների գրսեորման։ Դասական լեզվաբանության տերմինների հետ համեմատած այն ամբողջությամբ հանդես է գալիս որպես որոշակի տեսության հասկացությունների համակարգ։ Այսպես օրինակ՝ բաշխում, տարբերակ, նշան, անփոփոխակ, հատույթավորում, անմիջական բաղադրիչներ, աստիճանական հակադրություն, երկանդամություն, միաձուլություն և այլն։

Ժամանակակից տերմինների գերակշռող մասը իրենց բնույթով չափազանց վերացական և ընդհանուր տեսական է։ Դրանց մեջ կան այնպիսի տերմիններ (օրինակ՝ համակարգ, կառուցվածք և այլն), որոնք հնարավոր չէ հատկացնել միայն լեզվաբանությանը, քանի որ վերջիններս բնորոշում են ընդհանուր գիտական հասկացություններ։ Բացի այդ, լեզվաբանության ժամանակակից անդրլեզվում զգալի քանակ են կազմում գիտության այլ բնագավառներից փոխառված տերմինները։

Սերտորեն կապված լինելով նոր տեսությունների և կոնցեպցիաների հետ, ժամանակակից լեզվաբանական տերմինաբանությունը դեռևս գտնվում է ձևավորման գործընթացի մեջ։

Քանի որ ներկա ժամանակաշրջանում լեզվաբանության մեջ տեղ են գտել այնպիսի բազմաթիվ նոր հասկացություններ, որոնք չեն կարող համապատասխանել հին տերմինաբանությանը, ուստի և անհրաժեշտություն է առաջանում դրանք բնորոշել համապատասխան անվանումներով։ Եվ տերմինաբանական նոր համակարգերը գալիս են փոխարինելու հներին կամ էլ վերջիններիս հետ համագոյակցելու։

Բայց տերմինաբանության փոփոխման և համալրման նման գործընթացը հարթ ճանապարհով չի ընթանում, քանի որ ժամանակակից լեզվաբանության մեջ գոյություն ունեցող տեսությունների և դպրոցների միջև լեզվաբանական հիմնական խնդիրների որոշման հարցում անդամ առկա են խոր տարաձայնություններ։ Այսինքն, ներկա ժամանակաշրջանում լեզվաբանական տերմինաբանության վիճակն այնպիսին է, որ մի կողմից լեզվաբանության զարգացումը յղահանջում է հատուկ տերմինաբանություն,

բայց մյուս կողմից միշտ չէ, որ այդ տերմինաբանությունը հասանելի ու հասկանալի է, քանի որ տվյալ դեպքում բացակայում է ըմբռնման միասնությունը: Փաստորեն, ժամանակակից լեզվաբանական տերմինաբանությանը բնորոշ է բուռն և հակասող զարգացումը:

Հայտնի է, որ գիտության քննվող բնագավառի ժամանակակից անդրլեզվի նշանակալի ծավալը և օրգանական մասը կազմում է կառուցվածքային լեզվաբանության տերմինաբանությունը:

Կառուցվածքային լեզվաբանության հիմնական ուղղությունները (տվյալ դեպքում անտեսվում են անգամ ժամանակակից լեզվաբանության մեջ առկա բազմաթիվ տեսությունները) յուրովի են վերանայում և իմաստավորում լեզվաբանական հիմնական զաւակացությունները և դրանք բնորոշող տերմինները:

Ընդհանուր ճանաչում գտած լեզվաբանական համակարգերը փոխարինվում են մի շարք մասնավոր ենթահամակարգերով, անհատական կազմություններով: Այդ է պատճառը, որ ժամանակակից լեզվաբանության մեջ տերմինաբանական նոր անվանումները զգալի քանակ են կազմում: Այսինքն, ժամանակակից լեզվաբանական տերմինաբանությանը բնորոշ է նաև այլատարրության երևույթը, բազմաքանակ տերմինների առկայությունը:

Լեզվաբանական նոր տերմինաբանությունը որոշ մասնագետների կողմից երբեմն ստեղծվում է կամայականորեն, որի պատճառով էլ նոր տերմինների զգալի մասը պատահական բնույթ է կրում: Փաստորեն, վերջին ժամանակներս ստեղծված բազմաթիվ անվանումներ դեռևս տերմիններ չեն: Դրանք ավելի շուտ տերմինաբանական անվանումներ են, քանի որ վերջիններս չունեն գործածության մեջ կայուն լինելու հատկանիշը, որը կարևոր է տերմինների՝ որպես հատուկ կարգի անվանումների համար: Նման կարգի տերմինները նախքան լեզվաբանական տերմինաբանական ընդհանուր համակարգում տեղ գտնելը և ամրապնդվելը, պարզ է, որ գործնականում պետք է ենթարկվեն երկարատև ստուգման:

Բնականաբար, գիտության լեզվի նման վիճակը անգամ մասնագետների շրջանում փոխըմբռնման դժվարություն առաջացնելուց բացի, բացասաբար կարող է անդրադառնալ լեզվաբանության հետագա առաջընթացի վրա:

Անդրլեզվի նման վիճակը գիտնականների առջև մի շարք հրատապ խնդիրներ է դնում՝ այդ կարգի նոր տերմինները որքանով կարող են հարստացնել լեզվաբանությունը, դրանց իրական բովանդակությունը որքանով է արդյունավետ և օգտակար: Սակայն, ինչպես Օ. Ս. Ախմանովան է մի առիթով նշել, տերմինաբանական կարգավորված աշխատանքի բացակայության պատճառով այս բոլոր հարցերը դեռևս մնում են չբացահայտված (79, 167):

Պարզ է, որ ժամանակակից տերմինաբանությունը որոշ թերությունների հետ միասին ունի նաև շատ առավելություններ: Այսպես, ներկայումս լեզվաբանության շրջանակների լայնացման հետ մեկտեղ, հետզհետե ավելի են ճշգրտվում և իմաստավորվում եղած հասկացությունները:

Քանի որ ժամանակակից տերմինաբանության ստեղծման պրոցեսում առավել ակնառու է արհեստականության գործոնը, ուստի այժմ ավելի շատ հնարավորություն կա տերմինները գիտակցված և տրամաբանական ձևով, ինչպես նաև պատճառաբանված տեսքով (ներքին ձևի միասնության պահպանմամբ) ներկայացնելու համար: Բացի այդ, ժամանակակից տերմինաբանության մեջ ավելի հեշտ է պահպանել համակարգայնությունը թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պլաններում:

* * *

Ավանդական և ժամանակակից տերմինաբանության քննությունը ցույց է տալիս, որ դրանցից երկուսում էլ կարելի է առանձնացնել տերմինաբանական մի շարք մասնավոր շերտեր:

Լեզվաբանական տերմինաբանության մեջ եղած բառային միավորները նախ քննենք ըստ տարածվածության և տերմինացման աստիճանի:

Գիտության այս կամ այն բնագավառի անդրլեզվում, ինչպես հայտնի է, գործածվում են տերմինացման տարբեր աստիճան ունեցող լեզվական նշաններ²⁵: Այսպես, լեզվաբանության մեջ ընդ-

25 Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այս կամ այն լեզվի, գիտության որոշակի ճյուղի հասկացությունների և համապատասխանարար դրանք բնորոշող լեզվական նշանների տերմինացման գործընթացի ուսումնասիրությունը (այսինքն, հասկացություն-բառ-տերմին անցումը):

հանուր ճանաչում գտած տերմինների կողքին գործածվում են առանձին դպրոցների, ուղղությունների, դրանց ներկայացուցիչների ու հետևորդների այսպես կոչված «աշխատանքային», անհատական տերմիններ: Դրանց մի մասը տարածում չի գտել անգամ համապատասխան ուղղությունների և դպրոցների ներկայացուցիչների ու դրանց հետևորդների շրջանում (79, 168):

Տերմինագործածության նման պատկերը նկատվում է նաև վերջին տասնամյակի հայ լեզվաբանական գրականության մեջ: Այս երևույթի՝ մեզանում տարածում գտնելու պատճառը պրոֆ. էդ. Աղայանը հետևյալ կերպ է բացատրում. «Թեև մենք աշխատել ենք խուսափել դրանից (տերմինացման տարբեր աստիճանի միավորների գործածությունից—Լ. Ղ.), բայց և այնպես հարկադրված ենք եղել դարձյալ բազմաթիվ նոր տերմիններ կերտել՝ գտնել ընդհանուր ճանաչում գտած միջազգային տերմիններին համապատասխան: Սա մեր մեղքը չէ, այլ հետևանքը այն բանի, որ մեզ մոտ այս կարգի ուսումնասիրություններ չեն կատարվել հայերեն լեզվով, ուստի մինչև այժմ այդ միջազգային տերմինների համար համապատասխան հայերեն բառեր չեն ստեղծվել» (էԱ ԺՀՀԽ, 9):

Անհատական, գիտության տվյալ բնագավառում դեռևս տարածում չստացած տերմինները, պարզ է, որ բոլոր դեպքերում նպատակահարմար է հստակորեն սահմանազատել այն տերմիններից, որոնք հիմնականն են, կենսունակ են և հետևաբար ունեն ընդհանուր ճանաչում:

Սակայն որոշ լեզվաբաններ անհատական տերմինագործածության գոյությունն արդարացնելով, անգամ համաձայնում են այն բանում, որ սկսում են ժխտել միակ և ընդհանուր ճանաչում գտած տերմինաբանության առկայության անհրաժեշտությունը: Այսպես, Լ. Ելմսլեր այն կարծիքն է հայտնել, ըստ որի տերմինաբանությունը ճաշակի հարց է, այն կապ չունի իրավությունների հետ (104, 16):

Պարզ է, որ նման ազատությունը գիտական լեզվի համար անթույլատրելի է: Եվ եթե գիտության այս կամ այն բնագավառում կան խիստ անհատական կամ ըստ ճաշակի կերտված տերմիններ, ապա թվում է, որ նման դեպքերում բառի տերմինայնության աստիճանը հիմնականում պետք է որոշել այն կարևոր հանգամանքով, թե որքանով այս կամ այն տերմինը իր հաստատուն և որոշակի տեղն ունի գիտության տվյալ ճյուղի մյուս

տերմինների շրջանում (արդյոք տվյալ տեղը չի՞ զբաղեցրած մի այլ տերմինի կողմից), այսինքն տերմինաբանական համակարգում:

* * *

Գիտական լեզվում տեղ գտած բառային տարբեր միավորների տերմինաբանության աստիճանը, ինչպես նաև դրանց լայն տարածում և ընդհանուր ճանաչում գտնելը, թվում է, որ շատ բանով պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով են դրանք տվյալ բնագավառում ստացել նեղ (որոշակի) մասնագիտացում:

Ինչպես գիտության ամեն մի բնագավառում, այնպես էլ լեզվաբանության մեջ գործածվող ոչ բոլոր տերմինների ունեն մասնագիտացման նույն աստիճանը:

Լեզվաբանության ժամանակակից անդրլեզվում բուն լեզվաբանական տերմինների կողքին տեղ են գտել նաև այնպիսի անվանումներ (ի դեպ, սրանք քիչ չեն), որոնց լեզվաբանական բնույթը առայժմ շատ դժվար է որոշել: Այսպես օրինակ, ստորակարգություն, ճակադրություն, տարբերիչ ճատկանիչ, տարբերակ և նման կարգի այլ տերմիններ, որոնք փոխառված են գիտության մի շարք բնագավառներից, ներկայումս պե՞տք է դասել լեզվաբանականի շարքը, թե՞ ոչ: Փաստորեն, տվյալ դեպքում սրանց և լեզվաբանական մյուս տերմինների միջև այն հըստակ սահմանադատումը չկա, ինչ որ ընդհանուր ճանաչում գտած տերմինների և ոչ տերմինների միջև: Հստակ սահմանադատումը պահպանելու համար այս կարգի անվանումները առայժմ չենք դասում բուն լեզվաբանական տերմինների շարքը: Նման մոտեցման ժամանակ հաշվի ենք առնում ըստ մեզ կարևոր նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները՝ լեզվաբանական տերմինի և ոչ տերմինի առանձնացման չափանիշը, փոխառված տերմինների արմատացման աստիճանը, ինչպես նաև դրանց՝ լեզվաբանական տերմինաբանության համակարգում ունեցած տեղի բնույթը:

Եթե որոշ կարգի փոխառյալ տերմինների, օրինակ՝ ենթակա, ստորոգյալ, առնմանություն, տարնմանություն, խաչավորում, ենթաշեղծ և այլն, ոչ լեզվաբանական բնույթը ներկայումս այլևս չի զգացվում, քանի որ դրանք վաղուց ի վեր արմատացել են գիտության այս բնագավառում, ապա նույն բանը չի կարելի ասել ժամանակակից լեզվաբանության այն բազմաթիվ տերմին-

ների մասին, որոնք միայն վերջերս են փոխառվել մաթեմատիկայից, մաթեմատիկական տրամաբանությունից, ինֆորմացիայի տեսությունից և գիտության մի շարք այլ բնագավառներից: Փաստորեն, տերմինի արմատացման և մասնագիտացման պրոցեսում կարևոր դեր է խաղում ժամանակի գործոնը:

Եվ այսպես, հաշվի առնելով բառային միավորների նեղ մասնագիտացման աստիճանը, բուն լեզվաբանական տերմիններից առանձնացնում ենք փոխառյալ անվանումների շերտը:

Լեզվաբանական մտքի պատմության ողջ ընթացքը ցույց է տալիս, որ գիտության հիշյալ բնագավառը միշտ էլ տերմիններ է փոխառել մյուսներից: Նայած այն հանգամանքին, թե այս կամ այն շրջանում լեզվաբանությունը գիտության ո՞ր բնագավառին է սերտ կապված եղել, կամ էլ գիտնականները լեզուն ի՞նչ տեսանկյունով (օրինակ՝ հոգեբանական, կենսաբանական և այլն) են քննել, ըստ այդմ էլ լեզվաբանությունը փոխ է առել այս կամ այն բնագավառին կամ էլ քննության տեսանկյունը համապատասխանող տերմիններ:

Այսպես, լեզվաբանությունը տարբեր ժամանակներում տերմիններ է փոխ առել տրամաբանությունից (ենթակա, ստորոգյալ և այլն), կենսաբանությունից (ասիմիլյացիա, դիսիմիլյացիա, իտալավորում), ֆիզիկայից, քիմիայից, երկրաբանությունից, աշխարհագրությունից (ձայն, դեֆորմացիա, վալենտականություն, չեզոքացում, բեռացում, ենթաշերտ, արեալ) և գիտության մի շարք այլ բնագավառներից:

Պարզ է, որ այս կարգի տերմինների գործածության համար հիմք պետք է հանդիսանա ինչ-որ ընդհանրություն: Օրինակ, տրվյալ գիտության և այլ գիտությունների ուսումնասիրվող որոշ պրոցեսների, երևույթների, միավորների միջև եղած համընկնությունը: Այսինքն, տերմինաբանական մի համակարգի տերմինները այլ գիտության ոլորտում ընդհանուր առմամբ հանդես են գալիս ոչ թե կամայականորեն կամ պատահականորեն, այլ՝ անհրաժեշտաբար, որը պայմանավորված է տվյալ բնագավառում համապատասխան գաղափարների, հասկացությունների, ինչպես նաև ուսումնասիրության մեթոդների ներդրմամբ (ԴԻ, 107): Այսպես օրինակ, ներկա ժամանակաշրջանում մաթեմատիկայից, մաթեմատիկական տրամաբանությունից, ինֆորմացիայի տեսությունից մեծ քանակությամբ տերմինների (ավելցուկանություն, անդրլեզու, ինվարիանտ, իզոմորֆիզմ, ինֆորմատ,

կող, կոնֆիգուրացիա, կադապար, ռեֆերենտ, հատույթ և այլն) փոխառության երևույթը հիմնականում պայմանավորված է լեզվաբանության առարկայի՝ լեզվի ուսումնասիրության հայեցակետով:

Տարբեր գիտությունների ներթափանցումով պայմանավորված, գիտության տվյալ բնագավառի պահանջներից բխող տերմինների փոխառությունը օգտակար և անհրաժեշտ երևույթ է, որովհետև ամենից առաջ այս կամ այն բնագավառում հաճախ են ծագում այնպիսի գաղափարներ, որոնք չեն կարող արտահայտվել եղած հասկացություններով և անվանումներով:

Բացի այդ, փոխառյալ տերմինները եթե բավարարում են որոշակի պահանջների, ապա դրանք ընդհանուր առմամբ նպաստում են համարանությունների մի ամբողջ շարքի ստեղծման, որն իր հերթին կարող է խթան հանդիսանալ գիտության փոխառյալ բնագավառի հետագա զարգացման համար:

Պարզ է, որ գիտության տվյալ բնագավառի պատմության ողջ ընթացքում (սկզբնավորումից մինչև ներկայիս շրջանը), տեղի ունեցող տերմինների փոխառության երևույթը միևնույն կերպ չի կարելի ըմբռնել և մեկնաբանել, քանի որ մտածողության և ճանաչողության զարգացման տարբեր աստիճաններում տարբեր գիտությունների միջև եղած կապերի ու հարաբերությունների բնույթը միևնույնը չէ: Այսպես, ինչպես հայտնի է, գիտությունների մեծ մասը նախապես տարբերացված չի եղել, դրանք սկսել են ձևավորվել մյուսների շրջանակներում (օրինակ, լեզվաբանությունը յկսել է ձևավորվել փիլիսոփայության, տրամաբանության շրջանակներում) և հետևապես տերմիններ են փոխառել դրանցից:

Ներկա ժամանակաշրջանում տերմինների փոխառության երևույթը այլ է, քանի որ գիտությունների այժմյան ներթափանցումը և դրանց միջև եղած կապերն ու փոխհարաբերությունները նոր որակ են. ձեռք բերել:

XXI դարի լեզվաբանության պատմության մեջ առկա է դարիս բոլոր գիտությունների զարգացման համար բնորոշ մի երեւույթ՝ գիտությունների նեղ մասնագիտացման (տարբերացման) հետ մեկտեղ նկատվում է նաև հակառակ՝ դրանց փոխներթափանցման և միավորման գործընթացի դրսևորում, որի պատճառով էլ հետզհետե ավելանում է միջակա գիտակարգերի քանակը: Դրանց շարքն են դասվում, այսպես օրինակ, լեզվահոգե-

բանությունը (հոգեկենդանականությունը), հասարակական լեզվաբանությունը (սոցիոլինգվիստիկա) և լեզվաբանական մի շարք այլ նոր գիտակարգեր: Վերջիններիս առկայությունը բոլորովին էլ չի խոսում այն մասին, թե կրկնվում են հոգեբանական, հասարակագիտական և այլ ուղղությունների՝ լեզվաբանության պատմությանը հայտնի հին սխալները: Ներկայումս հիշյալ գիտությունների և լեզվաբանության համադրումը, անկասկած, ունի նոր որակ (СПИТ, 62):

Գիտությունների նման փոխներթափանցումը և միավորումը անվիճելիորեն իր հետ բերում է տերմինների տեղաշարժ. այս կամ այն բնագավառում գոյանում են այսպես կոչված «միջճյուղային» և ընդհանուր գիտական տերմիններ:

Ժամանակակից լեզվաբանությունը, բնականաբար, բոլորովին անտարբեր չի կարող անցնել մաթեմատիկական տերմինաբանության մեջ արձանագրված մի շարք հասկացությունների և սահմանումների կողքով: Այս կապակցությամբ Ի. Վ. Ռեզինը նշում է, որ անհրաժեշտ է տարբերել լեզվաբանության մեջ մաթեմատիկական մեթոդների ներթափանցումը մաթեմատիկական տերմինների փոխառությունից: Առաջինը համարում է անհրաժեշտ և լրիվ օրինաչափ երևույթ, առանց որի անհնարին է կիրառական և կառուցվածքային տեսական լեզվաբանության զարգացումը: Իսկ երկրորդը, ըստ նրա, օգտակար է որոշ իմաստով, քանի որ «կապված է մի շարք դժվարությունների հետ» (91, 57):

Լեզվաբանության մեջ նման կարգի մեթոդների կիրառումը, բնական է, որ անհրաժեշտություն պետք է առաջացնի այս կամ այն վերլուծության ժամանակ օգտվել մաթեմատիկական տերմիններից: Այսինքն՝ տվյալ դեպքում տերմինների փոխառությունը պայմանավորվում է մեթոդների գործադրմամբ: Ի. Վ. Ռեզինը գտնում է, որ մաթեմատիկական տերմիններից անհրաժեշտաբար կարելի է օգտվել, օրինակ, այն դեպքում, երբ իմաստաբանական վերացական համակարգերը ենթարկվում են ընդհանուր վերլուծության (91, 60):

Ի դեպ, գիտության պահանջներից բխած և տրամաբանորեն հիմնավորված փոխառյալ տերմինը, թեև որոշ ընդհանրություններ ունի փոխատու բնագավառի այդ նույն տերմինի հետ, բայց այնուամենայնիվ իր հասկացական բնույթով տարբերվում է նրանից, քանի որ համապատասխան համակարգում ստանում է

նոր իմաստավորում: Փաստորեն, գիտության մի բնագավառի տերմինները մի այլ համակարգում գործածվում են ոչ թե իրենց ուղղակի, այլ փոխաբերական իմաստով (ԹԻ, 107):

Այսպես օրինակ, ինչպես հայտնի է լեզվաբանության մեջ կաղապար տերմինը փոխառված է մաթեմատիկայից: Սակայն այս բնագավառում հիշյալ տերմինի իմաստային գործածության բնույթը նույնը չէ ինչ որ հասարակական գիտությունների, մասնավորապես լեզվաբանության մեջ: Մաթեմատիկայում կաղապարը ավելի որոշակի է, քան այն ինչ կաղապարվում է: Լեզվաբանության մեջ, ընդհակառակը, կաղապարը ավելի վերացական է, քան այն ինչ կաղապարվում է: Այլ բան է, որ հիշյալ տերմինի մեջ մի շարք հեղինակներ դնում են միմյանցից ինչ-ինչ կողմերով տարբերվող իմաստ, սա անհատական գործածության արդյունք է: Նույն բանը կարելի է ասել նաև ալգորիթմ, արժույթ, վալենտականություն, շեգոֆացում և նման կարգի այլ տերմինների մասին:

Սակայն տարբեր բնագավառներից տերմինների փոխառությունը միշտ չէ, որ բարերար ազդեցություն է թողնում գիտական լեզվի բառապաշարի վրա: Այսպես, նման դեպքերում երբեմն տերմինները զրկվում են կարևոր հատկանիշներից, երբեմն էլ ձեռք չեն բերում նոր հատկանիշներ և տերմինաբանական համակարգում չեն գտնում իրենց համապատասխան տեղը: Վերջին հանգամանքը, շատ կարևոր է, քանի որ, ինչպես գիտենք, տերմինի բովանդակությունը լրիվ կերպով բացահայտվում է միայն իրական գործառության մեջ: Դրա համար անհրաժեշտ է, որ այս կամ այն փոխառյալ տերմինը հանդես գա որպես տվյալ անդրլեզվի տարր: Այս կապակցությամբ Օ. Ս. Ախմանովան նշում է, որ մաթեմատիկական տերմինները երբեմն ոչնչով չեն օժանդակում լեզվաբանության իրական զարգացմանը: Դրբանք չեն կարող յուրացվել լեզվաբանության կողմից և դառնալ լեզվաբանական տերմին, քանի որ գործածվում են ոչ անհրաժեշտաբար (102,8):

Փոխառությունը, ուրեմն, բացասաբար է անդրադառնում տերմինահամակարգերի վրա, երբ այն ունի սոսկ նորամուծության, բառերի կիրառության քիչ իմաստավորված բնույթ: Հետևանքը նույնն է լինում, երբ տերմինները սկսվում են գործածվել անորոշ իմաստով, որը հակասում է գիտական լեզվի ճշգրտության և որոշակիության պահպանման պահանջին:

Ուրեմն, գիտական լեզվում նման երևույթի (տերմինների փոխառության) հիմնավորված տեղ գտնելու առաջին նախապայմանն այն է, որ տերմինների փոխառությունը չկրի պարզ բնույթ, այլ խոսքերով՝ լլիների ինքնանպատակ։ Դրանցից հետո փոխառված տերմինը արդեն պետք է բավարարի այն բոլոր պահանջները ինչ մյուսները (կապը տվյալ հասկացության հետ, համակարգայնության դրսևորում, համակարգում իր որոշակի տեղը, մենիմաստ գործածություն և այլն)։

* * *

Գիտական լեզվի բառապաշարի մեջ մի առանձին շերտ են կազմում այն միավորները, որոնք ըստ ծագման ոչ տերմինաբանական բնույթի բառեր են։ Այսպես, ժամանակակից հայ լեզվաբանության մեջ գործածվող բուն, սումաս, հիմֆ, եղանակ, ժամանակ, հաղանջ, կապ, դեմֆ և նման կարգի այլ տերմինները իրենց ծագմամբ լեզվի ընդհանուր գործածական բառեր են²⁶։ Հայտնի է, որ վերջիններս գիտության այս կամ այն բնագավառում տերմինի նշանակություն են ձեռք բերում բառիմաստի էական փոփոխության (նեղացման կամ լայնացման), իմաստի մասնագիտացման և ճշգրտման, գիտական որոշակիություն ստանալու շնորհիվ։

Լեզվաբանական տերմինների համակարգում անկում, թեֆում, խոնարհում և նման կարգի այլ անվանումները, որոնք նախապես եղել են լեզվի ընդհանուր գործածական բառեր, ստացել են որոշակի նշանակություն, նրանց հիմնական իմաստին գումարվել է նոր՝ տերմինաբանական նշանակություն։

Ի դեպ, հասկացության տերմինավորման համար սովորական բառերի գործածությունը իր բնույթով ոչ թե կամայական է, այլ՝ այս կամ այն աստիճանի պատճառաբանված։

²⁶ Նման տերմինների ուսումնասիրությունը կարևոր է հատկապես այն առումով, որ դրանով իսկ հնարավոր կլինի պարզաբանել տերմինի՝ ի տարբերություն լեզվի ընդհանուր գործածական բառերի բնորոշ առանձնահատկությունները։ Սակայն վերջիններս՝ տերմինների գերում գործածվելու խնդիրը շատ ավելի բարդ է, քան այն կարող է թվալ առաջին հայացքից։ Այս կապակցությամբ Կ. Ա. Լևկովսկայան նշում է, որ դրա հետ կապված են մի շարք այլ՝ նույնքան քիչ մշակված և իրենց բնույթով բարդ հարցեր, մասնավորապես բառի նույնության խնդիրը (ի դեպ, սա էլ իր հերթին կապված է բառիմաստության և համանունության հարցի հետ)։ Խոսքը գլխավորապես այն մասին է, թե ամեն մի դեպքում մենք գործ ունենք նույն բառի, թե՞ տարբեր համանուն բառերի՝ բառ ոչ տերմինի և բառ-տերմինի հետ (53,17)։

Ընդհանուր գործածական բառերի տերմինացման ժամանակ, բնական է, որ հարկավոր է վեր հանել և ճշգրտել գրական լեզվում նրա ունեցած բոլոր իմաստները: Բացի այդ, ինչպես Դ. Ս. Լոտտեն է նշում, հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, թե այդ բառերը որպես տերմին արդյոք չեն գործածվել գիտության այլ բնագավառներում: Եվ եթե գործածվել են, ապա հատկապես ի՞նչ իմաստավորում է տրված դրանց (55, 58):

Իմաստի մասնագիտացման ենթարկվում են նաև տերմինի կազմում եղած առանձին բաղադրիչները: Օրինակ, բառապաշար, բառամթերք, բառափուլեր, բառապատկեր և նման կարգի այլ տերմինների երկրորդ բաղադրիչները (պաշար, մթերք, փուլեր, պատկեր), որոնք ըստ էության լեզվի ընդհանուր գործածական բառեր են, լեզվաբանական տերմինաբանության մեջ ստացել են այլ իմաստավորում:

Նման կարգի տերմինների քննությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ նոր իմաստը անմիջական կապի մեջ չի գտնվում համագործածական բառերի հին իմաստներից որևէ մեկի հետ:

Բառիմաստի փոփոխությամբ կերտված տերմինները մի շարք առավելությունների (հակիրճություն, պարզություն, հասանելիություն) հետ միասին ունեն որոշ թերություններ: Դ. Ս. Լոտտեն նշում է, որ ընդհանուր գործածական բառերի տերմինացումը հաճախ հանգեցնում է բազմիմաստության, ոչ ճիշտ համաբանությունների առաջացման: Քանի որ նման դեպքերում, փաստորեն, տերմինաբանությունը զրկվում է անհրաժեշտ ճշգրտությունից, ուստի Լոտտեն իրավացիորեն գտնում է, որ տերմինաբանության մեջ տերմինի և ընդհանուր գործածական բառի իմաստի ոչ մի պատահական փոփոխություն չպետք է թուլատրել (55, 58):

* * *

Ըստ բառային միավորների կազմության միջոցի (ներքին կամ արտաքին) գիտության այս կամ այն բնագավառում, ինչպես հայտնի է, առանձնանում են ազգային (սեփական) և փոխառյալ տերմինների ջերտեր:

Բառային փոխառությունների (հասկանալի է, որ խոսքը բառապատճենումների մասին չէ) շերտը հայ լեզվաբանական տեր-

մինաբանության մեջ սակավաքանակ է, քանի որ ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, գիտության հիշյալ բնագավառում տերմինների գերակշռող մասը կազմված է մեր լեզվի ներքին միջոցներով:

Հայ լեզվաբանական գրականության մեջ գործածվող օտար-լեզվյան տերմիններից են՝ ժարգոն, տաբու, էվֆեմիզմ, արեալ, ամբիստ, գլոսեմա, ալտերանտ, ամենտալիզմ, էթնոլինգվիստիկա և այլն:

Օտարլեզվյան փոխառությունները մեր լեզվաբանական տերմինաբանության մեջ ավելի շատ կրել են ժամանակավոր բնույթ, քանի որ դրանց մեծ մասը հետագայում փոխարինվել է հայերեն համարժեքներով: Այսպես, մի քանի տասնամյակներ առաջ լեզվաբանական բազմաթիվ հասկացությունների բնորոշման համար մեր գիտնականների մեծ մասը գործածում էր օտարլեզվյան տերմիններ, չնայած այն հանգամանքին, որ դրանցից շատերի հայերեն համարժեքները վաղուց ի վեր գոյություն ունեին: Տերմինագործածության հարցում հղած նման մոտեցումը, իհարկե, ժամանակի ընթացքում փոխվեց:

Օտարլեզվյան տերմինների՝ մայրենի լեզվի համարժեքներով փոխարինումը, ինչպես փորձն է ցույց տալիս, հնարավոր է դառնում նաև այն դեպքում, երբ լեզվաբանության մեջ հղած այս կամ այն զաղափարը, ինչպես նաև դրանց հետ կապված հասկացություններն աստիճանաբար յուրացվում և էլ ավելի լավ են ըմբռնվում գիտական հասարակայնության կողմից:

* * *

Ըստ կողմնորոշման բնույթի, այսինքն՝ ներքին ձևի և ժամանակակից իմաստի կապի, մասնագետները գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանության մեջ առանձնացնում են ճիշտ կողմնորոշող, սխալ (կեղծ) կողմնորոշող կամ ապակողմնորոշող և չեզոք տերմինների խմբեր²⁷:

27 Վերահիշյալ դասակարգման մեջ, որն առաջարկել է Դ. Ս. Լոտտեն, ներկայումս որոշ մասնագետներ (Մ. Գ. Բերդեր, Վ. Ն. Սեմիլև) ինչ-ինչ փոփոխություններ են մտցրել (թե՛ տերմինների առանձնացված խմբերի քանակի և թե՛ դրանց մեկնաբանության մեջ), որոնք իհարկե հիմնականում չեն տարբերվում միմյանցից: Այսպես, բացի հիշատակածներից, առանձնացվում են նաև անորոշ կողմնորոշող և չկողմնորոշող տերմինների խմբեր: Այս մասին մանրամասն տե՛ս (55, 24—27) (32, 65), (67, 9):

Հայերեն լեզվաբանական տերմինները նույնպես կարելի է բաժանել համանման շերտերի:

Առաջին խմբին պատկանում են այն տերմինները, որոնց ներքին ձևը չի հակասում ժամանակակից իմաստին: Դրանք ճշգրտության հայտնի սահմաններում արտացոլելով համապատասխան հասկացությունների էական հատկանիշները, դրանով իսկ իրական պատկերացում են ստեղծում վերջիններիս մասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս կարգի տերմինները ընդհանուր առմամբ ճիշտ են բնորոշում իրենց հիմքում ընկած համապատասխան հասկացությունների էությունը, նպատակահարմար ենք գտնում դրանք կոչել ճիշտ բնորոշում ունեցող տերմիններ անունով: Սրանց բաղադրիչները ճիշտ կերպով ցույց են տալիս տվյալ տերմինի տեղը տերմինաբանության համակարգում:

Ճիշտ բնորոշում ունեցող տերմինների շարքը կարելի է դասել ժամանակակից լեզվաբանության մեջ գործածվող անվանումների մեծ մասը:

Սխալ կողմնորոշող են այն տերմինները, որոնց ներքին ձևը չի համապատասխանում (հակասում է) ժամանակակից իմաստին, որի պատճառով էլ ճիշտ պատկերացում չի ստեղծվում հասկացության մասին:

Փաստորեն, հիշյալ շերտի տերմինների համար հատկանշականն այն է, որ դրանք ճիշտ չեն բնորոշում համապատասխան հասկացության էությունը: Այդ իսկ պատճառով սրանք պայմանականորեն կոչում ենք ոչ ճիշտ բնորոշում ունեցող տերմիններ անունով: Այսպես, հայ լեզվաբանական գրականության մեջ ժամանակին լայն տարածում գտած արևելահայ և արևմտահայ լեզուներ տերմինները ըստ էության չունեն ճիշտ բնորոշում, այսինքն, սխալ կողմնորոշող էին: Դրանք առաջացնում էին հետևյալ սխալ պատկերացումներ՝ նախ որ հայությունը ունի երկու տարբեր լեզուներ, և երկրորդ՝ հայությունը երկու տարբեր ազգերի ամբողջություն է: Այս կապակցությամբ միանգամայն ճիշտ է պրոֆ. Գ. Զահուկյանի քննադատությունը: Նա առաջարկում է վերոհիշյալ անվանումների փոխարեն գործածել արևելա-հայ և արևմտահայ տարբերակներ) տերմինները (3,65):

Ճիշտ բնորոշում չունեն նաև երկրորդական նախադասության կրճատում, գրո ձևույթ, ճառակատար, դրական աստիճան

և նման կարգի մի շարք այլ տերմինները: Վերջին տերմինի գործածությունը և համապատասխանաբար համեմատության աստիճանի այդ տեսակի ընդունումը տրամաբանական չէ: Անվանումը սխալ է կողմնորոշում, քանի որ «դրական» կոչված աստիճանի ածականը «...պարզապես ցույց է տալիս առարկայի հատկությունը, առանց այն համեմատելու նման առարկայի (կամ առարկաների) նույն հատկանիշի հետ այսինքն՝ «դրական» կոչված աստիճանի դեպքում ոչ մի համեմատություն տեղի չի ունենում...» (ՀՕ ԱԺՀ, 32):

Երկրորդական նախադասության կրճատում տերմինը իր էությունը անհաջող է: Այն, կարծես թե, լեզվական հաղորդակցության մեջ ենթադրում է կրճատման ինչ-որ մեխանիկականակա: Սակայն, պարզ է, որ կենդանի խոսքում ոչ ոք բարդ ստորադասական նախադասության կրճատում չի կատարում, այլ իր միտքը հաղորդում է կա՛մ պարզ, կա՛մ էլ բարդ նախադասություն²⁸:

Այս ձևով տերմինն ապակողմնորոշող է, քանի որ հնարավոր չէ, որ ձևովը լինի անձև և իմաստազուրկ²⁹: Ավելացնենք, որ լեզվաբանների մի մասը այս տերմինին ինչ-որ պայմանականություն տալով, այն գործածում է զգուշացնելու նպատակով կամ զգուշացնելու նպատակով:

Լեզվաբանական գրականության մեջ լայն տարածում գտած եւրոպական տերմինի գործածությունը չի կարելի արդարացնել, քանի որ դրանով բնորոշված բայաձևերը «արտահայտում են ոչ թե հարկատարվող գործողություն, կամ խոսքի մոմենտին հարկա գործողություն, այլ նրանից առաջ ավարտված գործողություն, այսինքն՝ պարզապես վաղակատար գործողություն» (ՀՐ ԱՀԲԽՏ, 156): Սակայն եղանակային այդ ձևերի մեջ կա նաև հարկա վիճակի արտահայտություն: Այդ իսկ պատճառով «եւրոպական» (ընդգծումը հեղինակինն է— Լ. Ղ.) տերմինի ո՛չ գործածությունը և ո՛չ էլ նրա վիճակը ճիշտ չի բացահայտում, քանի որ անվանված բայաձևերի գործողությունը հարկատարվող

²⁸ Նույն բանը կարելի է ասել նաև կրճատված նախադասություն տերմինի մասին:

²⁹ Պրոֆ. էդ. Աղայանը չի արդարացնում հիշյալ տերմինի թե՛ պայմանական, թե՛ «ենթաձևային» իմաստով գործածությունը: Տե՛ս էԱ ԺՀՀԽ, 77:

չէ, իսկ վիճակը առավել ես, որովհետեւ վիճակը չի կատարվում, այլ լինում է» (ՀՔ ԱՀՔԽՏ, 156):

Չեզոք կամ չկողմնորոշող են այն տերմինները, որոնք զբոհված են ներքին ձեռքի Դրանցում անհնարին է որևէ բառացի իմաստ ճանաչելը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ նման բնույթ ունեն մեծ մասամբ օտարլեզվյալ (փոխառյալ) տերմինները, ինչպես նաև մայրենի լեզվի բաղադրիչներով կազմված այն տերմինները, որոնցում ներկա պահին չի հասկացվում բառացի իմաստը:

Անվանումների այս տեսակի հետ ինչ-ինչ ընդհանրություններ ունեն այն տերմինները, որոնց ընդհանուր առմամբ հատուկ չէ բնորոշիչ դերը:

Լեզվաբանական տերմինաբանության մեջ, թեև քիչ քանակությամբ, բայց և այնպես տերմին-բնորոշումների կողքին գոյություն ունեն նաև բնորոշում չունեցող տերմիններ (տերմին-անվանումներ)³⁰, վերջիններս, ըստ էության հանդես են գալիս որոշակի երևույթների անվանման դերով:

Հիշյալ շերտի մեջ մի առանձին խումբ են կազմում ազգանվանային տերմինները: Այսպես, լեզվաբանության մեջ տարածում գտած նման կարգի տերմիններից են՝ Աճառյանի օրենք, Բարբոլոմեյի օրենք (շնչեղների օրենք), Գրսսմանի օրենք, Վերենի օրենք, Դարմատերի օրենք, Հոլցմանի օրենք և այլն:

Ազգանվանային տերմինները, ինչպես մասնագետներն են գրտնում, առավելությունից բացի (նման կարգի անվանումների՝ ոչ մի կողմնակի պատկերացում չառաջացնելը) ունեն նաև հետևյալ կարգի թերությունները՝ նախ, որ դրանք չեն արտացոլում տվյալ հասկացության կապը մյուսների հետ, և երկրորդ՝ այնքան էլ դյուրին չէ դրանց յուրացման գործը:

Տերմին-անվանումների շարքը կարելի է դասել նաև լեզվաբանական ուղղությունների, ուսումնասիրության մեթոդների և հայեցակետերի անվանումները: Այսպես օրինակ, լոգիցիզմ, բիո-

³⁰ Լեզվաբանական տերմինաբանության մեջ շատ քիչ քանակությամբ տեղ են գտել նաև այսպես կոչված փոխաբերական (մետաֆորիկ) բնույթի տերմիններ: Դրանց շարքը կարելի է դասել, օրինակ՝ մայր լեզու, դուստր լեզուներ, քույր լեզուներ, «հում լեզու», ծննդաբանական ծառ, «ալիքների տեսություն», «քեթև» ձայնավորներ, «ծառ» ձայնավորներ, «մաքուր» արմատներ, «լեզվական օրգանիզմ» և նման կարգի մի շարք այլ անվանումները:

լոգիզմ, ամենտալիզմ, «բառերի և իրերի դպրոց», պատմա-համեմատական մեթոդ, բաշխումային մեթոդ, զուգահեռական մեթոդ, գաղափարական վերլուծություն, անմիջական բաղադրիչների վերլուծություն, լեզվահոգեբանություն, լեզվահնչաբանություն և այլն:

Ջնայած որ այս կարգի տերմիններին ավելի հատուկ է անվանողական, քան թե բնորոշիչ դերը, բայց և այնպես դրանք էլ կապված են համապատասխան հասկացությունների հետ:

Գիտության ժամանակակից մակարդակի համար տերմինների պահանջվող կատարյալ տիպերը, փաստորեն, ճիշտ կողմնորոշողներն են, քանի որ դրանք են օժտված բնորոշիչ գործառությամբ:

* * *

Լեզվաբանական տերմինաբանության մեջ, բնականաբար, շերտերը կարելի է առանձնացնել մի շարք այլ հիմունքներով ևս: Այսպես, Յու. Վ. Ռոժդեստվենսկին լեզվաբանական տերմինաբանությունը բաժանում է երկու ընդհանուր համակարգի: Ըստ նրա դրանցից մեկը բովանդակում է այնպիսի տերմիններ, որոնք արձանագրում են գիտելիքների «առարկայական» բնագավառը: Օրինակ, ընդհանուր, մասնավոր քերականությունները, համեմատական քերականությունը, հնչյունաբանությունը, իմաստաբանությունը և այլն: Այս բնագավառների բոլոր տերմիններն էլ այնպիսի բովանդակություն ունեն, որոնք ինչ-որ չափով հակադրվում են մյուս համակարգի տերմիններին (օրինակ՝ տարբերակ, մակարդակ, միավոր, համակարգ, կառուցվածք և այլն): Պայմանականորեն բաժանած երկու համակարգերը նա որակում է առարկայական և մեթոդական անուններով (21, 61):

Ռոժդեստվենսկին գտնում է, որ լեզվաբանական տերմինաբանության համակարգում բառային տարբեր կարգի շերտերի առկայությունը (ընդհանուր գործածական բառերից մինչև արհեստական նշանային համակարգը), փաստորեն պայմանավորված է լեզվաբանության երկակի իրավիճակով (այսինքն, հասարակական և բնական գիտությունների շրջանակում նրա գրաված դիրքով), նրա բարդ կառուցվածքով և լեզվաբանության՝ որպես գիտության մի առանձին բնագավառի պատմական երկարամյա ձևավորմամբ (21, 61):

Լեզվաբանական բազմաթիվ բնագրերի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս վեր հանել գիտության հիշյալ բնագավառի լեզվին հատուկ մի շարք երևույթներ, տերմինների իրական գործածության որոշ առանձնահատկություններ, նախքան դրանցից մի քանիսի քննությանն անցնելը, անդրադառնալով գիտական, մասնավորապես լեզվաբանական տերմինների մի կարևոր առանձնահատկության բացահայտմանը:

Ժամանակագրական տարբեր շերտերին պատկանող տերմինների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեջ էլ իր արտացոլումն է գտել գիտական այս կամ այն տեսությունը, ինչպես նաև լեզվական երևույթների և միավորների ուսումնասիրության հայեցակետը: Այսպես օրինակ, ճնշույթ, գրույթ, բառույթ, ասույթ, արժույթ, իմաստույթ, գերճնշույթ, գերձնույթ, գերշարճնույթ, ենթաճնշույթ, մակաձնույթ և նման կարգի մի շարք այլ տերմինները պատկանում են լեզվաբանության ժամանակակից տեսություններին:

Հաշվի առնելով տերմինաբանության նման առանձնահատկությունը, մասնագետները իրավացիորեն գտնում են, որ գիտության զարգացման ներկայիս մակարդակում բոլոր տերմինները որոշակի տեսության տարրեր (անդամներ) են: Ուստի այս կամ այն տերմինը հասկանալու համար նախ և առաջ պետք է ծանոթ լինել համապատասխան տեսությանը, որից հետո նոր պետք է որոշել այդ իսկ տեսության շրջանակներում տվյալ տերմինի գրաված տեղը:

Փաստորեն, գիտական տերմինի իմաստը շատ բանով որոշվում է տեսության մեջ նրա գրաված տեղով (85, 24): Այսպես օրինակ, լեզու և խոսք տերմինների՝ Սոսյուրի, ինչպես նաև ժամանակակից լեզվաբանության մի շարք ուղղությունների և դրանց ներկայացուցիչների (Բենվենիստ, Ելմսլև) մեկնաբանության և գործածության տարբերությունն, անշուշտ, պայմանավորված է լեզվաբանական տեսությունների միջև եղած տարբերությամբ: Նույն բանը կարելի է ասել նաև լեզվական մակարդակ տերմինի մասին, որն ինչպես հայտնի է տարբեր կերպ են ըմբռնում Բենվենիստը և մյուս լեզվաբանները:

Լեզվական այս կամ այն միավորի տեսության զարգացումը, անշուշտ, իր հետքն է թողնում լեզվաբանական համապա-

տասխան տերմինների հիմքում ընկած հասկացությունների մեկնարանության վրա: Այսպես օրինակ, դրանով է պայմանավորված ձևային տերմինի հիմքում ընկած հասկացության տարբեր մեկնարանությունների առկայությունը, որ տվել են Ի. Ա. Բոդունն դե Կուրտենեն, դեակրիպտիվիստները, Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչները, Վանդրիսը, Ելմսլեր, Գլիսոնը³¹:

Քանի որ հայ լեզվաբաններից Մ. Արեղյանի տեսությունը իրենից ներկայացնում է մի առանձին և իր շրջանակներում կուռ համակարգ, ուստի անդրադառնանք նրա մի շարք տերմինների քննությանը:

Ի դեպ, Արեղյանի և մյուս լեզվաբանների լեզվական երեւույթների և միավորների բաժանումը, դասակարգումը և համապատասխանաբար դրանց տերմինավորումը չեն համընկնում: Արեղյանի տերմինների գերակշռող մասը ճիշտ ըմբռնելու և հասկանալու համար պետք է նախապես լավ ծանոթ լինել նրա ինչպե՛ս լեզվական տեսությանն ամբողջությամբ, այնպե՛ս էլ տերմինավորման հիմունքներին և սկզբունքներին: Օրինակ՝ Խոսքի մաս և ճախադասության անդամ տերմինների արեղյանական և հետագա շրջանի լեզվաբանների ըմբռնումը, ինչպես նաև դրանց գործածության հիմունքները միանգամայն չեն համընկնում միմյանց: Քանի որ Արեղյանի համակարգում Խոսք-ն ըմբռնվում է որպես նախադասություն (այս բառի իսկական իմաստով), այդ պատճառով էլ Խոսքի մաս և ճախադասության անդամ տերմինները գործածված են շտաբերակված ձևով:

Բայ տերմինը և դրա հիմքում ընկած հասկացությունը Արեղյանի համակարգում ունի այլ իմաստավորում: Այն նախադասության անդամի խոսքի մասային և շարահյուսական անվանում է: Փաստորեն, տվյալ տերմինը գործածվում է ստուգաբանական (բայ-ստուգաբանվածք, խոսք, բան) առումով. «Բայ բառը նշանակում է Խոսք: Այսպէս կոչվում է բայը, որովհետև Խոսքի էական մասն է կամ բուն Խոսքը» (ՄԱ ԱՔ, 41): Հիշյալ տերմինի իմաստավորման նման հիմունքն այն է, որ բայ-ի խմբի մեջ մտնող բառերն ունեն ոչ միայն հատկանիշի (բայիմաստն իբրև հատկանիշ), այլև՝ ձևաբանական (դեմք, թիվ) իմաստ և դրանցով

³¹ Լեզվաբանության պատմության մեջ եղած ձևային տերմինի տարբեր ըմբռնումների քննության մասին մանրամասն տե՛ս 89, 140—152:

պայմանավորված շարահյուսական այնպիսի առանձնահատկություններ, որոնցով ձևավորվում է նախադասությունը:

Հայտնի է, որ Արեղյանի համակարգում ածական տերմինը ունի «վրան դրվելու» իմաստ, և ածականները խմբավորված են ոչ թե ըստ նշանակության, այլ միայն ըստ այն հիմունքի, թե դրանք ինչ խոսքի մասի վրա են գրվում: Այդ է պատճառը, որ տվյալ խոսքի մասի տարատեսակները նա բնորոշում է մականուն, մակ-րայ և մակածական անվանումներով: Փաստորեն, ըստ արեղյանական տեսության ածական տերմինով բնորոշված բառերի խումբը ոչ թե որևէ բնույթի հատկանիշ արտահայտող խոսքի մաս է, այլ՝ գոյականի վրա դրվող և որոշչի շարահյուսական պաշտոն կատարող, ամենատարբեր իմաստ ունեցող բառերի կարգ:

Ընդհանրապես Արեղյանի տերմինները համապատասխանում են իր գաղափար լեզվաբանական ուսմունքին (տեսությունը) և այդ համակարգում ունեն իրենց ուրույն տեղը:

Պրոֆ. Գ. Սևակը, որը լեզվաբանական մի այլ տեսության ներկայացուցիչ է, քերականական հիմնական տերմինների հիմքում ընկած հասկացությունները որոշում է այլ հիմունքով և այլ՝ բառերի լեզվա-իմացաբանական ընդհանուր իմաստով: Այսպես, վերոհիշյալ տերմինների (խոսքի մաս, նախադասության անդամ, րայ, ածական), ինչպես նաև լեզվաբանական շատ ու շատ այլ անվանումների գործածության ու դրանց հիմքում ընկած հասկացությունների մեկնաբանման հարցում նա միանգամայն տարբերվում է Մ. Արեղյանից:

Ասվեց, որ գիտական տերմինաբանությունը շատ կողմերով կապված է նաև լեզվական երևույթների և իրականությունների ուսումնասիրության հայեցակետի հետ: Այսպես, հնչյունական համակարգը, հայտնի է, որ ուսումնասիրվում է տարբեր տեսանկյուններով (ըստ խոսքի և լեզվի միավորների տարբերության): Հնչյունների՝ նման հայեցակետերով կատարված ուսումնասիրությունները (հնչյունաբանությունը և հնչյվաբանությունը), ինչպես՝ հայտնի է, միմյանցից տարբերվում են ոչ միայն անհատական տերմինագործածությամբ, այլ նաև ընդհանուր տերմինների իմաստային առանձնահատուկ կիրառությամբ:

* * *

Այժմ անցնենք լեզվաբանության անդրլեզվում նկատվող մի շարք երևույթների, ինչպես նաև լեզվաբանական տերմինների ի-

րական գործառնության որոշ առանձնահատկությունների քննութ-
յանը:

Լեզվաբանության, որպես գիտության առանձին բնագավառի,
լեզվի մեջ լայն տարածում ունի լեզվական միեւնույն միավորների
և երևույթների տերմինավորման տարբեր և ոչ միասնական հի-
մունքը:

Հիշյալ երևույթը նկատվում է ոչ միայն տարբեր ժամանակ-
ներում հանգես եկած կամ տարբեր դպրոցներին ու ուղղություն-
ներին պատկանող լեզվաբանների (այսպես օրինակ, ժամանա-
կաձևերի տերմինավորումը Աբեղյանի և հետաբեղյանական շըր-
ջանի լեզվաբանների աշխատություններում), այլ նաև միեւնույն
ժամանակահատվածում ստեղծագործած գիտնականների մոտ
(համեմատի՛ր նույն ժամանակաձևերի տերմինավորման սկզբուն-
քը ներկայիս մի շարք հայ լեզվաբանների աշխատություններում):

Տերմինավորման տարբեր սկզբունքի օրինակներ են նկատ-
վում, այսպես օրինակ, հնչյունների տարատեսակների, բայի ժա-
մանակաձևերի, ինչպես նաև լեզվական բազմաթիվ այլ միավոր-
ների ու երևույթների անվանակոչության մեջ: Ընդ որում միեւ-
նույն միավորների տերմինավորման տարբեր հիմունքը առաջին
հերթին կապված է այդ իսկ միավորների՝ գիտնականների
կատարած դասակարգման առանձնահատկությունների, ինչպես
նաև բնորոշման հիմքում դրված այս կամ այն անունների հետ:
Այս բանը կարելի է ցույց տալ հնչյունների միեւնույն տարա-
տեսակներին տրված տարբեր անվանումների գործածույլսն
օրինակի վրա: Այսպես օրինակ, ձայնավորների միեւնույն տա-
րատեսակները (օրինակ, ըստ լեզվի տարբեր մասերի մասնակ-
ցության) հայ լեզվաբանները բնորոշել են տարբեր տերմիննե-
րով՝ առաջաֆիմֆ, ֆեամբջ, վերջաֆիմֆ (Աբեղյան. անվանման
հիմքում դրված է քիմքը) կամ առաջնալեզվային, միջնալեզվա-
յին, ետնալեզվային (բնորոշման հիմքում դրված են լեզվի տար-
բեր մասերի անունները) կամ էլ առաջին, միջին, ետին շաբֆի
ձայնավորներ (դասակարգման հիմքում հաջվի է առնված հըն-
չյունների կազմավորման-արտաբերման յուրահատուկ բնույթը):

Բաղաձայնների տարատեսակների բնորոշման համար գոր-
ծածված անվանումների տարբերությունն էլ հիմնականում կապ-
ված է այն հանգամանքի հետ, թե այս կամ այն լեզվաբանը բա-
ղաձայնների արտաբերությանը մասնակցող գործարաններից ո-

րին է ավելի մեծ նշանակություն տալիս և հետևաբար տերմինավորման հիմքում այդ գործարաններից որի անունն է դնում:

Ասվեց, որ արդի հայերենի բայի ժամանակաձևերի անվանակոչության մեջ ակնառու երևում է տերմինավորման ոչ միասնական սկզբունքը: Այսպես, ժամանակաձևերի բնորոշման հիմքում մեկ դրվում է օժանդակ բայի ժամանակի (ներկա ժամանակ), մեկ էլ դերբայի և օժանդակ բայի ժամանակի անունները (անցյալի վաղակատար ժամանակ), Փաստորեն, յուրաքանչյուր բաղադրյալ դիմավոր բայ ունի երեք կամ չորս անվանում: Օրինակ, դնացել է—վաղակատար, վաղակատար ներկա, ներկա վաղակատար, ներկայի վաղակատար, անցյալ:

Գիտության հիշյալ բնագավառի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեզվաբանները այս կամ այն միավորի, երկվայթի, հատկանիշի տերմինավորման հարցում շատ հաճախ չեն ցուցաբերում պատշաճ հետևողականություն: Այսպես օրինակ, հայտնի է, որ «հնչույթային հատկանիշների անվանումները կարող են լինել երեք տիպի՝ ֆիզիկական (ակուստիկական), արտաբերական և լսա-տպավորական» (ԳՋ ԺՀՏՀ, 61): Սակայն այդ անվանումները խառն կերպով են գործածվում «հնչաբանական գրականության մեջ» (ԳՋ ԺՀՏՀ, 61):

Տերմինավորման սկզբունքի խախտման դեպքում չի կարող պահպանվել լեզվական այս կամ այն երկույթի, միավորի ըմբռնման հստակությունը: Այսպես օրինակ, սեռական և հայցական հոլովների գոյությունը մերժող հայ լեզվաբանների մի զգալի մասը իրենց աշխատություններում տրական-ին և ուղղական-ին զուգահեռ, հոլովաձևերը բնորոշում են ուղղական-հայցական, սեռական-տրական, ուղղականաձև հայցական, տրականաձև սեռական, տրականաձև հայցական տերմիններով: Քանի որ այդ անվանումները հիշեցնում են երկու առանձին հոլովների գոյությունը (մի բան, որ հակասում է այդ իսկ գիտնականների՝ լեզվական համապատասխան միավորների ըմբռնմանը), ուստի տվյալ դեպքում կարող է շփոթություն առաջանալ:

* * *

Հայտնի է, որ տերմինավորման մեջ իր արտացոլումն է գտնում լեզվական այս կամ այն միավորների, երկույթների՝ գիտնականների կատարած դասակարգման սկզբունքները: Այս-

պես օրինակ, քանի որ ձայնավորների դասակարգումներից մեկի հիմքում ընկած է լեզվի՝ այսինքն, գործող օրգանի մասնակցությունը, ուստի հնչյունների այդ տարատեսակները բնորոշվում են հիշյալ օրգանի անունով: Տվյալ դեպքում հարկավոր է ուշադրություն դարձնել լեզվական միավորների դասակարգման համար ընտրված հատկանիշների ճշգրտության վրա: քանի որ վերջիններիս անուններն են դրվում համապատասխան տերմինների բնորոշման հիմքում:

Գիտական լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քիչ չեն այն դեպքերը, երբ լեզվաբանական հասկացությունների համար ընտրված ոչ ճիշտ, երբեմն էլ անցանկալի հատկանիշները բացասաբար են անդրադառնում համապատասխան տերմինների ճշգրտության վրա: Նման դեպքերում հատկանիշների ընտրությունը, կարելի է ասել, որ կատարվում է չհիմնավորված կերպով: Այսպես օրինակ, հայ քերականագիտության պատմության մեջ բոլոր լեզվաբանների կողմից ընդունված և անփոփոխ կերպով գործածվող ապառնի դերբայ տերմինը, փաստորեն, լեզվական տվյալ միավորը բնորոշում է ժամանակի (ապառնիություն) անունով³², իսկ, ինչպես հայտնի է, ժամանակի հասկացությունը չի կարող համատեղվել դերբայի՝ որպես բայի անդեմ ձևի ըմբռնման հետ:

Անվանակոչության նման հիմունքով կազմված տերմինները, փաստորեն ճիշտ չեն բնորոշում համապատասխան հասկացության էությունը: Օրինակ՝ համեմատության աստիճան, անցյալի 'ապառնի, ճարակատար, պայմանական կամ ենթադրական նշանակ և նման կարգի մի շարք այլ տերմինները, ըստ էության, չեն համապատասխանում լեզվական համապատասխան կարգերին:

Համեմատության աստիճան տերմինը տրամաբանական տեսակետից ճիշտ չէ, քանի որ միայն համեմատության աստիճանի դեպքում չէ, որ գործ ունենք համեմատության հետ:

Անցյալի ապառնի տերմինը տրամաբանական տեսակետից ճիշտ բնորոշում չունի, քանի որ բայական համապատասխան

³² էդ. Աղայանը և Հ. Բարոնյանը իրենց դպրոցական քերականության մեջ հիշյալ անվանումը փոխարինել են կառաքելի դերբայ տերմինով: Տե՛ս օրինակ՝ էԱ ՀՐ ՀԼ, 199,

ձևերում գործողության ժամանակը անցյալ է և ոչ թե անցյալի ապառնիք:

Պայմանական կամ ենթադրական եղանակ տերմինը ճիշտ բնութագրում չունի, քանի որ պայմանականությունը այդ եղանակի էական հատկանիշը չէ:

Տերմինակերտման դեպքում, ինչպես իրավացիորեն գտնում է Դ. Ս. Լոտտեն, նախապես հարկավոր է ճշգրտորեն որոշել այս կամ այն հասկացության տեղը տվյալ համակարգի կամ էլ դասակարգողական տվյալ շարքի մնացած հասկացությունների շրջանում: Իրանից հետո նոր պետք է ընտրել տերմինի բնորոշման հիմքում դրվելիք հատկանիշը (55,28): Վերջիններս պետք է համապատասխանեն գասակարգողական մեկ աստիճանի վրա կանգնած նույն կարգի մնացած հասկացությունների հատկանիշներին: Այսինքն, նման կարգի հասկացությունների բնորոշման համար ընտրված հատկանիշները, ինչպես գործնականում հաճախ է պատահում, չպետք է լինեն տարբեր կարգի (55, 29):

* * *

Լեզվաբանական տերմինաբանության ճշգրտության ապահովման համար, թվում է, որ կարևոր նշանակություն ունի լեզվական այս կամ այն մակարդակի միավորի՝ համապատասխան մակարդակի անունով բնորոշելու հանգամանքը: Այսպես, հայտնի է, որ phrase (ֆրազ) տերմինը գործածվում է հնչյունաբանական ամենամեծ միավորի (սա բնութագրվում է հնչերանգային վերջավորվածությամբ և դրա հետ կապված որոշակի ուժեղ շեշտով ու մեծ դադարով) բնորոշման համար: Պարզ է, որ լեզվական հիշյալ միավորը բոլորովին էլ նպատակահարմար չէ բնորոշել նախադասություն տերմինով, քանի որ տվյալ դեպքում կնույնացվեն լեզվի տարբեր մակարդակի միավորները: Այս կապակցությամբ Ա. Ա. Ռեֆորմատսկին կատարում է հետևյալ նախազգուշացումը. «Ոչ մի դեպքում չի կարելի նույնացնել քերականական միավորը (նախադասությունը) և հնչյունաբանականը (ֆրազը), քանի որ մի ֆրազը կարող է ընդգրկել մի քանի նախադասություններ և նախադասությունը կարող է տրոհվել մի քանի ֆրազների» (20,187):

Սակայն գիտության հիշյալ բնագավառի լեզվում քիչ տարածում չունի այն երևույթը, երբ մի մակարդակի միավորը բնորոշվում է այլ մակարդակի անունով: Այսպես, հայտնի է, որ ձևաբանական մակարդակի մի շարք միավորներ մեզանում բնորոշվել են շարահյուսական մակարդակի անուններով: Օրինակ՝ հնթակայական դերբայ, ժխտական դերբայ, պայմանական կամ հնթադրական եղանակ, կապ և մի շարք այլ անվանումներ ըստ էության, շարահյուսական տերմիններ են, որոնք գործածվել են ձևաբանական միավորների բնորոշման համար:

Ժխտական դերբայ տերմինի բնորոշման հիմքում հաշվի է առնված այն հանգամանքը, որ խոսքի մեջ այս դերբայը հանդես է գալիս օժանդակ բայի ժխտական ձևերի հետ:

Կապ տերմինի բնորոշման հիմքում էլ, փաստորեն, հաշվի է առնված ոչ թե բառերի խոսքի մասային իմաստի հատկանիշը, այլ՝ շարահյուսական պաշտոնը: Նույն բանը կարելի է ասել նաև համադասական և ստորադասական շաղկապների տերմինների մասին:

* * *

Լեզվաբանության անդրլեզվում հաճախակի հանդիպող մի այլ երևույթ էությունն այն է, որ տեսակային հասկացությունն բնորոշող տերմինների փոխարեն երբեմն գործածվում են սեռային ընդհանուր բնույթ ունեցող անվանումներ (օրինակ՝ թեֆում, ձևույթ, սեռ և այլն):

Ձևույթ տերմինը մասնագետների կողմից գործածվում է այնպիսի մասնավոր տեսակային հասկացությունների բնորոշման համար, ինչպիսիք են՝ «արմատ», «նախածանց», «վերջածանց», «վերջավորություն»:

Սեռ-ն էլ ընդհանուր բնույթ ունեցող տերմիններից է: Այն, փաստորեն գործածվում է ճշգրտականական (անվանական) սեռ և ճշգրտական սեռ հասկացությունների բնորոշման համար³⁸:

Հիշյալ երևույթին մոտ են տերմինների իրական գործածության այն դեպքերը, երբ լեզվական միևնույն միավորը կամ երե-

³⁸ Թվում է, որ ավելի նպատակահարմար կլինի, որպեսզի այս հասկացություններից յուրաքանչյուրը բնորոշվի առանձին տերմիններով՝ անվանական սեռ և ճշգրտական սեռ:

վույթը անվանվում է մերթ ավելի լայն, մերթ ավելի նեղ իմաստ արտահայտող տերմինով: Նման օրինակներից են բառի քննականական փոփոխությունների բնորոշման համար գործածվող քեֆում, հոլովում, խոնարհում տերմինները:

Անվանակոչության նման հիմունքը անդրադառնում է տերմինների ըմբռնման վրա, այսինքն, այս կամ այն տերմինը մերթ ստանում է լայն, մերթ՝ նեղ ըմբռնում: Այսպես օրինակ, քայ տերմինի տակ նեղ իմաստով հասկացվում է միայն դիմավոր բայը, որին հակադրվում է դերբայը: Բայց, ինչպես հայտնի է, կա նաև քայ-ի լայն ըմբռնում (երբ դիմավոր բայերից բացի բայ են դիտվում նաև անդեմ բայերը, այսինքն՝ դերբայները): Նման ձևով են ըմբռնվում նաև ֆեռականություն, ֆեռականական կատեգորիա և մի շարք այլ տերմինները: Վերջին տերմինի տակ սովորաբար հասկացվում է լեզվի ձևաբանական դեմքը բնորոշող քերականական իմաստների ու նրանց քերականական միջոցների միասնությունը: Սակայն ֆեռականական կատեգորիա տերմինն ունի նաև լայն ըմբռնում: Լեզվաբանները դրա տակ են մտցնում ձևաբանական ու շարահյուսական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «գոյական», «բայ», «դեմք», «թիվ», «նախադասություն», «ենթակա», «ստորոգյալ» և այլն:

* * *

Տերմինաբանության ճշգրտության վրա բացասաբար են անդրադառնում տերմինների և հասկացությունների համակարգի անհամապատասխանությունը ամբողջությամբ, տերմինների բազմիմաստությունը, հոմանիշությունը, տերմինների հիմքում ընկած հասկացությունների ոչ գիտական սահմանումները և մի շարք այլ երևույթներ:

Գիտության հիշյալ բնագավառի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից տերմինաբանությունը, դրժ-բախտաբար, կատարյալ ու ճշգրիտ կերպով չի արտացոլում լեզվաբանության մեջ գոյություն ունեցող հասկացությունների համակարգը (37,169): Նման երևույթի դրսևորումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտության հիշյալ բնագավառի լեզվում շատ հաճախ բացակայում են տերմինների միջև եղած անհրաժեշտ կապերը, որոնք պետք է արտացոլեն գիտական հասկացությունների միջև գոյություն ունեցող կապերը:

Վերջիններս էլ, ինչպես հայտնի է, իրենց հերթին պայմանավորված են լեզվական իրողությունների և երևույթների միջև առկա օբյեկտիվ կապերով: Նկատի ունենալով այս հանգամանքը, հնարավորության սահմաններում պետք է պահպանել լեզվական իրողությունների ու երևույթների և գիտական հասկացությունների միջև եղած համապատասխանությունը: Չէ՞ որ ամեն մի գիտության, այդ թվում և լեզվաբանության, զարգացման աստիճանը որոշվում է նաև նրանով, թե լեզվաբանական հասկացություններն ի՞նչ չափով են համապատասխանում լեզվական իրողություններին, և թե ի՞նչ չափով է տարբերակված ու ընդհանրացված լեզվական միավորների գիտական ըմբռնումը:

Ուրեմն, տերմինաբանության և հասկացությունների համակարգի համապատասխանությունը պահպանելու համար անհրաժեշտ է տերմինների կերտման և ընտրության ժամանակ բացի զուտ գասակարգողական կապերից հաշվի առնել նաև դիտարկվող հասկացությունների միջև գոյություն ունեցող առավել կամ պակաս մոտ կապերը (55,29):

Պարզ է, որ հասկացությունների որոշակի համակարգին պատկանող միևնույն կամ տարբեր կարգի տերմինների միջև պետք է բացակայի իմաստաբանական հակասությունը, ինչպես նաև տերմինների չհիմնավորված անհամապատասխանությունը (55,29):

* * *

Տերմինի հստակությունը և հետևողական կիրառությունը գիտական լեզվի, գիտության տվյալ ճյուղի տերմինաբանության ճշգրտության պահպանման կարևոր նախապայմաններից է: Շուրջարդտի պատկերավոր խոսքերով ասած՝ տերմինաբանական անհստակությունը գիտության համար նույն բանն է, ինչ մառախուղը ծովագնացության համար: Այն առավել ևս վտանգավոր է, երբ ընդհանրապես հաշվի չեն առնում այդ թերությունը (55,19):

Բոլոր դեպքերում էլ, ինչպես Դ. Ս. Լոտտեն է նշում, ամբողջությամբ պետք է հասնել տերմինաբանական համակարգի և յուրաքանչյուր առանձին տերմինի առավելագույն հստակությանը և հասկանալիությանը (55, 33):

Տերմինների կատարյալ գործածության նախապայմաններից

մեկն այն է, որ գիտական այս կամ այն շարադրանքի մեջ չպետք է անհամապատասխանություն առաջանա տերմինի իրական (փաստական) կիրառության և դրա հիմքում ընկած հասկացության սահմանման միջև³⁴։ Սակայն գիտական լեզվի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր ուսումնասիրություններում է առկա տերմինների նման հետևողական գործածությունը։

Հասկանալի է, որ լեզվաբանները միշտ չէ, որ իրենց գործածած ամեն մի տերմինը պետք է սահմանեն, քանի որ դրա կարիքը ոչ բոլոր դեպքերում է զգացվում։ Նման պարագայում, տերմինների գնահատման ժամանակ, մնում է հաշվի առնել այն հանգամանքը, թե որքանով է որևէ հեղինակի կողմից գործածված այս կամ այն տերմինի փաստական կիրառությունը համապատասխանում այդ ժամանակաշրջանում տվյալ տերմինի հիմքում ընկած հասկացության ընդունված և տարածված ըմբռնմանը։

Գիտական լեզվի ճշգրտության և հստակության վրա բացասաբար է անդրադառնում նաև այն երևույթը, երբ մոտ հասկացություններ ընդունող տերմինները չեն ունենում տարբերակված գործածություն։ Այսպես օրինակ, գիտական երկերի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայ լեզվաբանության մեջ հնչյուն և հնչույթ տերմինների կիրառության հարցում ընդհանուր առմամբ չկա խիստ սահմանազատում, չնայած այն հանգամանքին, որ մեզանում վաղուց է, ինչ հստակորեն տարբերակվել են այդ անվանումների հիմքում ընկած հասկացությունները։ Մեծ մասամբ հնչույթ-ի փոխարեն գործածվում է հնչյուն տերմինը (ինչպես որ հնչյունաբանություն-ը գործածվում է նաև հնչույթաբանություն տերմինի փոխարեն)։

Նման տերմինագործածությունը մեր լեզվաբանները արդարացնում են, հիմք ընդունելով ավանդականության և հարմարության ռապտոմանությունը։ Թվում է, որ տերմինաբանության համակարգայնությունը, ինչպես նաև գիտական լեզվի ճշգրտությունը և հստակությունը կարելի է պահպանել այն դեպքում, երբ հիշյալ հասկացություններից յուրաքանչյուրի ընդունման համար գործածվի համապատասխան տերմինը։

Հայտնի է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ հետազոտողները

³⁴ Պարզ է, որ տվյալ դեպքում խոսքը այն տերմինների ու դրանց հիմքում ընկած հասկացությունների սահմանման մասին է, որոնք ճշգրտության տեսանկյունից կասկած չեն հարուցում և ունեն քիչ թե շատ ընդհանուր ճանաչում։

սկզբից ևեթ ստիպված են լինում առաջնորդվել այնպիսի տերմիններով, որոնք զրկված են հստակ և որոշակի բովանդակությունից (102,7): Այսպես, հայ լեզվաբանական դրականության մեջ մեռած և կենդանի լեզու, աշխարհաբար և գրաբար, բարբառ, ենթաբարբառ, խոսվածք և մի շարք այլ տերմիններ ժամանակին ունեցել են անհետևողական, չսահմանազատված, կամայական կիրառություն:

Մեռած լեզու տերմինով բնորոշվել են նաև այն լեզուները, որոնց կրող ժողովուրդներն այժմ ապրում են և որոնց լեզվի հիմնական բառամթերքի և քերականության հիմքերը պահպանվել են: Փաստորեն, ճիշտը կլիներ այն, որ այդ լեզուները բնորոշվեին ճին լեզուներ անունով (3,9—10):

Անհետևողականության պատճառով խախտվել էին բարբառ, ենթաբարբառ, խոսվածք տերմինների կիրառության սահմանները՝ մեկը գործածվել էր մյուսի փոխարեն: Այսինքն, հետևանքն այն է եղել, որ ոչ ճիշտ պատկերացում է ստեղծվել տվյալ լեզվի ճյուղավորումների մասին:

Աշխարհաբար և գրաբար (երկրորդ տերմինը գործածվել է թե՛ հին գրական լեզվի, թե՛ նրա հիմքում ընկած խոսակցական լեզվի բնորոշման համար) տերմինների՝ ժամանակի սխալ գործածության միանգամայն ճիշտ քննադատությունն է տվել պրոֆ. Գ. Զահուկյանը: Նա առաջարկել է կա՛մ դրանք փոխարինել նոր անվանումներով, կա՛մ էլ պահպանել, գործածելով հստակ, որոշակի իմաստով, գիտական ճշգրիտ առումով (3,16—17):

Հարկ է նշել, որ լեզվաբանական մի շարք տերմինների ոչ ճիշտ, երբեմն էլ ավանդական ըմբռնումները հաճախակի բացասաբար են անդրադառնում լեզվական համապատասխան երևույթների, իրակությունների, միավորների մեկնաբանության գործում: Այս բանը ակնառու կերպով երևում է ժամանակակից հայերենի ճշգրտված և բայական տերմինների ըմբռնումների, ինչպես նաև դրանց հիմքում ընկած հասկացությունների՝ գիտնականների տված սահմանումների և մեկնաբանությունների մեջ:

Մուկրայ տերմինի ավանդական և անհստակ գործածությունն էլ իր որոշ հետքն է թողել լեզվաբանական մտքի պատմության վրա: Հայտնի է, որ այս տերմինը իր ստուգաբանական իմաստով նշանակել է «բայի վրա դրվող» խոսքի մաս: Եվ շատ լեզվաբաններ էլ մակբայի էությունը փորձել են բացատրել, ելնելով նրա անվանումից:

Ի դեպ, այս կամ այն տերմինի անհետևողական գործածությունը կարող է ազդել համակարգում եղած մի այլ հասկացությունն ընդհանուր տերմինի ճշգրտության վրա, քանի որ, ինչպես գիտենք, տերմինների մեկուսացված չեն, այլ միմյանց նկատմամբ գտնվում են համաստորադաս հարաբերության մեջ: Այսպես օրինակ, ժամանակին հայ լեզվաբանական գրականության մեջ գրաբար և աշխարհաբար տերմինների սխալ գործածությունը, փաստորեն, պայմանավորված էր գրական և խոսակցական լեզու տերմինների անհետևողական կիրառությամբ (3,16—17):

Լեզվաբանության մեջ մեծ թիվ են կազմում այն տերմինները, որոնց իմաստային գործածության սահմանները հստակ կերպով չեն սահմանազատված: Այսպես, հայ լեզվաբանական գրականության մեջ տեղ գտած կերպ տերմինը գործածվել է ջարդանակականության և բազմապատկանության, ինչպես նաև ինչ-որ ստորոգելիական կարգեր ընդունելու համար: Բացի այդ, հիշյալ տերմինը լեզվաբանական բնագրերում կիրառվել է «ձև» իմաստին համարժեք: Ընդհանուր գրական լեզվում կարելի է այդ բառերը միմյանցով փոխարինել: Պարզ է, որ նույն բանը չի խրախուսվում գիտական լեզվում, քանի որ այն անճշտության տեղիք է տալիս:

Անհատակ են գործածվել նաև բառագիտության բնագավառին պատկանող բառ, բառի իմաստ, բառի նշանակություն, բառի բովանդակություն, հոմանիշ, համանիշ, նույնանիշ և մի շարք այլ տերմիններ³⁵:

Որոշ տերմինների ըմբռնման միասնությունը բացակայում է անգամ իրենց՝ լեզվաբանության նոր բնագավառների մասնագետների շրջանում: Այսպես օրինակ, շարույթը լեզվաբանների մի մասը դիտում է որպես հնչյունաբանական, իսկ մյուս մասը՝ շարահյուսական տերմին: Շարահյուսական որոշ իմաստներով շարույթը-ը համընկնում է բառակապակցություն տերմինի հետ: Մի ուրիշ իմաստով այս տերմինները չեն համընկնում (81,163):

Նման երևույթի տարածում գտնելու պատճառներից մեկն այն է, որ նոր տերմինների գերակշռող մասը նախքան դիտա-

35 Մեզանում որոշ լեզվաբաններ (Ա. Սուքիասյան, Ն. Պառնասյան, Պ. Բեդիրյան) փորձել են ճշգրտումներ մտցնել վերոհիշյալ վերջին երեք տերմինների իմաստային գործածությունների մեջ:

կան լայն գործածութեան մեջ դրվելը, նախապես շին ունեցել կարգավորված մեկնաբանութիւնն և բնորոշում (սահմանում)։

Տերմինները՝ անորոշ իմաստով գործածվելու հետևանքն այն է լինում, որ լեզվաբանները հաճախ սկսում են չհասկանալ միմյանց։ Նման դեպքերում սխալմամբ այն պատկերացումն է ստեղծվում, թե իբր խոսքը նույն բանի մասին է, այնինչ, ըստ էութեան, հակառակն է լինում (81,163)։

ԼԵԶՎԱՐԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱ-ԻՄԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտութեան այս կամ այն բնագավառում գոյութիւն ունեցող տերմինների մեծ քանակը հարուստ նյութ է տալիս կառուցվածքա-հասկացական վերլուծութեան համար։

Քանի որ տերմինները համակարգեր են կազմում թե՛ կառուցվածքային (արտահայտութեան պլանում) և թե՛ հասկացական (բովանդակութեան պլանում) առումով, ուստի և այս կարգի ուսումնասիրութիւնների առանցքը պետք է կազմի տարբեր համակարգերի (համապատասխանաբար և ենթահամակարգերի) առանձնահատկութիւնների բացահայտումը։

Մասնագետները գտնում են, որ տարրեր կառույցների (բառակազմական, տերմինաբանական, հասկացական) առանձնացումը, որոշակի հասկացութիւններ բնորոշող տերմինների միատիպ կառույցների հետազոտութիւնը, տերմինների բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերութիւնների վերհանումը և նման կարգի մի շարք այլ հարցերի ճիշտ լուծումը ոչ միայն ունեն տեսական նշանակութիւն, այլ նաև՝ խիստ գործնական։ Փաստորեն, գիտական լեզվի բառակազմական օրինաչափութիւնների պարզաբանումը հետագայում նպաստում է տարրեր բնագավառների նոր տերմինների ստեղծման, ինչպես նաև եղած տերմինների կարգավորման ու միօրինակացման գործին։

Քանի որ տերմինները լեզվի բառապաշարի մի մասն են կազմում, ուստի և դրանց կազմութիւնն էլ ընդհանուր առմամբ ունի նույն բնույթը, ինչ որ համագործածական բառերինը։ Սակայն բառաստեղծութեան և տերմինակերտման միջև կա որոշ տարբերութիւն, որը պայմանավորված է մի շարք հանգամանք-

ներով: Այսպես, լեզվի ընդհանուր գործածական բառերի կազմությունը ավելի շատ (կամ ինչ-որ չափով) ունի տարերային բնույթ (իհարկե, տվյալ դեպքում բոլորովին էլ չեն անտեսվում առանձին գրողների, հեղինակների բառակերտման նորարարությունները), այն դեպքում, երբ տերմինների կազմությունը մեծ մասամբ ընթանում է գիտակցված, կազմակերպված ձևով: Ինչպես Գ. Վինոկուրն է նկատում, տերմինները ոչ թե «ի հայտ են գալիս», այլ «հնարվում», ստեղծվում են, երբ զգացվում է դրանց անհրաժեշտությունը (36, 24): Բայց, այնուամենայնիվ, տերմինների կազմությունը կատարվում է որոշակի լեզուներում հղած բառերի հիման վրա և անպայման դրանց բառակազմական կանոնների համաձայն: Հետևաբար, տերմինների կառուցվածքա-իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրության դեպքում, բնականաբար, սկստք է առաջնորդվել լեզվաբանների կողմից մշակված բառակազմական վերլուծության ընդհանուր հղանակներով:

Լեզվաբանները գտնում են, որ բառակազմական վերլուծության ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել քննության համաժամանակյա և տարժամանակյա մոտեցումների, ինչպես նաև լեզվի մակարդակների, բառակազմական կառուցվածքների բնույթի ու դրանց տեսակների և նման կարգի մի շարք այլ խնդիրների տարբերակման վրա:

Հայտնի է, որ բառակազմական վերլուծությունը կարելի է կատարել թե՛ տարժամանակյա և թե՛ համաժամանակյա տեսանկյունով: Առաջին դեպքում հետազոտության նպատակն է գլխավորապես պարզել լեզվի բառային կազմի հարստացման միջոցները, աղբյուրները (կամ աղբյուրներից մեկը): Երկրորդ դեպքում ուսումնասիրության հիմնական նպատակն է այս կամ այն լեզվի բառային միավորները (տվյալ դեպքում գիտության որոշակի բնագավառի տերմինները) դասակարգել կառուցվածքա-իմաստային առումով՝ ելնելով լեզվի զարգացման տվյալ ժամանակահատվածի՝ բառակազմական պրոցեսների օրինաչափություններից:

Հասկանալի է, որ նման խնդիրների պարզաբանման դեպքում տարժամանակյա և համաժամանակյա ուսումնասիրության հղանակները կարող են ինչ-որ տեղ մոտենալ միմյանց: Բայց այս հանգամանքը, իհարկե, բոլորովին էլ չի ժխտում դրանց տարբերակման անհրաժեշտությունը (17, 32—33):

Ուսումնասիրողների մեծ մասը տերմինակազմության վերլուծության ժամանակ իրավացիորեն առաջնությունը տալիս է երկրորդ մոտեցմանը: Բառակազմության (մանավանդ տերմինակազմության) համաժամանակյա ուսումնասիրության դեպքում չի կարելի ժամանակակից լեզվի բառակազմական համակարգի մեջ տեղափոխել ավելի վաղ շրջանում գոյություն ունեցող կոպերն ու հարաբերությունները: Այլ կերպ ասած, տերմինակազմության վերլուծությունը հստակորեն պետք է տարբերակվի ստուգաբանական մեկնություններից (հատկապես այն դեպքում, երբ եղած տվյալներով բացատրվում է բառի ժամանակակից կառուցվածքը) (24,65.73):

Վերլուծությունը կարելի է կատարել տարժամանակյա տեսանկյունով այն դեպքում, երբ մեզ հետաքրքրողը բառակազմության (կամ տերմինակազմության) զարգացման հիմնական օրինաչափություններն ու միտումներն են:

Այս կարգի հետազոտություններում, ինչպես նշվեց, կարևոր է վերլուծության բառային և բառակազմական մակարդակների տարբերակման հարցը: Եթե մեզ հետաքրքրում է տերմինների գոյացման կամ կուտակման (տվյալ դեպքում տերմինակազմության օրինաչափությունները այս հարցերի հետ չպետք է ուսումնասիրվեն) և դրանց աղբյուրների ու ուղիների որոշման հարցը (այսպես օրինակ, լեզվի ընդհանուր գործածական բառերի տերմինացման առանձնահատկությունների, ինչպես նաև այլ լեզուներից ու գիտության տարբեր բնագավառներից փոխառված տերմինների ուսումնասիրությունը), ապա թվում է, որ մենք գործ ունենք վերլուծության բառային մակարդակի հետ: Մնացած դեպքերում, երբ խոսքը լեզվի բառակազմական որոշակի միջոցների (եղանակների) և համապատասխանաբար դրանցով դրսևորվող (արտահայտվող) տերմինների տարբեր տիպերի և կաղապարների մասին է, ապա արդեն մենք գործ ունենք վերլուծության բառակազմական մակարդակի հետ: Ի դեպ, վերջինս անկասկած պահանջում է կաղապարման եղանակի կիրառում (22,158—159):

Հայտնի է, որ բառակազմության միևնույն միջոցով կարող են կազմվել տերմինների տարբեր տիպի կաղապարներ: Այսպես, ածանցմամբ կերտվում են ածանցավոր, բաբղ-ածանցավոր տերմինները, ինչպես նաև բաղադրյալ տերմինների առանձին բաղադրիչները: Բացի այդ, տերմինների միատիպ կառույցները

հաճախ կերտվում են բառակազմության մի քանի միջոցների զուգակցմամբ: Օրինակ, բաբդ-ածանցավոր, բաղադրյալ տերմին-նեռից յուրաքանչյուրի կազմությանը մասնակցում են բառակազմության ձևաբանական և շարահյուսական միջոցները: Հաշվի առնելով նման հանգամանքները տերմինակազմության վերլուծության ժամանակ նպատակահարմար ենք գտնում տարբերել մի կողմից տերմինակազմության եղանակները (միջոցները), իսկ մյուս կողմից՝ դրանցով դրսևորվող տերմինների բառակազմական որոշակի կաղապարները:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ գիտական տերմինների կազմության ժամանակ լեզվի բառակազմական ոչ բոլոր միջոցներն են միևնույն կերպ գործածվում, և բացի այդ, գիտության տարբեր բնագավառներ այս հարցում ինչ-ինչ առանձնահատկություններ են ցուցաբերում (այսպես, տեխնիկական տերմինաբանության մեջ գործածվող բառակազմական որոշ միջոցներ լեզվաբանականի մեջ բոլորովին չեն կիրառվում): Իսկ բառակազմական միջոցների կապը այս կամ այն հատուկ բնագավառի հետ կարող է ոչ միայն պայմանական, ավանդական լինել, այլ նաև՝ տրամաբանորեն հիմնավորված» (36,11):

Ուրեմն, տերմինակազմության վերլուծության կարևոր խնդիրներից են նաև տերմինաբանական առանձին համակարգերի կառուցվածքային, հասկացական, ինչպես նաև շարահյուսական կաղապարների առանձնացումը և դրանց կազմությանը մասնակցող բառակազմական այնպիսի միջոցների ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ ածանցումը, բարդությունը և կազմության շարահյուսական եղանակը:

Ինչպես ասվեց, առաջադրված խնդիրները զլխավորապես լուծվում են ժամանակակից լեզվաբանության մեջ լայն տարածում գտած կաղապարման եղանակով: Իսկ տերմինների տարբեր տեսակի կաղապարների վերհանման համար նպատակահարմար է կիրառել անմիջական բաղադրիչների վերլուծության եղանակը:

Պարզ է, որ ամենից առաջ հարկավոր է ի հայտ բերել տվյալ տերմինաբանությանը բնորոշ բառակազմական կաղապարները: Վերջիններս որոշվում են տերմինի կառուցվածքի ամբողջական միասնությամբ և բաղադրիչների փոխկապակցությամբ: Դրանք (բառակազմական կաղապարները) լեզվում հանդես են գալիս որ-

պես կառուցվածքային կաղապար, որի նմուշով կարելի է կերտել նույնատիպ կազմութիւն ունեցող տերմինների մի ամբողջ շարք:

Կաղապարներն առանց քերականական և հասկացական հատկանիշների բնութագրել հնարավոր չէ, քանի որ տերմինի շաղաղրիչները առանձնահատկութիւններ են ցուցաբերում հասկացութիւնների բնորոշման, խոսքի մասերի պատկանելության հարցում: Այս հանգամանքն էլ նկատի ունենալով՝ ընդհանուր կաղապարների մեջ առանձնացնում ենք տերմինների մի շարք մասնավոր կառույցներ:

Նման դեպքերում, բնականաբար, հիմք ենք ընդունում բառակազմական միջոցների, ինչպես նաև տարրեր կառույցների կենսունակության և կանոնավորվածության հատկանիշները, քանի որ առանց նման հանգամանքների հաշվառման հնարավոր չէ լեզվի բառակազմական համակարգի պատկերը ճիշտ ձևով ներկայացնել (24, 160—162):

Բառակազմական կաղապարի կենսունակութիւնը, պայմանավորված է ներլեզվական և արտալեզվական մի շարք գործոններով: Այսպես, եթե գիտության որևէ ճյուղի տերմինաբանության մեջ առանձնացվել է բառակազմական կաղապարների այնպիսի համակարգ, որի հիման վրա կարող են կաղմվել նույնատիպ կառույց ունեցող տերմիններ, նշանակում է, որ տվյալ կաղապարներն արդեն իսկ օժտված են պոտենցիալ կենսունակությամբ: Հոմանիշ կաղապարները, ինչպես հայտնի է, միմյանցից տարբերվում են կենսունակության տարբեր աստիճաններով (առավել կամ պակաս կենսունակությամբ օժտված կառույցներ): Այս դեպքում, բնականաբար, կարևոր դեր են խաղում կազմութիւնների քանակական տվյալները:

Բառակազմական կաղապարների կենսունակութիւնը կախված է նաև տերմինացվող հասկացութիւնների բնույթից, դրանց իմաստային առանձնահատկութիւններից և մի շարք այլ արտաքին գործոններից: Փաստորեն, նման հանգամանքներով է պայմանավորված կաղապարների գործառական կենսունակութիւնը:

Բառակազմական վերլուծության նման հիմունքներից ելնելով, փորձենք պարզել հայերեն լեզվաբանական տերմինների կազմության մի շարք օրինաչափութիւններն ու առանձնահատկութիւնները:

Տերմինների մեջ առանձնանում են երկու մեծ խումբ՝ 1) միաբառ կամ համադրական և 2) բաղադրյալ կամ վերլուծական

կառույցներ³⁶, Միաբառ կառույցների շարքն ենք դասում արմատական, բարդ, ածանցավոր, բարդ-ածանցավոր և բարդ-բաղադրյալ տերմինները:

ՊԱՐԶ (ՄԻԱԲԱՐ) ՏԵՐՄԻՆՆԵՐ

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Նման կառույց ունեցող տերմինները մյուսներից տարբերվում են նրանով, որ դրանց մեջ հնարավոր չէ ժամանակակից լեզվի տեսանկյունից առանձնացնել ինքնուրույն բաղադրիչներ: Փաստորեն, այս կարգի տերմինները կերտված են առանց բառակազմական այս կամ այն միջոցի մասնակցության: Հաշվի առնելով հիշյալ հանգամանքները, տերմինների այս տիպը դիտում ենք որպես ամենապարզ կառույց՝ անկախ դրանց առաջացման բնույթից:

Ժամանակակից հայ լեզվաբանական գրականության մեջ գործածվող արմատական տերմիններից են՝ ածանց, արմատ, բայ, բառ, բուն, դիր, դեմք, լեզու, կապ, կերպ, հոդ, հիմք, հոլով, շեշտ, սեռ, տառ, ոճ, վանկ և այլն:

Ինչպես բազմաթիվ հետազոտություններից, այնպես էլ ներկա ուսումնասիրությունից պարզվում է, որ նման կառույց ունեցող տերմինները շատ քիչ տոկոս են կազմում ամեն մի գիտության (այս դեպքում և հայ լեզվաբանության) տերմինաբանության մեջ: Այս երևույթը պայմանավորված է ներլեզվական և արտալեզվական մի շարք գործոններով: Նախ, որ պարզ բառեր այժմ չեն ստեղծվում (իսկ եղածն էլ քիչ է, և սրանց շնչին մասն է հանդես գալիս տերմինների դերում), և երկրորդ՝ տերմինների այս կառույցը գիտական բարդ հասկացություններ (ինչպես նաև դրանց իմաստային տարբեր խմբերը) արտահայտելու նույն կարողությունը չունի, ինչ մյուս տիպի կազմարարներով կառուցված տերմինները: Սակայն արմատական կառույց ունեցող տերմինները գործառական տեսակետից ունեն որոշ առավելություններ. ա-

36 Վերլուծական կառույց ունեցող տերմինները ռուսերեն մասնագիտական գրականության մեջ մեծ մասամբ որակվում են термины-составляющие (տերմին-բաղադրակազմիչ) անվանմամբ: Այս ընդհանուր կառույցի բնորոշման համար որոշ պայմանականությամբ գործածում ենք բաղադրյալ ավանդական տերմինը:

մենից առաջ, իրենց հակիրճությամբ դրանք բավարարում են գիտական տերմիններին առաջադրվող պահանջներից մեկը: Բացի այդ, նման կառույց ունեցող տերմինները (անկախ դրանց սակավաթիվ քանակից) գործածվում են մեծ հաճախականությամբ: Արմատական տերմիններն են, որ գործունե կերպով մասնակցում են մի շարք կառույցների ու համապատասխանաբար լեզվաբանական բազմաթիվ հասկացությունների բնորոշող տերմինների կազմությանը: Դրանք տարբեր կարգի կառույցներում մեծ մասամբ հանդես են գալիս գլխավոր բաղադրիչի դերում:

Տերմինների մնացած կառույցները, ինչպես հայտնի է, կերտված են բառակազմական այս կամ այն միջոցի մասնակցությամբ:

Քանի որ գիտական տերմինները, ինչպես ասվեց, օժտված են բնորոշիչ (սահմանող) գործառությամբ, ուստի դրանք որպես կանոն կազմվում են բառակազմական այնպիսի միջոցներով, որոնց հետ չի կապվում զգացական ոչ մի երանգավորում, արտահայտչականություն:

ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բարդությունը, սովորաբար, դասվում է բառակազմության բառա-շարահյուսական միջոցի³⁷ մեջ, նրա բաղադրիչների ճհարաբերությունը ստորադասական է. մասերից առաջինը ըստ իմաստի լինում է լրացում երկրորդի (ընդգծումները հեղինակինն են—Լ. Ղ.), այսինքն՝ բարդ բառի գլխավոր կամ հիմնական նշանակությունը երկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որևէ կողմից որոշում, լրացնում է երկրորդի իմաստը...» (1,201): Հնարավոր է, որ այդ կարգի հարաբերությունը առաջին հայացքից չերևա, բայց և այնպես այդ հանգամանքը բոլորովին էլ չի խոսում նման հարաբերության բացակայության մասին:

Պարզ է, որ տերմինների կազմությանը բարդության բոլոր միջոցները չեն կարող մասնակցել: Եվ բառաբարդումը որպես տերմինակազմության միջոց, հայերենի նման լեզվում, ածանցման

³⁷ Լեզվաբանները բառակազմության նման միջոցի տակ նկատի ունեն նոր բառերի կերտման այնպիսի եղանակը, որն իրականանում է բառային մի քանի միավորների միաձուլմամբ (24,287): Վերջինս արտահայտվում է կա՛մ առանձին (ինքնուրույն) բառով, կա՛մ էլ կապակցությամբ: Այսինքն, բառակազմության հիշյալ միջոցով կերտվում են ոչ միայն համադրական, այլ նաև վերլուծական կառույց ունեցող տերմիններ:

համեմատությամբ, չի դրսևորում իր բոլոր հնարավորությունները Այսպես, տերմինակազմությանը չեն կարող մասնակցել կրկնավոր, հարադիր և կցական բարդությունները: Իսկ եթե կան տերմիններ, որոնց մեջ պատմականորեն հնարավոր է գտնել բառակազմության հիշյալ միջոցների մասնակցությունը (բայց, ինչպես նշվեց, տերմինակազմության ժամանակակից վերլուծությունը չպետք է հանգեցվի բառերի ստուգաբանական քննությանը), ապա դրանք հատուկենտ են: Այսպես՝ հունարան դպրոցի կերտած քառքառ<բառ-բառ, հագագ<հադ-հագ տերմինները: Սակայն սկզբից դրանք ոչ թե տերմիններ են հղել, այլ՝ լեզվի ընդհանուր գործածական բառեր: Եվ այդ բառերը «...թարգմանիչն ինքը չի կազմել, այլ վերցրել է դասական հայերենից և նույնությամբ օգտագործել որպես տերմիններ» (76, 330): Ինչպես սրանց հարադրականությունն է մթազնված, այնպես էլ չեզոք տերմինի (ավելի ճիշտ բաղադրիչների)՝ կցականությունը: Դրանցից ոչ մեկն էլ ժամանակակից լեզվի տեսանկյունից չի գիտակցվում իբրև բարդությամբ կազմված տերմիններ:

Տերմինակերտման գործում բառակազմական այս կամ այն միջոցի մասնակցության յուրահատկությունը, հասկանալի է, որ առաջին հերթին պայմանավորված է ներլեզվական գործոններով, այսինքն, տվյալ լեզվի առանձնահատկություններով: Կ. Ա. Լեկովսկայան գտնում է, որ բարդ հասկացությունների արտահայտման համար այս կամ այն միջոցի տարածված լինելու հանգամանքը հնարավոր չէ բացատրել միայն իմաստաբանական առանձնահատկություններով (53, 155): Այսպես, բառաբարդումը հայերենում ռուսերենի համեմատությամբ լայն տարածում է գտել մի շարք պատճառներով, որոնք իհարկե, հիմնականում կապված են նրա կառուցվածքի տարբեր առանձնահատկությունների հետ:

Համեմատական-հակադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզվաբանական մի շարք հասկացություններ բնորոշող տերմիններ, որոնք ռուսերենում արտահայտվում են բառակապակցությունների միջոցով, հայերենում որպես կանոն կերտվում են համադրական կառույցներով: Օրինակ՝ лексический пучок — բառախումբ, словарная статья — բառահոդված, лексический пласт — բառաշերտ, языковая группа — լեզվախումբ, конец слога — վանկավերջ, первоначальное слово — սկզբնաբառ, падежная форма — հոլովաձև և այլն:

Հայտնի է, որ բարդ բառի իմաստը որոշվում է նրա բաղադրիչների իմաստով: Այստեղ կարևոր դեր ունի բաղադրիչների շարահարսությունը: Վերջին բաղադրիչը միշտ էլ արտահայտում է այնպիսի հասկացություն, որը սեռային է ամբողջ բարդ բառի արտահայտած հասկացության համեմատությամբ: Առաջին բաղադրիչը ցույց է տալիս բարդ բառով բնորոշված տեսակային դասի առանձնահատկությունները:

Բարդ տերմինների կառույցն ունի մի շարք առավելություններ: Նախ, որ «Իսկական բարդությունը ավելի բարձր ու վերացական մտածողության արգասիք է...» (4,153): Դրանով հնարավոր է լինում արտահայտել բարդ հասկացություններ: Երկրորդ, թարգմտելով ոչ միայն ընդհանրապես հեշտ է արտահայտել այդպիսի հասկացություն, այլև ավելի հեշտ է ապահովել դրա արտահայտման ճշգրտությունը, քանի որ բառային միավորների կապակցելիությամբ, փոխադարձաբար սահմանափակվում է նրանց բազմիմաստությունը» (53,35): Այսինքն, նման կազմությունները բավարարում են տերմինաբանության գիտական պահանջներից մեկը: Բառակազմական հիշյալ կաղապարը կենսունակ է և ունի կառուցվածքային կայուն համակարգ, քանի որ դրա նմուշով կերտվում են բազմաթիվ նոր բարդ տերմիններ:

Բառաբարգմամբ կերտվում են տերմինների բարդ և բարդ-ածանցավոր կառույցները (ի դեպ, վերջիններիս կազմությանը մասնակցում է նաև ածանցումը):

Բարդ բառ-տերմինների մասնավոր կաղապարները

Բարդ բառ-տերմիններին պատկանող մասնավոր կաղապարները կարելի է վեր հանել հենց այդ ընդհանուր կառույցը տարբեր մոտեցումներով քննելուց հետո:

Նախ սկսենք բարդ բառ-տերմինների վերլուծությունը ըստ բաղադրիչների քանակի միացության (նման հանգամանքը հաշվի է առնվում, քանի որ բաղադրիչների քանակը որոշակի դեր է խաղում տարբեր կարգի կառույցներում): Երկուսից ավելի բառերի կամ բառարմատների միջոցով կառուցված բարդ բառերը այնքան էլ բնորոշ չեն հայերենին և շատ քիչ են հանդիպում: Եթե լեզվի ընդհանուր գործածական բառերի մեջ նման կազմությունը ինչ-որ չափով առկա է, ապա լեզվաբանական տերմինների մեջ այն բոլորովին բացակայում է: Ուրեմն, հայերեն լեզվաբանական

բարդ բառ-տերմինների համար բնորոշ են երկանդամ կառույցները:

Պետք է նկատի ունենալ, որ բարդ տերմինների մեջ եղած բառերը (առանձին բաղադրիչները) կարող են հանդես գալ անփոփոխ և փոփոխված ձևով: Այս հանգամանքը հաշվի առնելով, լեզվաբանները բարդություն մեջ պայմանականորեն առանձնացնում են բառակազմության երկու տեսակ՝ բառաբարդում և հիմքաբարդում: Լեզվաբանական բարդ բառ-տերմինների կազմության համար բնորոշոր առաջին միջոցն է: Թվում է, որ նման կառույց ունեցող տերմինները ավելի հստակ են պատճառաբանված և ճիշտ են կողմնորոշում: Սա, իհարկե չի նշանակում, թե մյուսները պատճառաբանված չեն և ճիշտ չեն կողմնորոշում: Պարզապես այստեղ այդ հատկանիշների դրսևորման հստակության այն աստիճանը չկա, ինչ առաջին կարգի տերմինների մեջ:

Ըստ բաղադրիչների միացման միջոցի բարդ տերմինների մեջ առանձնանում են երկու տիպի կառույցներ՝ ճոճակապավոր և անճոճակապ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնորոշը հողակապավոր տերմիններն են: Վերջիններս բարդ տերմինների ընդհանուր թվի 88%-ն են կազմում, իսկ մնացած 12%-ը անհողակապ բարդություններն են³⁸, Այս երկու մասնավոր կաղապարներով կառուցված տերմիններից են՝ բաբբառ-ախումբ, բառ-ա-ցանկ, զուգ-ա-ծայն, ճնշյուն-ա-շարժ, հող-ա-կապ, ձայն-ա-կապ, մասնիկ-ա-խումբ, վանկ-ա-բուն, վերջ-ա-կետ, բայ-անուն, բառ-իմաստ, բն-իմաստ, կերպ-ածանց, ձայն-դուրձ, սոսկ-ածանց և այլն:

* * *

Նայած այն հանգամանքին, թե բարդ տերմինի բաղադրիչները որոշակի ինչ խոսքի մասերի են պատկանում, ըստ այդմ էլ առանձնանում են ձևաբանական հետևյալ տիպի կաղապարները՝ դոյական+դոյական (Գ+Գ), ածական+դոյական (Ա+Գ), թվական+գոյական (Թ+Գ), դերանուն+դոյական (Դ+Գ): Պարզ է, որ բարդ տերմինների այս մասնավոր կաղապարները չունեն

³⁸ Պարզ է, որ այս և մյուս կարգի հաշվումների ժամանակ կարող են թույլ տրվել որոշ անճշտություններ: Բայց քանի որ ուսումնասիրությունը աշխատել ենք հնարավորին չափ կատարել հարուստ նյութի հիման վրա, ուստի և այդ թվերը ընդհանուր առմամբ կարելի է ճիշտ համարել:

կենսունակության նույն աստիճանը և նույն կանոնավորվածութ-
յամբ հանդես չեն դալիս:

Տերմինների հիշյալ կառույցի մեջ կանոնավորապես դրսե-
վորվողը և տարածվածը Գ+Գ կաղապարն է: Բարդ տերմինների
գերակշռող մասը ունի նման կառույց: Այսպես օրինակ՝ բառ-ա-
պաշար, բառ-ա-ճողված, բառ-ա-ցանկ, բառ-իմաստ, լեզվա-
նյութ, բայ-ա-ճիմֆ, լեզվա-կառուցվածք, լեզվա-ընտանիք և այլն:

Ա+Գ կառույցը նույնպես տարածում ունի բարդ տերմիննե-
րի մեջ: Չնայած, որ նման կառույցով կազմված տերմինները շատ
քիչ են նախորդի համեմատությամբ, բայց, այնուամենայնիվ,
խոսքի մասերից երկրորդը ածականն է, որ գործուն կերպով մաս-
նակցում է այս կարգի լեզվաբանական տերմինների կերտմանը:
Նման կառույց ունեն զաղան-ա-վանկ, մանր-ա-կաղապար, մեծ-
ա-աառ, սոսկ-ածանց, ծածկ-ա-լեզու, կիս-ոլորտ և մի շարք այլ
տերմիններ:

Մնացած մասնավոր կաղապարներով բարդ տերմինների
կազմությունը այնքան էլ բնորոշ չէ և քիչ է հանդիպում լեզ-
վաբանության տերմինաբանական համակարգում: Այսպես, Թ+Գ
կառույց ունեցող տերմիններից կարելի է հիշատակել հետևյալ-
ները՝ երկ-բարբառ, եռ-ա-բարբառ, քառ-ա-բարբառ և մի քանի
այլ բարդություններ: Առավել քիչ տարածված են Դր+Գ կաղա-
պարով կազմված տերմինները. օրինակ՝ նույն-ամուսն, նույն-ա-
նիշ և այլն:

Մյուս խոսքի մասերի կամ բայահիմքերի և գոյականի միա-
ցությունից կազմված տերմինները հատուկենտ են և լրիվ անկեն-
սունակ:

* * *

Բարդ տերմինների մի այլ կարգի կաղապարները կարելի է
վեր հանել հաշվի առնելով այս կառույցի բաղադրիչների բնույ-
թը՝ ըստ տերմինների և ոչ տերմինների պատկանելության: Նման
հիմունքով բարդ տերմինների մեջ կարելի է առանձնացնել չորս
տիպի կաղապարներ: Դրանք պայմանականորեն կոչենք տեղմի-
նաբանական անունով: Բոլոր հնարավոր կաղապարներով էլ
կերտվում են լեզվաբանական տերմիններ: Այստեղ էլ, բնականա-
բար, հարկավոր է առանձնացնել բնորոշ և կանոնավորապես հան-

դեպ եկող կաղապարները ոչ բնորոշներից և հազվադեպ հանդիպողներին:

Բարդ տերմինների համար ամենից ավելի բնորոշը և տարածվածը $S+S$ կառույցն է³⁹, նման կառույցով են կերտված բառապատկեր, բառ-ապաշար, լեզվ-ա-ճյուղ, հեշյուն-ապատկեր, տառ-ա-նիշ, տառ-ա-ձև և շատ ուրիշ տերմիններ:

Մյուս երկու կառույցները՝ $S+S$ և $S+S$ համարյա ունեն կենսունակության և կանոնավորվածության նույն աստիճանը: Առաջին կառույցով կերտված տերմիններից են՝ բոլոր-ա-գիր, գլխ-ա-բառ, գաղտն-ա-վանկ, մեծ-ա-տառ, սոսկ-ածանց և այլն:

Երկրորդ կառույցն ունեն՝ առաջ-ա-դիր, զուգ-ա-ձև, հիմն-ա-ձև, ձայն-ա-նիշ, ձայն-դարձ և մի շարք այլ տերմիններ:

Բարդ տերմինների մեջ ավելի քիչ տարածում ունի այն կառույցը, որի երկու բաղադրիչներն էլ լեզվաբանական տերմիններ են ($S+S$): Այսպես օրինակ՝ բառ-ա-շեշտ, բայ-անուն, բառ-ա-հիմք, վանկ-ա-բուն, վանկ-ա-գիր և այլն:

Վերոթվարկյալ օրինակները ցույց են տալիս, որ բարդ տերմինի բաղադրիչները առանձին վերցրած կարող են բազմիմաստ լինել (մանավանդ, երբ բաղադրիչի դերում հանդես է դալիս լեզվի ընդհանուր գործածական բառ), բայց բարդ տերմինը ամբողջությամբ մենիմաստության հատկանիշ է ձեռք բերում (53,45):

Բարդ տերմինների բնորոշ հատկանիշներից է նաև տերմինաբանական շարքեր կազմելը (այսինքն, միևնույն բաղադրիչով տերմիններ կերտելու երևույթը): Օրինակ, տերմիններ, որոնք սկսվում են բառ բաղադրիչով՝ բառ-ա-հիմք, բառ-ա-շեշտ, բառ-ա-մասնիկ, բառ-ա-փունջ, բառ-ա-վերջ, բառ-ա-կազմ, բառ-ապաշար, բառ-ա-շերտ, բառ-ա-շարք և այլն: Գիր բաղադրիչով վերջացող տերմիններ՝ վանկ-ա-գիր, հեշյուն-ա-գիր, մեն-ա-գիր, բոլոր-ա-գիր և այլն: Գոյություն ունեցող շարքերի ընդլայնումը և բարդ տերմինների նոր շարքերի առաջացումը տիպիկ երևույթ է⁴⁰:

39 S -տերմին, S -ոչ տերմին: Ոչ տերմին արտահայտության տակ նկատի են առնվում թե՛ լեզվի ընդհանուր գործածական բառերը և թե՛ լեզվաբանության մեջ գործածվող գիտության այլ բնագավառների այն տերմինները, որոնք դեռևս չեն արմատացել լեզվաբանական տերմինաբանության մեջ:

40 Տերմինաբանական կաղապարների և շարքերի մասին ավելի հանգամանորեն կխոսվի բաղադրյալ տերմինների վերլուծության ժամանակ:

Այժմ անցնենք բառակազմության ձևաբանական միջոցի և համապատասխանաբար դրանով կերտված տերմինների տարբեր տիպի կադապարների վերլուծությանը:

Բառակազմության ձևաբանական ամենից ավելի կենսունակ և հարուստ միջոցներից մեկը ածանցումն է⁴¹:

Բառակազմության հիշյալ միջոցի՝ մյուսների նկատմամբ ունեցած առավելությունը չի սահմանափակվում սոսկ տերմինների կերտման քանակական կողմով: Բառակազմական ածանցներով (երբեմն նաև բառահարաբերական ձևությամբ) կազմված տերմինները համակարգման են ենթարկվում թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պլանում (կառուցվածքա-հասկացական առումով): Բացի այդ, նման կառույցներով կազմվում են տերմինաբանական տարբեր շարքեր՝ յուրաքանչյուրի համար իմաստային (հասկացական) բնորոշ առանձնատկություններով:

Դ. Ս. Լոտտեն կարևոր համարելով ածանցների դերը տերմինաբանության գիտականության ապահովման համար, գտնում էր, որ դրանք իրենց համակարգող հատկանիշի շնորհիվ, ընդգծում են հասկացությունների ընդհանրությունը: Դրանով իսկ, փաստորեն, ավելի դյուրին է դառնում բառակազմության նման միջոցով կազմված տերմիններով առաջնորդվելը (55,86): Այսինքն, ածանցական կազմություն ունեցող տերմինները առավելություն ունեն նաև կիրառական տեսակետից:

Հայտնի է, որ հիմնական ձևությամբ ընդհանուր գաղափարը կոնկրետանում է, երբ դրանց միանում են բառակազմական ածանցները: Վերջիններիս դերը մեծ է նաև տարբեր իմաստներ արտահայտելու տեսակետից: Ածանցները «ավելանալով բառին սկզբից կամ վերջից, բառի հիմնական նշանակությանը հաղորդում են այնպիսի նոր իմաստ, որն այլապես հնարավոր է արտահայտել միայն շրջաբանությամբ կամ նկարագրական եղանակով, իսկ շրջաբանությունը անհարիր է տերմինաբանությանը»:

⁴¹ Ածանցումը տարժամանակյա տեսանկյունով քննելուց հետո պարզվում է, որ այն հայ լեզվաբանական տերմինների ստեղծման ողջ ընթացքում (լեզվաբանության պատմության և լեզվի պատմության զարգացման տարբեր փուլերին համապատասխան) մեծ դեր է խաղացել և միշտ էլ կենսունակ է եղել:

ներ, որը գործ ունի առավելապես գոյականների, վերացական հասկացությունների հետ» (76,325)։

Ածանցման միջոցով կերտվում են տերմինների հետևյալ կարգի կառույցները՝ ա) տերմիններ, որոնց կազմությանը մասնակցում են միայն նախածանցներ, բ) տերմիններ, որոնց կազմությանը մասնակցում են միայն վերջածանցներ, գ) տերմիններ, որոնց կազմությանը միաժամանակ մասնակցում են թե՛ նախածանցներ և թե՛ վերջածանցներ։

Այժմ անցնենք այս կառույցների (Ա,Բ,Գ) քննությանը առանձին-առանձին։ Այստեղ, բնականաբար, մեզ պետք է հետաքրքրեն լեզվաբանական տերմինաբանության մեջ առանձնահատուկ դեր ունեցող ածանցները (կիրառության ոլորտի, իմաստի մասնագիտացման տեսանկյունից), ինչպես նաև հիշյալ կառույցներին պատկանող տերմինների որոշակի (մասնավոր) կաղապարները։

Նախածանցավոր տերմիններ (ածանցավոր տերմինների Ա կառույց)

Հայ լեզվաբանական տերմինաբանության մեջ, ինչպես հայտնի է, տերմինների այս տիպի (ընդհանրապես նախածանցների ու նախածանցավոր այլ բառերի) կերտման և դրանք կիրառության մեջ դնելու գործում մեծ ավանդ ունի հունարան դպրոցը։ Եվ ժամանակակից հայ լեզվաբանական գրականության մեջ գործածվող այս տիպի տերմինների մի մասը, փաստորեն, գալիս է հունարան դպրոցից։

Նախածանցների միջոցով տերմինների կազմությունը հայոց լեզվում շուրջ կանոնավորվածության և տարածվածության այն աստիճանը, ինչ վերջածանցավոր տերմիններին։

Ընդհանրապես հայ լեզվաբանական տերմինների կազմությանը մասնակցել են հետևյալ նախածանցները՝ անդ-, բաղ-, գեր-, ենթ-, դե-, մակ-, համ-, հակ-, նախ-, ներ-, շաղ-, շար-, պար-, փոխ-։ Եվ եթե հաշվի առնենք ածանցավոր տերմինների հրրորդ (նախածանցավոր-վերջածանցավոր) տիպը, ապա դրա կազմությանը մասնակցած նախածանցներից հիմնականում կարելի է առանձնացնել հետևյալները՝ ան-, ապ(ա)-, առ-, արտ-, բակ-, բաց-, հար-, հոմ-, ստոր-, տար-, վեր- և այլն։ Վերջիններս, փաստորեն, տերմինների կազմության ժամանակ հիմնա-

կանում միայնակ հանդես չեն գալիս, այլ միանում են վերջածանցավոր տերմիններին⁴²։

Պարզ է, որ ներկայումս վերոհիշյալ նախածանցներից ոչ բոլորն են կենսունակության և կանոնավորվածության նույն աստիճանով մասնակցում լեզվաբանական տերմինների կազմությանը։

Հիշյալ կառույցի լեզվաբանական տերմինների կազմության մեջ ամենից ավելի կանոնավորված կերպով հանդես են գալիս նախ-, ենթ- և մի ջարք այլ նախածանցներ։

Նախ-ը տերմիններ կազմելիս արտահայտում է հետևյալ իմաստները՝ 1. առաջ, առջևից, 2. նախքան, առաջ, փաստորեն, կարելի է ասել, որ այս նախածանցը արտահայտում է տարածական (տեղային) և ժամանակային իմաստ⁴³։

Նախանծանցավոր տերմիններին պատկանող այս մասնավոր կաղապարով (նախ+բառ կամ բառի մի բաղադրիչ) են կազմված և այժմ էլ կիրառվում են լեզվաբանական հետևյալ տերմինները՝ նախդիր, նախածանց, նախածե, նախալեզու, նախարայ և այլն։

Ենթ-ը արտահայտում է ստորադասության, տեղի գաղափար։ Այս մասնավոր կաղապարով (ենթ+բառ կամ բառի մի բաղադրիչ) կազմված տերմիններից այժմ ոչ բոլորն են կիրառվում։ Ներկայումս, բացի հին տերմիններից, կան նաև նորակազմություններ (տվյալ դեպքում համեմատությունը անց է կացվում հայոց լեզվի հին ջրջանի նկատմամբ)՝ ենթակա, ենթամե, ենթաբարձր, ենթաշերտ և այլն։

Ածանցավոր տերմինների Ա կաղապարի կազմությանը ավելի պակաս կանոնավորությամբ են մասնակցում հունարան դպրոցի կերտած մակ- և նամ- նախածանցները։ Այդ կարգի տերմիններից են՝ մակբայ, մակդիր, մակաշերտ (ինչպես նաև ևրբեմ-

42 Տերմինների այս կաղապարի և հետևապես դրանց կազմությանը մասնակցող նախածանցների մասին կիսովի առանձին։ Այստեղ կթննվեն միայն Ա կառույցի կազմությանը մասնակցող ածանցները։ Բացի այդ, կպարզենք, թե դրանք կանոնավորվածության ինչ աստիճան են ցուցաբերում տերմինների որոշակի կաղապարների (Ա կառույցին պատկանող) կազմության ժամանակ։

43 Մեր խնդիրը չէ պարզել յուրաքանչյուր նախածանցի ժազման պատմությունը, համապատասխանությունը հունարենի այս ու այն նախածանցներին կամ նախդիրներին։ Նման հարցերին շատ հայագետներ անդրադարձել են տարբեր առիթներով։ Տե՛ս օրինակ, վերջին տարիներս հրապարակված մե ուշագրավ՝ ուսումնասիրություն՝ 76, 134—152։

նի մականուն տերմինը), համանուն, համանիշ, համաբարբառ (թերևս համարմատ, համադաս տերմինարադարձիչները) և այլն:

Տերմինների այս կաղապարը կերտող ոչ կենսունակ նախածանցներից են բաղ-, դեր-, հոմ-, ներ-, շաղ- և այլն: Ինչպես հայտնի է սրանցով կազմված տերմինները հիմնականում գալիս են դեռևս հին ժամանակներից: Այս փաստից ելնելով կարելի է ասել, որ վերոհիշյալ ածանցները տերմինակաղմական շատ քիչ արժեք ունեն (ի դեպ, նույն երեույթը նկատվում է լեզվի ընդհանուր գործածական բառերի կազմության մեջ):

Վերոհիշյալ նախածանցներով կազմված տերմիններից են՝ բաղաձայն, դերանուն, դերբայ, հոմանիշ, ներկա, ներածանց, շաղկապ, տարագա և այլն:

Վերջածանցավոր տերմիններ (ածանցավոր տերմինների Ռ կառույց)

Նման կառույց ունեցող տերմինները լայն տարածում ունեն ածանցավոր կազմությունների մեջ⁴⁴:

Վերջածանցների միջոցով բառերի կազմության առավելությունը նախածանցների համեմատությամբ ակնառու կերպով դրսևորվում է գիտական տերմինների մեջ: Վերջանածանցները, ավելի հստակ, քան նախածանցները, համապատասխան բառը բնորոշում են ինչպե՛ս կառուցվածքային, այնպե՛ս էլ իմաստային տարբերակված (կոնկրետացված) հատկանիշներով: Փաստորեն, նախածանցներն ունեն սոսկ բառակազմական նշանակություն, այն դեպքում, երբ վերջածանցները բացի այդ պաշտոնից օժտված են որոշակի խոսքի մասեր կերտելու ընդունակությամբ (այսինքն ունեն խոսքի մասային արժեք):

Քանի որ լեզվաբանական տերմինների գերակշռող մասը գոյականներ կամ գոյականաբար կիրառված ածականներ են, ուստի և դրանց ռեաբիմաստները կոնկրետացել են վերջածանցների միջոցով: Այդ պատճառով էլ վերջածանցներով կերտված քերականական տերմինների թիվը զգալի չափով գերազանցում է նախածանցներով կերտվածներին» (76,326):

⁴⁴ Տերմինների այս տիպի կազմությունը (հետևապես, տերմինների մի մասը) գալիս է դեռևս հունարան դպրոցից և այն հայ լեզվաբանական տերմինաբանության պատմության ողջ ընթացքում նշանակալից դեր է խաղացել՝ անդրլեզվի այս համակարգը համալրելով նորանոր տերմիններով:

լեզվաբանական տերմինների կազմությանը մասնակցում են -ակ, -ական, -իչ, -իկ, -յուն, -ուդ, -վ/ած/վ/, -ություն, -ում, -ույթ և մի շարք այլ վերջածանցներ՝ ի դեպ, թվարկած ածանցներից մի քանիսը այլևս տերմինակազմական արժեք չունի, շնայած որ դրանցով կերտված տերմինները մինչև այժմ էլ կիրառվում են:

Տեսնենք, թե վերոհիշյալ վերջածանցներով կազմված տերմինները խոսքի մասերից որի՞ն (կամ որո՞նց) են պատկանում, ի՞նչ իմաստներ են արտահայտում (անպայման հաշվի առնելով դրանց կենսունակությունը և կանոնավորվածությունը): Դրանով իսկ վեր կհանենք այս կարգի տերմինների բնորոշ մասնավոր կաղապարները:

Լեզվաբանական տերմինների դերում, ինչպես ասվել է, խոսքի մասերից գերազանցապես կիրառվում են գոյականները և ածականները: Հետևաբար, լեզվում գոյություն ունեցող տարբեր խոսքի մասեր կերտող բազմաթիվ վերջածանցներից լեզվաբանական տերմինների կազմությանը մասնակցում են հիմնականում գոյականակերտ և ածականակերտ վերջածանցները: Առաջին կարգի վերջածանցներից են՝ -ած -ակ -յալ, -յուն, -ություն, -ում, -ույթ և այլն, որոնցով կերտվում է վերջածանցավոր տերմինների մի տեսակը (գոյական-տերմիններ):

Գ ո յ ա կ ա ն ա կ ե ր տ վ ե ր չ ա ծ ա ն ց ն ե ր ո վ կ ա գ վ ա ծ
տ Ե ր մ ի ն ե ր (գ ո յ ա կ ա ն-տ ե ր մ ի ն ե ր)

Գոյականը տերմինի դերում հանդես գալիս, կոնկրետացվում է, այսինքն, մի շարք իմաստներից թողնվում է միայն մեկը՝ որոշակին: Տերմինների դերում գոյականի գործածության լայն տարածում գտնելու երևույթը արտալեզվական գործոններից բացի պայմանավորված է նաև ներլեզվական գործոններով՝ տվյալ խոսքի մասի՝ ի տարբերություն մյուսների բառակազմական լայն հնարավորություններով (66):

Քանի որ լեզվաբանական տերմինների մեծ մասը բնորոշում է վերացական հասկացություններ, ուստի և այս տիպի տերմինների կազմությանը հայոց լեզվում ամենից ավելի հաճախակի մասնակցում է դեռևս հին ժամանակներից եկող -ություն (<ու-թիւն) վերջածանցը:

Տերմինների կազմության այս մասնավոր կաղապարով (բառ

կամ բառի մի բաղադրիչ+ություն վերջածանց) ընդհանրապես կտրտվում է ածանցավոր տերմինների գերակշռող մասը:

Բառակազմական հիշյալ կենսունակ ածանցը միանալով տարբեր խոսքի մասերին (բառերին կամ դրանց տարբեր բաղադրիչներին), կազմում է այնպիսի տերմիններ, որոնց բնորոշման հիմքում ընկած են հատկություն (ինչ-որ բանի հատկանիշ), դրություն, երևույթներ և նման կարգի այլ վերացական հասկացություններ: Ընդհանուր առմամբ այս մասնավոր կաղապարը կերտվում է լեզվաբանության բնագավառում եղած տերմինների (ինչպե՛ս պարզ, այնպե՛ս էլ ածանցավոր) հիմքի վրա: Դրանով իսկ այս կազմությունները, փաստորեն, կառուցվածքային առումով դառնում են պատճառաբանված: Եվ նման կարգի տերմինները բառակազմական մի ուրույն շարք են կազմում՝ ածանցականություն, բաւրաւայնություն, գրություն, եղանակավորություն, բեֆականություն, խոսողություն, կցականություն, հերթագայություն, ձայնեղություն, շփականություն, ուղղյալություն, վերջավորություն, ֆմայնություն և այլն:

Տերմինների այս տիպի կազմությունը միշտ էլ կենսունակ է եղել հայ լեզվաբանական տերմինաբանության զարգացման բոլոր փուլերում: Եվ այդ կենսունակությունն առավել ակնհայտ կերպով է ի հայտ գալիս ներկա ժամանակաշրջանում, քանի որ լեզվաբանական նոր տերմինների (իհարկե, ածանցավոր) գերակշռող մասը կազմվում է նման կաղապարով:

Բացի կենսունակությունից, տերմինների կազմության այս կաղապարը օժտված է կանոնավորվածությամբ (թե՛ որոշակի իմաստներ արտահայտելու և թե՛ հաճախակի հանդիպելու տեսակետից):

Գոյական-տերմինների կազմությանը կենսունակորեն և կանոնավորված կերպով մասնակցում է նաև-ու՛մ վերջածանցը: Բառ կամ բառի մի բաղադրիչ+ում վերջածանց կաղապարով կազմվում են լեզվաբանական տերմիններ, որոնք իմաստային տեսակետից բնորոշում են հասկացությունների մի առանձին խումբ (մեծ մասամբ երևույթներ և պրոցեսներ):

Երբ համեմատում ենք հիշյալ վերջածանցով կազմությունների քանակը, կենսունակության ու կանոնավորվածության աստիճանը հունարան դպրոցի և հետագա շրջանում կերտված լեզվաբանական տերմինների հետ ապա պարզ երևում է, որ -ումով կազմությունը ներկայումս ավելի է տարածում գտել:

Հայ լեզվաբանական գրականության մեջ հանդիպող այս կարգի տերմիններից են՝ բառացում, զեղչում, լրացում, խոնարհում, կախում, հովազում, հեշույթավորում, մասնիկավորում, շրթնայնացում, ռեպարում, շեգֆացում, սղում, ստորագում և այլն։

Եթե վերոհիշյալ վերջածանցները հայոց լեզվի և հայ լեզվաբանական մտքի զարգացման տարբեր փուլերում ունեցել են տերմինակազմական արժեք, ապա գոյականակերտ -ույթ ածանցը հիմնականում զուրկ է եղել այդ հատկանիշից։ Այն բառակազմական արժեք է ունեցել միայն լեզվի ընդհանուր գործածական բառերի շրջանակում։ Դրանով ժամանակին կազմվել են լեզվաբանական հատուկներ տերմիններ։

Բառ կամ բառի մի բազադրիչ-ույթ վերջածանց կաղապարով կազմված տերմինները կանոնավորապես սկսել են գործածվել խորհրդային շրջանի հայ լեզվաբանական գրականության մեջ։

Ինչպես ռուսերենում-ема (հին հուն.-μα)-ով, այնպես էլ հայերենում-ույթ-ով կազմված տերմինները նախապես արտահայտել են այլ իմաստ։ Այժմ -ույթ-ով կազմված տերմինները իմաստաբանական ընդհանրություն ունեն, համակարգված են։ Տերմինների կազմության մեջ հիշյալ վերջածանցի իմաստը սկսվել է փոխվել, փաստորեն, հեշույթ տերմինի գործածությունից հետո։

Ժամանակակից լեզվաբանության այսպես կոչված ույթ-ային տերմինաբանության (этимическая терминология, «eme» family of terms), որն արտացոլում է լեզվի նկատմամբ երկաստիճան մոտեցումը, հիմքում ընկած է լեզվի կառուցվածքի միավորների և նրանց՝ խոսքում կոնկրետ դրսևորման հակադրությունը (78)։ Փաստորեն, -ույթ վերջածանցը ցույց է տալիս լեզվական տարբեր միավորների կառուցվածքային բնույթը։ Այսպես օրինակ՝ հեշույթ, ձևույթ, բառույթ, գրույթ, ասույթ, աղծույթ, թեփույթ, իմաստույթ, կցույթ, հերթագայույթ, ներույթ, շրջույթ, տիրույթ, տրոհույթ, ֆերականույթ և այլն⁴⁵։

Այս կաղապարի կենսունակությունը ապացուցվում է այն փաստով, որ օտարլեզվյան բազմաթիվ տերմինների (իհարկե,

⁴⁵ Բնականաբար, հիշյալ կաղապարին լայնորեն է հատկացնել -ույթ-ով կերտված այն տերմինները, որոնց կազմությանը մասնակցում են նախածանցներ և մի շարք այլ բազադրիչներ։ Այսպես օրինակ՝ գեր-հեշ-ույթ, ձև-ա-հեշ-ույթ, բաղ-ա-դր-ույթ, շաղ-ա-հեշ-ույթ, ենթ-ա-հեշ-ույթ, ենթ-ա-իմաստ-ույթ և այլն։

որոշակի հասկացություններ բնորոշող) թարգմանության դեպքում որպես բառակազմական միջոց կանոնավորապես օգտագործվում է -ույթ վերջածանցը:

Ինչպես որ -ույթ-ով կազմության կաղապարը, այնպես էլ այլ կարգի լեզվաբանական տերմիններ կերտող բառ կամ բառի բաղադրիչ+ակ վերջածանց կառույցը տարածում է գտել և կենսունակություն ձեռք բերել ժամանակակից անդրլեզվում (իհարկե, սա նախորդներից ավելի քիչ տարածում ունի):

Այս կաղապարով կառուցված տերմինների բնորոշման հիմքում ընկած են լեզվաբանական այլ հասկացություններ:

Պարզ է, որ -ակ վերջածանցը լեզվաբանական տերմինաբանության համակարգում գործածվում է ոչ թե փաղաքշական, փոքրացուցիչ, այլ մյուս՝ առարկայացնող, գոյականացնող նշանակությամբ:

-Ակ-ն էլ տարբեր խոսքի մասերից (ինչպես և բայահիմք, բայարմատ) կազմում է վերջածանցավոր տերմինների վերոհիշյալ ընդհանուր կաղապարը՝ գոյական-տերմիններ (ի դեպ, այս վերջածանցը որոշ մասնակցություն ունի նաև «ածական-տերմիններ» կազմության գործում): Այսպես օրինակ՝ ամանակ, եղանակ, ժամանակ, ձևակ, լեզվակ, փոփոխակ, ճնշակ և այլն:

Գոյական-տերմինների ընդհանուր կաղապարը լրացնում են նաև -իչ վերջածանցով կազմությունները (հիշյալ ածանցով երբեմն կազմվում են «ածական-տերմիններ»): Այս մասնավոր կաղապարով (բառ կամ բառի բաղադրիչ+իչ վերջածանց) կազմված լեզվաբանական տերմինները շունեն կանոնավոր դրսևորում: Իշ վերջածանցով կազմված լեզվաբանական տերմիններից են՝ ճատկացուցիչ, ձևավորիչ, որոշիչ և այլն:

Գոյական-տերմինների մեջ մի այլ խումբ են կազմում -յալ (<հալ) մասնիկով կազմությունները⁴⁶: Ինչպես հայտնի է, այս մասնիկը ձևավորում էր գրաբարի անցյալ դերբայը: Բացի դրանից, այն դեռևս մեր լեզվի հին շրջանում հանդես էր գալիս իբրև բառակազմական ածանց և դրանով կերտվում էին նաև լեզվաբանական տերմիններ: Հիշյալ մասնիկը որպես տերմինակազմության միջոց ներկայումս անկենսունակ է: Դրանով կազմված լեզվաբանական տերմինները (իսկ դրանք շատ քիչ են) հիմնա-

⁴⁶-Ցալ մասնիկով կազմված որոշ տերմիններ՝ անցյալ, կառարյալ և այլն ունեն խոսքի մասային այլ արժեք (տվյալ դեպքում՝ ածականական):

կանում գալիս են հնուց, ժամանակակից այլ լեզվաբանության մեջ գործածվող այդ կարգի տերմիններից են՝ լրացյալ, հատկացյալ, ստորոգյալ, որոշյալ և այլն:

Գոյականակերտ մյուս վերջածանցներով (-որդ, -իկ, -յուն, -ած) լեզվաբանական տերմինների կազմությունը նույնպես չունի լայն տարածում: Այս ածանցներով կերտվել են շատ քիչ քանակությամբ լեզվաբանական տերմիններ: Այսպես օրինակ՝ ձևորդ, ձայնորդ, լծորդ (նման կազմություններն արտահայտում են ինչ-որ բանի մասնակցության գաղափար), մասնիկ, ճնշյուն, դարձված:

Ածականակերտ վերջածանցներով կազմված տերմիններ («ածական տերմիններ»)

Ասվեց, որ Ռ կառույցին պատկանող տերմինների մի խումբը կազմվում է ածականակերտ վերջածանցներով: Ի տարբերություն նախորդ կաղապարներով կազմված տերմինների (գոյական-տերմիններ), որոնք ունեն ինքնուրույն գործածություն, այս կազմությունները ընդհանուր առմամբ հանդես են գալիս բաղադրյալ կառույցների մեջ՝ կախյալ բաղադրիչի գերով: Այսպես, ուղղակյան, սահմանական և նման կարգի այլ տերմինները, փաստորեն կիրառվում են առանց երկրորդ բաղադրիչների՝ ճուշդ, եղանակ: Առանց մյուս բաղադրիչի, կարծես, այս կառույցը թերի է: Առանձին գործածվելու դեպքում (նման երևույթը պայմանավորված է տերմինաբանության գործնական պահանջներով՝ տնտեսման սկզբունքի հաշվառում, տերմինի հակիրճության հատկանիշի պահպանում) ածականակերտ վերջածանցներով կազմված տերմինները, փաստորեն, հանդես են գալիս փոխանվանաբար: Այսպես, գոյական, ածական, թվական և նման կարգի տերմինները, եթե գործածվում են կապակցության բաղադրիչների դերում, ապա դրանք ածականներ են, իսկ առանձին կիրառվելու դեպքում, ձեռք են բերում գոյականի արժեք:

Նկատի ունենալով վերն ասվածը, այս ընդհանուր կաղապարը (շառ կամ բառի մի բաղադրիչ + ածականակերտ վերջածանց) պայմանականորեն կարելի է կոչել «ածական-տերմիններ» անունով:

Ածականական կազմությունների մեջ ամենակենսունակ և կանոնավորապես հանդիպողը -ական վերջածանցով կերտված

տերմիններն են: Սա (բառ կամ բառի մի բաղադրիչ+ական վերջածանց) փաստորեն, «ածական-տերմիններին» ամենաբնորոշ և տարածված մասնավոր կաղապարն է, և դրանով կազմված տերմիններն են, որ մեծ մասամբ կարող են հանդես գալ առանձին կերպով՝ առանց երկրորդ բաղադրիչների: Հիշյալ ածանցով տարբեր խոսքի մասերից կազմվում են ածականներ, որոնք արտահայտում են մի շարք իմաստներ՝ հարաբերություններ, պատկանելություն, հատկանշային վերաբերություն և այլն:

Այս մասնավոր կաղապարի կանոնավորվածությունը կարելի է ցույց տալ հոլովական և բայի եղանակները բնորոշող տերմինների օրինակի վրա: Նման կարգի բոլոր տերմիններն էլ կերտված են -ական վերջածանցով. այսպես՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական, սահմանական, սլայմանական (ենթադրական), ըղծական, հաբկադրական, հրամայական:

Պարզ է, որ հիշյալ կաղապարին պատկանող կազմությունները միայն այս կարգի անվանումներով չեն սահմանափակվում: -Ական վերջածանցով են կերտված նաև լեզվաբանական մի շարք այլ հասկացություններ բնորոշող տերմիններ⁴⁷:

Վերջածանցներով կազմված տերմինների ամենաանկենսունակ և հազվագեղ հանդիպող կառույցը «մակբայ-տերմիններն» են (բառ կամ բառի բաղադրիչ+(ա)բար վերջածանց): Այդ տերմիններից այժմ գործածվում են միայն երկուսը՝ գրաբար, աշխարհաբար, որոնք վաղ կազմություններ են և կորցրել են մակբայական արժեքը: Սրանք փաստորեն, փոխանվանաբար են հանդես գալիս, այսինքն գոյականացված են⁴⁸:

Ածանցավոր տերմինների Բ կառույցի մասնավոր կաղապարների քննությունն էլ հաստատում է այն, որ ընդհանուր առմամբ լեզվաբանական տերմինների բնորոշման հիմքում ընկած են վերացական հասկացություններ և դրանց տարբերակված հատկանիշները: Այդ իսկ պատճառով գիտության հիշյալ բնագավառի «տերմինները կազմված են այդպիսի հասկացություններ արտահայտող խոսքի մասերից, գերազանցապես՝ գոյականներից ու ածականներից» (76,334):

47 «Ածական-տերմինների.. մյուս մասնավոր կաղապարների քննությանը չենք անդրադառնում, քանի որ դրանք մեծ մասամբ հանդես են գալիս ոչ թե առանձին, այլ՝ բաղադրյալ տերմինների մյուս անդամների հետ միասին:

48 Նման կաղապարով լեզվաբանական տերմինների կազմությունը հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում էլ անկենսունակ է եղել:

Նախածանցավոր-վերջածանցավոր տերմիններ
(ածանցավոր տերմինների Գ կառույց)

Տերմինների կազմության այս կառույցն ավելի կենսունակ և տարածված է, քան սոսկ նախածանցավոր տերմիններին:

Հիշյալ կառույցի կազմությանը դարձյալ կենսունակորեն և կանոնավորված կերպով մասնակցում են -ություն, -ում, -ույթ գոյականակերտ վերջածանցները: Այս կազմությունների մեջ էլ ընդհանուր առմամբ նկատվում է վերջածանցների կիրառության միօրինակություն, որն, ինչպես հայտնի է, ապահովում է տերմինաբանության գիտականությունը (համակարգայնության պահպանումը կառուցվածքա-հասկացական առումով):

Տվյալ դեպքում տերմինների կազմությանը ավելի շատ մասնակցում են նախածանցներ, քան թե վերջածանցներ: Բայց, ինչպես միշտ, այս դեպքում էլ վերջիններս ավելի կենսունակ և տարածված են:

Ան-, ապ-, համ- կենսունակ նախածանցներով էլ այժմ կերտվում են բազմաթիվ լեզվաբանական տերմիններ:

Ժխտալան և ախածանցներով կազմված
տերմիններ

Նման կառույց ունեցող տերմինները նպատակահարմար ենք գտնում առանձնացնել նախածանցավոր-վերջածանցավոր տերմինների մնացած մասնավոր կաղապարներից:

Ան- նախածանցով կազմված տերմինները արտահայտում են ինչ-որ հատկանիշի ժխտման գաղափար: Ժխտական այս նախածանցը հիմնականում միանում է -ություն վերջածանց ունեցող բառերին: Այս մասնավոր կաղապարը կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ ան նախածանց + բառ կամ բառի մի բաղադրիչ + ություն վերջածանց կամ էլ՝ ան նախածանց + ություն վերջածանցավոր բառ:

Պարզ է, որ այս կարգի տերմիններն էլ բնորոշում են լեզվաբանական վերացական հասկացություններ: Այսպես օրինակ՝ անկանոնություն, անմասնիկավորություն, անհամաձայնություն, անհնգնականություն և այլն: Լեզվաբանական աշխատությունների հիման վրա կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տերմինների կազմության այս կաղապարը նոր է սկսում կենսունակություն և կանոնավորվածություն ձեռք բերել:

լեզվաբանական տերմինաբանության համակարգում ան-
ժխտական նախաձեռնը վերջածանցավոր մյուս կազմությունների
հետ շատ քիչ է կցվում: Վերջին ժամանակներս կերտված տերմին-
ներից կարելի է հիշատակել անայլակ, անփոփոխակ և մի քանի
այլ նորակազմություններ:

Ապ(ա)- նախաձեռնը հիմնականում միանում է -աւ վեր-
ջածանցավոր բառերին: Այսպես օրինակ՝ ապ(ա)իմաստավորում,
ապ(ա)մասնիկավորում, սպ(ա)ծայնեղացում, ապ(ա)ռեգայնա-
ցում, ապ(ա)հնչոյթավորում, ապ(ա)սուլակնացում և այլն:

Ինչպես տեսնում ենք այս կարգի տերմինները, որպես կանոն,
կերտվում են լեզվաբանության մեջ գոյություն ունեցող տերմին-
ների (մասնիկ, շաղկապ, հնչոյթ, ձայնեղ և այլն) հիման վրա:
Նման կազմություններում, պարզապես, օտարվում է որևէ հատ-
կանիչ կամ հրկույթ:

* * *

Տեսնենք, թե ուրիշ ի՞նչ նախաձեռններով են կազմվում
ածանցավոր տերմինների Գ կառույցը:

Համ(ա)- նախաձեռնով կազմված տերմինների համար բնո-
րոշն այն է, որ այս կաղապարն էլ ձևավորվում է -ույթուն վեր-
ջածանցով: Հայ լեզվաբանական գրականության մեջ տարածված
այդ կարգի տերմիններից կարելի է հիշատակել մի քանիսը՝
համ(ա)դարձություն, համ(ա)ծայնություն, համ(ա)ժամանակու-
թյուն, համ(ա)դասություն, համ(ա)բանություն, համ(ա)սեռություն
և այլն:

Վերջին ժամանակներս ածանցավոր տերմինների Գ կաղա-
պարի կազմության մեջ կենսունակություն են ձևաբերել գեր-,
ենթ-, մակ(ա)- նախամասնիկները, որոնք գլխավորապես միա-
նում են -ույթ վերջածանցավոր տերմիններին: Այս մասնավոր
կաղապարով (գեր, մակ(ա), ենթ+բառ կամ բառի մի բաղադ-
րիչ+ույթ) կազմված է կառուցվածքային լեզվաբանության տեր-
մինների մի առանձին խումբը՝ գերհնչոյթ, գերձևույթ, գերշաղա-
հուսույթ, մակ(ա)հնչոյթ, մակ(ա)ձևույթ, ենթ(ա)հնչոյթ, ենթ(ա)-
գրույթ, ենթ(ա)ձևույթ և այլն⁴⁹:

49 Կառուցվածքային լեզվաբանության մեջ լայն տարածում գտած ենթ- բա-
ղադրիչի՝ 2.7.70-ի նշանակությամբ գործածությունը պրոֆ. էդ. Աղայանը հիմնա-
վորում է հետևյալ կերպ. «լեզվաբանական տերմինաբանության մեջ գործածվող

Տերմինների բառակազմական հիշյալ կաղապարի կազմությանը մասնակցում են նաև արտ-, ստոր-, փոխ- և մի շարք այլ նախածանցներ: Հիշյալ նախածանցներից յուրաքանչյուրով կազմված տերմինների կաղապարները կերտվում են տարբեր վերջածանցներով:

Արտ(ա)- նախածանց+բառ կամ բառի մի բաղադրիչ+գոյականակերտ վերջածանց կառույց ունեն արտ(ա)բերություն, արտ(ա)բերում, արա(ա)սանություն, սուտ(ա)սան(վ)ածք և մի շարք այլ տերմիններ:

Ստոր- նախածանցով և մի շարք տարբեր վերջածանցներով են կազմված հետևյալ կարգի տերմինները՝ ստորոգում, ստորոգելություն, ստոր(ա)դասություն և այլն:

Փոխ- նախածանց+բառ կամ բառի մի բաղադրիչ+վերջածանց կառույց ունեն հետևյալ տերմինները՝ փոխանունություն, փոխարեություն, փոխառություն, փոխարկում, փոխարկույթ և այլն:

Ածանցավոր տերմինների Գ կաղապարի կազմությանը մասնակցող մյուս նախածանցներով (առ-, բակ-, բաղ-, բաց-, դեր-, հար(ա)-, ներ-, նախ-, շար-, տար-, վեր-) կերտված տերմինները, ի տարբերություն լեզվի ընդհանուր գործածական բառերի, շատ քիչ են և, ինչպես նախածանցավոր տերմինների քննությունը ցույց տվեց, դրանց մի մասը անկենսունակ է: Թվարկված նախածանցներով և մի շարք տարբեր վերջածանցներով կազմված տերմիններից են՝ առդություն, բակառություն, բաղարկություն, բաղ(ա)ծայնություն, բաց(ա)հայտիչ, դերանվանացում, հար(ա)նմանություն, հար(ա)դություն, հար(ա)կրկնություն, ներմարմնավորում, նախ(ա)դասություն, շար(ա)նյուսություն, տարմնանություն, վերհնչույթավորում և այլն:

алло բաղադրիչին համապատասխանում է մեր այլ-ը, բայց մենք փոխարինում ենք ենթ-ով՝ ելնելով հետևյալ սկզբունքից. аллофона-ները, алломорфа-ները են որևէ իրավիճակում հնչույթի, ձևույթի ևն այլափոխությունները չեն, այլ մեկ վերացական բնիկանու հնչույթի, ձևույթի (ընդգծումները հեղինակին են—Լ. Ղ.) ևն տարբեր դրսևորումները, իրացումները (տե՛ս էՍ ԺՀՀԽ, 380): Ընդհանուր առմամբ այդպես էլ թարգմանվում և գործածվում են միջազգային տերմինները մեր լեզվաբանական գրականության մեջ՝ аллосинтаксема—ենթաշարժանություն, аллолексема—ենթաբառույթ, аллосема—ենթաիմաստույթ և այլն:

Ածանցավոր տերմինների Ա, Բ, Գ կաղապարների քննութ-
յունը ցույց տվեց, որ բառակազմության հիշյալ միջոցը լեզվա-
բանական տերմինների կերտման զործում մեծ կենսունակություն
է ցուցաբերում: Ածանցման մասին խոսելիս, պետք է նկատի ու-
նենալ, որ տերմինների (ինչպես և լեզվի ընդհանուր գործածական
բառերի) կազմությանը միևնույն ժամանակ կարող են մասնակցել
մի քանի ածանցներ: Փաստորեն, նման կազմությունները դրսևոր-
վում են «կրկնաածանցման» և «առածանցման» միջոցով: Այս բա-
նը հստակ կերպով երևում է, երբ տերմինների (կամ բառերի)
մեջ առանձնացնում ենք անմիջական բաղադրիչները: Այսպես
օրինակ՝ ածանց-ական-ություն, թեք-ական-ություն, կց-ական-ու-
թյուն, հոլով-ական-ություն, շփ-ական-ություն և նման կարգի
մի շարք տերմինների մեջ հանդես եկող առաջին ածանցը ածակա-
նակերտ է, իսկ երկրորդը՝ գոյականակերտ: Վերջին ածանցի մի-
ջոցով նման կազմությունները ձեռք են բերել գոյական-տեր-
մինների արժեք:

Տերմինների մի այլ խմբի մեջ գոյականակերտ վերջածան-
ցից առաջ հանդես է գալիս -այն ածանցը (սա ածականակերտ
ային վերջածանցի սղված ձևն է): Այսպես օրինակ՝ գրաբար-այն-
ություն, բարբառ-այն-ություն, ռեզ-այն-ություն, ֆմ-այն-ություն
և այլն: Փաստորեն, -այն-ը նման կառույցներում դրսևորվում է
կարգավորված ձևով, կառուցվածքային առումով մի առանձին
շարք է կազմում և միշտ էլ վերջածանցների հետ միասին արտա-
հայտում է որևէ հատկանիշի առկայության գաղափար:

Որոշ կարգի տերմինների մեջ գոյականակերտ վերջածանցից
առաջ հանդես են գալիս -ավոր և -աց բաղադրիչները: Օրինակ՝
հնչ-ույթ-ավոր-ում, խաչ-ավոր-ում, պաանեն-ավոր-ում, ռե-ավոր-
ում, բառ-այն-աց-ում, շրթն-այն-աց-ում, ֆմ-այն-աց-ում և այլն:

Երկուսից ավելի ածանց ունեցող տերմիններից են՝ ան-անց-
ող-ական-ություն, ան-հոգն-ական-ություն, ապ(ա)-սուլ-ական-
աց-ում, ապ(ա)-ծայն-ել-աց-ում, վեր-հնչ-ույթ-ավոր-ում և այլն:

Այս բոլորը՝ մի բառի (տերմինի) կազմության մեջ մեկից ա-
վելի ածանցների գործուն մասնակցությունը մեկ անգամ ևս վկա-
յում է, որ ածանցումը հայերենում տերմինակազմության շատ
բնորոշ, կենսունակ և կանոնավորապես դրսևորվող միջոց է:

Մինչև այժմ մենք քննում էինք լեզվաբանական տերմինների այն ընդհանուր տիպերը, որոնց կազմությանը մասնակցում էր բառակազմական միայն մեկ միջոց: Սակայն բարդ-ածանցավոր տիպի կազմությանը, փաստորեն, մասնակցում են բառակազմության երկու միջոցները (բարդություն և ածանցում) միաժամանակ:

Քանի որ ածանցման ու բարդության և հետևապես դրանցով կերտված տերմինների տարբեր տիպի կառույցների մասին մանրամասն խոսվել է, ուստի հիշյալ կաղապարով կազմված տերմինների քննությանը կանդրադառնանք համառոտ կերպով:

Նթե խոսքը ածանցման միջոցների օգտագործման մասին է, ապա կարելի է ասել, որ այս կարգի տերմինների մեջ գերակշռողը վերջածանցավոր կազմություններն են: Այս դեպքում էլ ամենից ավելի կենսունակությամբ և կանոնավորվածությամբ դործածվում են -ություն, -ում, -ական, -ային, -ույթ վերջածանցները: Օրինակ, արմատ-ա-կազմ-ություն, բառ-ա-կազմ-ություն, բազմ-իմաստ-ություն, զուգ-ա-ձև-ություն, նոր-ա-բան-ություն, հե-ա-բան-ություն, մի-ա-ձուլ-ություն, հեշյուն-ա-փոխ-ություն, տառ-ա-դարձ-ություն, վաճկ-ա-գր-ություն, բառ-ա-պատճեն-ում, մեն-ա-բարբառաց-ում, կիս-ա-շփ-ական, ձև-ա-հեշ-ույթ և այլն:

Բարդ-ածանցավոր տերմիններին երբեմն միանում է ան- ժխտական նախածանցը (որևէ հատկանիշի բացակայությունը արտահայտելու համար): Նման կազմությամբ տերմիններ շատ քիչ են պատահում՝ ան-լի-ա-ձայն-ություն, ան-մի-ա-թվ-ություն, ան-շեշա-ա-փոխ-ություն և այլն:

ԱԾԱՆՑԱՎՈՐ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԱՍՏԱՑԻՆ ԽՄՐԵՐԸ

Ածանցավոր (վերջածանցավոր, նախածանցավոր-վերջածանցավոր) և բարդ-ածանցավոր տերմինների վերլուծությունից պարզվում է, որ դրանց մեջ քիչ չեն այնպիսի տերմինները, որոնց կառուցվածքային այս կամ այն կաղապարին համապատասխանում է իմաստաբանական (հասկացական) որոշակի կաղապար: Այսպես օրինակ, տերմինների մեջ մի առանձին խումբ են կազմում լեզվաբանության բաժինների ու գիտակարգերի, լեզվական

միավորների ու գործողությունների, լեզվական հատկանիշների, երևույթների և պրոցեսների, լեզվական փոփոխությունների անվանումները, որոնցից յուրաքանչյուրն ընդհանուր առմամբ ունի բառակազմական որոշակի կաղապար:

Այսպես, լեզվաբանության բաժինների ու գիտակարգերի անվանումները կազմվում են բառ կամ բառի մի բաղադրիչ+բան (երբեմն՝ գիտ) բաղադրիչ+ություն վերջածանց կառուցվածքային կաղապարով⁵⁰:

Օրինակ՝ լեզվաբանություն, հնչյունաբանություն, հնչույթաբանություն, ձևաբանություն, ֆերականություն, դարձվածաբանություն, իմաստաբանություն, ստուգաբանություն, ինչպես նաև բանագիտություն, բարբառագիտություն, ռնագիտություն և այլն: Պարզ է, որ այս կարգի տերմինների իմաստի մասնագիտացման գործում իրենց դերն ունեն բան և գիտ (գիտություն) բաղադրիչները⁵¹:

Տերմինների մի այլ խմբում իմաստի մասնագիտացման դերով հանդես է գալիս գիր բաղադրիչը: Այսպես օրինակ, բառաբանագրություն, ուղղագրություն և այլն:

Հնչյունական հատկանիշների անվանումներն էլ կազմվում են բառ կամ բառի մի բաղադրիչ+ություն վերջածանց կաղապարով՝ ձայնավորություն, բաղաձայնություն, ձայնեղություն, խլություն, ռնգայնություն, շփականություն և այլն:

Հնչյունական երևույթները և պրոցեսները բնորոշող անվանումների համար հատուկ է բառ կամ բառի մի բաղադրիչ+ում վերջածանց կաղապարը: Հնչյունական երևույթներ են բնորոշում հետևյալ տերմինները՝ ձայնավորացում, բաղաձայնացում, մեմարաբառացում, երկբաբառացում, խլացում, ձայնեղացում, քավացում, փայնացում, շնչեղացում և այլն:

50 Ռուսերենում գիտության հիշյալ բաժինների ու բնագավառների տերմինավորումը կատարվում է հետևյալ նշանակներով: Այսպես, *грамматика* բաղադրիչ+հիմք+իկա→*грамматика*, *орфоэпика*→*орфоэпика*, *фонетика*→*фонетика*, *лексикография*→*лексикография*, *морфология*→*морфология*, *орфография*→*орфография*, *лексикография*→*лексикография*:

51 Առաջին բաղադրիչը ի տարբերություն երկրորդի, թվում է, որ չպետք է դիտել որպես առանձին բառ, քանի որ այն ժամանակակից լեզվում հանդես է գալիս բառակազմական ածանցի դերով: Իսկ քանի որ երկրորդի իմաստը շոշափելի է, ուստի այն համարում ենք բառի մի առանձին բաղադրիչ և հետևապես դրանով կազմված տերմինները մտնում ենք բարդ-ածանցավոր կառույցի մեջ:

Օրինակներից երեւում է, որ նման կարգի անվանումներով ընդհանուր առմամբ բնորոշվում են հնչյունների այս կամ այն տարատեսակների հիմնական հատկանիշների՝ մի այլ հատկանիշների փոխանցման (վերածման) երևույթները:

Հնչյունական պրոցեսներ (այդ թվում դրանց այս ու այն պահի) են բնորոշում անցում, շփում, հպում, լայնացում, նեղացում, կոշտացում և նման կարգի մի շարք այլ տերմիններ:

Հնչյունական փոփոխությունները բնորոշող անվանումները ձևավորվում են բառ կամ բառի մի բաղադրիչություն (երբեմն էլ ում) վերջածանցով՝ առնմանություն (առնմանում), տարեմանություն (տարեմանում), համաբանություն, դրափոխություն, հերթագայություն, ամփոփում, անկում, հարակցում, սղում և այլն:

Նրեւում է, որ կառուցվածքային հիշյալ կաղապարները բացարձակապես մենիմաստ չեն: Նույն բանը չի կարելի ասել, ինչպես տեսանք, բառ կամ բառի մի բաղադրիչություն կառույցի մասին:

ԲԱՐԴ-ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Լեզվաբանական տերմինաբանության համակարգում (ինչպես նաև գիտության այլ բնագավառներում) եղած հետևյալ կարգի տերմինները՝ բառ-արտահայտություն, բառ-հասկացություն, բառ-նախադասություն, հիմք-լեզու և այլն, նպատակահարմար ենք գտնում առանձնացնել մյուսներից, հաշվի առնելով դրանց ինչպե՛ս կառուցվածքային, այնպե՛ս էլ իմաստաբանական առանձնահատկությունները: Տերմինների հիշյալ կառույցի բնորոշման համար գործածվել է բարդ-բաղադրյալ (сложно-составные) տերմիններ անունը:

Մասնագետներն (Անդրեև, Զասթրոֆինսկի) այս կարգի տերմինների առանձնահատկություններից մեկն համարում են այն, որ դրանց բաղադրիչներից յուրաքանչյուրը կարող է մյուսի ուրոշիչը լինել (30,122):

Տերմինների դիտարկվող տիպի մեջ բաղադրիչները որպես կանոն երկու գոյականներ են, այն դեպքում, երբ բաղադրյալ կառույցներում ինչպես կտեսնենք, դրանք կարող են լինել տարբեր խոսքի մասերի զուգորդություններ: Այստեղից հետևում է, որ բարդ-բաղադրյալ տերմինները հնարավոր չէ հատկացնել ո՛չ

բառերին (ձևաբանական բնույթի տեսանկյունից) և ոչ էլ՝ բառակապակցություններին (շարահյուսական, երբեմն նաև ձևաբանական բնույթի տեսանկյունից)։ Այսինքն, այս կարգի տերմինները բառային հատուկ կարգ են, որոնք միջակա դիրք են դրավում բառերի և բառակապակցությունների միջև։ Եվ քանի որ տերմինների հիշյալ աիպը իր մեջ ներառում է երկու հիմք ունեցող բառախումբ, ուստի Անդրեևը և Զամբրովսկին նպատակահարմար են գտնում այն կոչել երկհիմք բարդություններ (двухосновные сложения) կամ էլ երկհիմքեր (двухосновники) անուններով (30, 128—129)։

Ի դ՛հայ, այս կարգի տերմինների ընդհանուր քանակը լեզվաբանական տերմինաբանության մեջ չնչին տոկոս է կազմում։

ԲԱՂԱԴՐՅԱԼ (ԲԱՌԱԿԱՊԱՑԱԿԱՆ) ՏԵՐՄԻՆՆԵՐ

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՆՈՐՈՇՈՒՄԸ

Բաղադրյալ տերմինները մասնագիտական դրականության մեջ բնորոշվել են միանգամայն տարբեր հիմունքներով։ Տերմինների այս տիպը լեզվաբանները նույնացնում են՝ ա) սովորական ազատ բառակապակցություններին, բ) դարձվածաբանական միավորներին, գ) միաբառ տերմիններին կամ էլ տարբերելով դրանցից, դիտում են իբրև լեզվական առանձնահատուկ տարր։

Այսպես, բաղադրյալ տերմինների և ազատ բառակապակցությունների միջև եղած կառուցվածքային և քերականական հատկանիշների ընդհանրությունից ելնելով լեզվական հիշյալ միավորները որոշ մասնագետներ նույնացնում են միմյանց։ Բայց, ինչպես մասնագետների մի այլ խումբն է գտնում, բաղադրյալ տերմիններն օժտված են մի հատկանիշով, որ չունեն ազատ բառակապակցությունները։ Դրա էությունն այն է, որ հիշյալ կարգի տերմիններն ճշգրտակ են պատրաստի տեսքով վերարտադրվելու։ Սակայն վերջին արտահայտությունը մասնագիտական դրականության մեջ զործածվում է ոչ այնքան հստակ ձևով։ Փաստորեն, տվյալ դեպքում լեզվաբանները նկատի ունեն այն հանգամանքը, որ բաղադրյալ տերմինները խոսքի մեջ կարող են հանդես գալ կրկնելիությամբ՝ կա՛մ անփոփոխ շրջապատում, կա՛մ անփոփոխ ձևով (44, 9—10)։

Լեզվաբանների մի մասն էլ (Օ. Ս. Ախմանովա, Կ. Ա. Լևկով-սկայա, Ս. Դ. Բերեսնե, Մ. Ի. Զախարովա և ուրիշներ), ինչպես ասվեց, բաղադրյալ տերմինները դասում է դարձվածաբանական միավորների շարքը, հաշվի առնելով դրանց իմաստային հատկանիշների ընդհանրության ինչ-որ կողմերը (7,169) (17,35) (33,126—136) (14,29)։ Այսպես, Օ. Ս. Ախմանովան բոլոր բաղադրյալ տերմինները դիտելով իջրև դարձվածաբանական միավորներ, տերմինի տակ հասկանում է «ընդհանրապես յուրաքանչյուր բաղադրյալ անվանում» (7,171—172)։ Փաստորեն, այս տեսակետն է պաշտպանում նաև Ս. Դ. Բերեսնեը, գտնելով, որ ըստ էության միայն բառը կարող է լինել տերմին, իսկ բառակապակցությունը տերմինաբանական համակարգում հանդես է գալիս ոչ թե տերմինի, այլ՝ դարձվածաբանական միավորի դերով (33,133—134)։

Ակադ. վ. Վինոգրադովը գտնում է, որ իբրև տերմին հանդես եկող բառային ամբողջական խմբերը (այսինքն, անվանման գործառնություն ունեցողները) պետք է առանձին դիտարկվեն դարձվածաբանական միավորներից (10,25)։

Դարձվածաբանական և ոչ դարձվածաբանական կապակցությունները սահմանադատելիս, Բ. Ա. Լարինն ամենայն որոշակիությամբ ընդգծում է բաղադրյալ տերմինների ոչ դարձվածաբանական բնույթը։ Նա գտնում է, որ դրանք ավելի շատ մոտ են բառակապակցություններին, քան թե դարձվածաբանական միավորներին (15,210)։

Բաղադրյալ տերմինների՝ դարձվածաբանական միավորներին պատկանելու հարցին Ս. Ի. Օժեգովը միանգամայն բացասական պատասխան է տալիս։ Նա գտնում է, որ բաղադրյալ տերմինները այնպիսի բառակապակցություններն են, «որոնք արտացոլում են ոեալ իրականությունը այն ձևով, ինչպես որ այդ իրականությունը ներկայացվում է. իմացության որոշակի համակարգում» (19,51—52)։ Հիշյալ միավորները լեզվական տեսանկյունից տարբերելով, Օժեգովը նշում է, որ բաղադրյալ տերմինները «պահպանում են որոշյալի և որոշչի հարաբերությունների բոլոր հատկանիշները, սեռի և տեսակի հարաբերությունները» (19,52)։ Այս նա ավելացնում է, որ բաղադրյալ տերմինները կարելի է դարձվածաբանական միավորներ համարել միայն այն դեպքում, եթե դրանք դիտվում են ընդհանուր լեզվում և ոչ թե տերմինաբանական համակարգերի շրջանակում (19,52)։

Ե. Ն. Տոլիկինյան և Տ. Ի. Սուդատովյան բաղադրյալ տերմինները և դարձվածաբանական միավորները քննելիս, գտնում են, որ արտաքին նմանությունը բոլորովին էլ հիմք չի տալիս բառային համակարգի տարբեր մակարդակի միավորները միմյանց նույնացնելու (71,171), Տերմինների քննվող տիպը կայուն, անբաժանելի կապակցությունների մեջ իրենից ներկայացնում է մի առանձնահատուկ տարատեսակ (94,46):

Բաղադրյալ տերմինները և դարձվածաբանական միավորներն առանձնացնելիս թվում է, որ հիմնականում պետք է առաջնորդվել իմաստաբանական չափանիշով:

Իմաստային առումով հիշյալ կարգի միավորները տարբերվում են միմյանցից, քանի որ դրանց հիմքում ընկած հասկացությունները շունեն միևնույն բնույթը: Ի տարբերություն դարձվածաբանական միավորների, որոնք արտահայտում են աշխարհի պատկերավոր նկարագիրը, բաղադրյալ տերմինները (ինչպես և մյուս կարգի տերմինները) հիմնականում օժտված են բնորոշիչ հատկանիշով և իրենց որոշակի տեղն ունեն այս կամ այն բնագավառի տերմինաբանական համակարգում: Բնորոշիչ հատկանիշի շնորհիվ բաղադրյալ տերմինները հանդես են գալիս որպես անվանում գործածվող լեզվական նշան, մի բան, որ օժտված չեն դարձվածաբանական միավորները:

Տերմինաբանության խնդիրներին վերաբերող աշխատանքների մեծ մասում միտում է նկատվում բաղադրյալ տերմինները հետազոտել միաբառ տերմինների հետ՝ որպես միևնույն կարգի երևույթ: Ճիշտ է, բաղադրյալ տերմինները որոշ ընդհանուր գծեր ունեն միաբառ տերմինների հետ, բայց այնուամենայնիվ տերմինների այդ երկու տիպերի միջև կան նաև զգալի տարբերություններ:

Մասնագետները գտնում են, որ անհրաժեշտության դեպքում բաղադրյալ տերմինները, պարզ տերմինների նման, ամեն անգամ նորից չեն ստեղծվում, այլ պատրաստի վիճակով պահպանվում են դիտության ու տեխնիկայի տվյալ ճյուղի բառապաշարում: Խոսքի պրոցեսում չլինելով բառերի միացման արդյունք, դրանք խոսքի մեջ ներմուծվում են պատրաստի տեսքով և պարզ, միակազմ տերմինների հետ գործառում են հավասար հիմունքներով (64, 162):

Ասվածից հետևում է այն, որ բաղադրյալ տերմինները չպետք

է նույնացնել ո՛չ ազատ բառակապակցութիւններին, ո՛չ դարձ-
վածաբանական միավորներին, ո՛չ էլ միաբառ տերմիններին, այլ
դրանք պետք է դիտել բառային մակարդակի մի առանձին միա-
վոր:

* * *

Միաբառ և բաղադրյալ տերմինների գնահատման հարցում
ոմանք նախապատվութիւնը տալիս են առաջին տիպի կառույց-
ներին, իսկ մյուսները՝ երկրորդներին:

Գնահատման դեպքում, թվում է, որ լավ կլինի հաշվի առնել
հետևյալ հանգամանքները՝ նախ, թե տերմինների ո՞ր տիպի
կառույցներն են բնորոշ գիտութեան տվյալ ճյուղի տերմինաբա-
նութեան համար և ապա՝ այդ տարածված տիպերը ի՞նչ առավե-
լութիւն ունեն: Պարզ է, որ այս դեպքում արտալեզվական գոր-
ծոններից բացի պետք է հաշվի առնել նաև ներլեզվական գոր-
ծոնները, այսինքն, որոշակի լեզուների օրինաչափութիւնները՝
բառակազմական միջոցների օգտագործման հնարավորութիւննե-
րի յուրահատկութիւնները: Լեզուների մի մասը տերմինների
որոշ խումբը արտահայտում է բառակապակցութեամբ, իսկ մյուս-
ները հնարավորութիւն ունեն այդ նույն տերմինների հիմքում
ընկած հասկացութիւնները բնորոշել բառաբարդութեան միջո-
ցով (միաբառ տերմիններով): Բայց, այնուամենայնիւ, բաղադ-
րյալ տերմինները մեծ թիւ են կազմում տարբեր լեզուների տեր-
մինաբանական համակարգերի մեջ: Փաւտորեն, ժամանակակից
տերմինաբանական համակարգերի բնորոշ գիծը՝ վերլուծականու-
թեան միտումն է (այսինքն, բաղադրյալ անվանումների կառու-
ցումը):

Գիտական լեզվում նման տիպի տերմինների տարածված
լինելը օրինաչափ և բնական է: Դրանց գործածութեան անհրա-
ժեշտութիւնը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:
Նախ, որ տերմինների մեջ այս կառույցը առանձնանում է իր
բացառիկ համակարգայնութեամբ: Երկրորդ՝ այդ ուղիով նշա-
նակալից կերպով ընդլայնվում է արդեն իսկ հայտնի նյութի հի-
ման վրա նոր տերմինների կազմութեան հնարավորութիւնը
(36,45): Բացի դրանից, բաղադրյալ տերմիններով (ինչպես նաև
բարդ տերմիններով) է, որ հնարավոր է լինում արտահայտել բարդ
հասկացութիւն:

Տերմինների այս տեսակի տարածված լինելը ըստ Ե. Ն. Տոլիկինայի պայմանավորված է տերմինաբանական համակարգերում առկա հասկացական հարաբերությունների գերակշռող լինելու հանգամանքով (72, 44—45)։

Վերջապես, տերմինների քննարկվող տիպի տարածվածությունը պայմանավորված է նաև կիրառական գործոնով։ Հայտնի է, որ գիտական համակարգերում կան տերմիններ, որոնց բաղադրիչները հնարավոր չէ զեղչել (այսինքն, ամբողջ կապակցությունը անհնար է միաբառ տերմինով արտահայտել)։ Այս դեպքում, ինքնըստինքյան պարզ է, որ բաղադրյալ կառույցը պետք է լինի համապատասխան տերմինի արտահայտման ամենահարմար ձևը։

Ժամանակակից հայ լեզվաբանական տերմինաբանության ուսումնասիրությունը նույնպես ցույց տվեց, որ հիշյալ բնագավառի տերմինների գերակշռող մասը (ամբողջ տերմինների ընդհանուր թվի 70%-ը) արտահայտվում է բաղադրյալ կառույցներով։

Ինչպես որ բարդ տերմինների բնորոշ կաղապարներն առանձնացնելիս հիմք ընդունեցինք բաղադրիչների քանակը, դրանց խոսքի մասային արտահայտությունը ու տերմինների և ոչ տերմինների պատկանելությունը, այնպես էլ տվյալ դեպքում հաշվի կառնենք հիշյալ հանգամանքները։

Ըստ բաղադրիչների քանակի բաղադրյալ տերմինները ստորաբաժանվում են երկանդամ, եռանդամ և բազմանդամ կառույցների⁵²։

ՆՐԿԱՆԴԱՄ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բաղադրյալ տերմինների երկանդամ կառույցը տերմինաբանական համակարգերում ունի կանոնավոր դրսևորում։ Դրանով կազմված տերմինները ամենից ավելի մեծ թիվ են կազմում (բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 81%-ից էլ ավելին, իսկ ամբողջ տերմինների ընդհանուր թվի 58%-ը)⁵³։

Տերմինների բոլոր տիպերի մեջ համակարգայնացնող հատկանիշով ամենից ավելի օժտված է բաղադրյալ տերմինների երկանդամ կառույցը, որի մի բաղադրիչը ընդհանուր է որոշ

⁵² Բաղադրյալ տերմինների մեջ իրրե բաղադրիչ հանդես եկող բարդ տերմինները տվյալ դեպքում դիտվում ենք որպես մեկ բառ։

⁵³ Նույն երևույթը նկատվում է նաև գիտության տարրեր բնագավառների, ինչպես նաև այլ լեզուների տերմինաբանական համակարգում։

կարգի տերմինների հետ, իսկ մյուսը ծառայում է հասկացությունների համակարգում իր տարբերիչ հատկանիշների բնութագրման համար (36, 38)։

Երկանդամ կառույցները բաղադրյալ տերմինների մեջ հիմնական, «միջուկային» են, քանի որ դրանց հիման վրա կարելի է կերտել եռանդամ և քառանդամ կազմություններ։

Երկանդամ բաղադրյալ տերմինների ձևաբանական կաղապարները

Երկանդամ բաղադրյալ տերմինների ձևաբանական կաղապարների մեջ Ա+Գ կառույցն է ամենից ավելի կենսունակը և կանոնավորապես դրսևորվողը։ Նման կազմությունները երկանդամ բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 80%-ից էլ ավելին են³⁴։

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ ածականները բաղադրյալ տերմինների ձևավորման գործում մեծ դեր են խաղում։ Այս կառույցներում ածական—բաղադրիչները մեծ մասամբ լեզվի ընդհանուր գործածական բառեր են, քան թե տերմիններ։ Իսկ իբրեւ բաղադրիչ գործածվող ածական-տերմինները, փաստորեն, ոչ այլ ինչ են, եթե ոչ գիտության տվյալ ճյուղի մեջ գոյություն ունեցող համապատասխան գոյական-տերմինների ածականական կիրառություններ։

Ձևաբանական հիշյալ կաղապարի կենսունակության և տարածվածության բարձր աստիճանը պայմանավորված է ոչ միայն ներլեզվական, այլ թերևս ավելի շատ արտալեզվական գործոններով՝ լեզվաբանության մեջ եղած տերմինացվող հասկացությունների բնութիւնով։

Ա+Գ կաղապարով կազմված տերմիններից են՝ անվանական բառակապակցություն, բաց վանկ, գերադաս նախադասություն, դերբայական դարձված, երկաւ երկրաբան, ժխտական

³⁴ Այս դեպքում էլ մեր տվյալները համեմատեցինք այլ լեզուների ինչպե՛ս լեզվաբանական, այնպե՛ս էլ գիտության տարբեր ճյուղերի տերմինաբանությանը նվիրված մի շարք հետազոտությունների արդյունքներին, որից և պարզ դարձավ, որ տարբեր համակարգերում ամենից տարածվածը Ա+Գ կառույցն է։ Ուրեմն, կարելի է ասել, որ այն երկանդամ բաղադրյալ տերմինների ամենաբնորոշ և կենսունակ ձևաբանական կաղապարն է, և դրանով կազմված տերմինները առավել կանոնավորվածությամբ են հանգես գալիս տերմինաբանական համակարգերում։

մասնիկ, իսկական կապ, լեզվական մակարդակ, խառը հոլովում, կայուն շեշտ, հնչյունական համակարգ, ներքին թեփում, ուղղյալ դեֆուզիոն, ուժեղ բաղաձայն, փակ վանկ, օժանդակ բայ և այլն:

Հիշյալ կառույց ունեցող բաղադրյալ տերմինների մեծ ածականը բնութագրում է տվյալ հասկացությունը: Տարաբնույթ կապերի արտահայտման դեպքում գոյականը բնորոշում է ընդհանրացնող հասկացություն (սեռային), իսկ ածականը՝ այդ հասկացության տարբերիչ հատկանիշը (այս կամ այն տեսակային դասակարգողական հատկանիշ):

Դասակարգողական հատկանիշ արտահայտելու շնորհիվ Ա+Գ կաղապարով կազմված տերմինները շատ լավ ձևով իրականացնում են գիտական տերմինաբանությանը առաջադրվող համակարգայնության պահանջը:

Երկանդամ բաղադրյալ տերմինների մի մասն էլ կազմված է Գ+Գ կաղապարով: Այս կառույցն ընդգրկող տերմինները երկանդամ բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի մոտ 13%-ն են կազմում: Նման կարգի տերմիններից են՝ անջատման նշան, ենթակայի լրացում, զոդվածով կապակցություն, խոնարհման հարցում, հնչյունի երկարություն, նախադասության անդամ, շարահարության կապակցություն, վանկի կենտրոն և այլն⁵⁵:

Երկանդամ բաղադրյալ տերմինների ձևաբանական հիշյալ երկու կաղապարները երբեմն ունեն հոմանիշային գործածություն: Այսպես, լեզվաբանական գրականության մեջ քիչ չեն այն դեպքերը, երբ միևնույն հասկացություն բնորոշող տերմինը կերտվում է այդ կառույցներից երկուսով էլ (օրինակ՝ լեզվի կամ լեզվական մակարդակ, բաղաձայնների||բաղաձայնական համակարգ, հնչյունների||հնչյունական կապակցություն և այլն): Որոշ դեպքերում, իմաստի արտահայտման տեսանկյունից դրանք համարժեք են և հնարավոր է լինում ազատ կերպով մեկը մյուսով փոխարինել: Պարզ է որ նման երևույթը կապված է նաև ժամանակակից լեզվի կենդանի պրոցեսների հետ, որն այդ հարցը տարրեր դեպքերում լուծում է տարբեր կերպ: Բայց, ինչպես Գ. Օ. Վինոկուրն է գտնում, այդ երկու կառույցները միշտ չէ, որ

⁵⁵ Օրինակներից երևում է, որ հայերենում հիշյալ տերմինակառույցի առաջին բաղադրիչը որպես կանոն արտահայտվում է սեռական հոլովով: Գործիականով կազմությունները այնքան էլ բնորոշ չեն և շատ քիչ են հանդիպում:

իրենց իմաստով լրիվ կերպով համընկնում են: Գոյականի թեք հոլովով արտահայտված բաղադրիչը հիմնականում ունի ավելի անկախություն և ինքնուրույնություն, քան ածականով արտահայտվածը: Սովորական լեզվում դրանցով արտահայտված բառերի կապակցությունը ավելի հեշտությամբ կարելի է միմյանցով փոխարինել (սակայն որոշ համատեքստերում հնարավոր չի լինում փոխարինում կատարել): Ինքնին հասկանալի է, որ մասնագիտական լեզվում հաճախակի հանդիպող նման երևույթը ավելի շուտ կարող է խախտել տերմինի երկու բաղադրիչների միջև եղած իմաստային հարաբերությունը, քան թե սովորական լեզվում (36,33—34):

Երկանդամ բաղադրյալ տերմինների մեջ դրսևորվում են ձևաբանական մի քանի այլ կաղապարներ: Օրինակ, Դրբ.+Գ կառույցով են կերտված հետևյալ տերմինները՝ եղանակավորող բառեր, զեղչված նախադասություն, նախաճավելված ձայնավոր, չնդվովող բառեր, փառացած հոլովաձևեր և այլն: Իսկ Թ+Գ կաղապարով կառուցված տերմիններից են՝ առաջին, երկրորդ ավառնի, զրո վերջավորություն և այլն:

Վերջին երկու կաղապարներով կերտված տերմինները երկանդամ կառույցների ընդհանուր թվի հազիվ 7%-ն են կազմում (սրանք, փաստորեն, շունեն դրսևորման կանոնավորվածություն):

Երկանդամ բաղադրյալ տերմինների տերմինաբանական կաղապարները

Բարդ տերմինների նման, բաղադրյալ կառույցների մեջ էլ կարելի է առանձնացնել տերմինաբանական մի քանի կաղապարներ: Առաջին տիպին հատկացնում ենք այն բաղադրյալ կառույցները, որոնց բաղադրիչները առանձին վերցրած տերմիններ են: Այսինքն, դրանք, առանց իսկ այդ կապակցության կարող են ինքնուրույն կերպով գործածվել: Երկրորդ տիպի բաղադրյալ տերմինների բաղադրիչներից միայն մեկն է ինքնուրույն տերմին, իսկ մյուսը լեզվի ընդհանուր գործածական բառ է կամ ըստ էության կարող է լինել գիտության այլ բնագավառներից փոխառված, ինչպես նաև ընդհանուր գիտական տերմին⁵⁶: Մյուս կարգի բա-

⁵⁶ Ինչպես նշվել է, տերմինի այդ կարգի բաղադրիչները դիտում ենք իբրև ոչ լեզվաբանական տերմին (S):

ղաղարյալ տերմինների բաղադրիչներից ոչ մեկն էլ ինքնուրույն կերպով գործածվող տերմին չէ⁵⁷։

Քննությունը սկսենք երկրորդ տիպի ($\bar{S}+S$ և $S+\bar{S}$) բաղադրյալ տերմինների առանձնահատկությունների բացահայտումից։ Նման կառույց ունեցող բաղադրյալ տերմինները հնարավոր է բաժանել բաղկացուցիչ մասերի, քանի որ դրանց կազմի մեջ կա ինքնուրույն կերպով հանդես եկող տերմին։ Տերմինաբանական հիշյալ կաղապարների բաղադրիչների միջև կապը սերտ է (64,170)։

Երկանդամ բաղադրյալ տերմինների տերմինաբանական կաղապարներից $\bar{S}+S$ կառույցն է ամենից ավելի կանոնավորապես դրսևորվողը։ Այն երկանդամ կառույցների ընդհանուր թվի 49%-ն է կազմում։ Նման կաղապարով կերտված տերմիններից են՝ անկանոն հոլովում, բաց վանկ, երկար ձայնավոր, զարտուղի խոնարհում, էական բայ, ժխտական նախածանց, իջնող երկբարբառ, լիակատար առնմանում, խառը հոլովում, հիմնական ձևույթ, ձևի պարզադիմացում, միջնորդական փոխառություն, նորագույն հապավում, շրջուն շարադասություն, պարզ ստորոգյալ, ցնդակից լեզու և այլն։

$\bar{S}+S$ կառույց ունեցող բաղադրյալ տերմինների մեջ առաջին բաղադրիչը երբեմն կրում է իմաստաբանական որոշ փոփոխություններ. դրանով իսկ ուժեղանում է հասկացության՝ բնորոշման հետ եղած կապը։ Փոփոխությունը հիմնականում հանդում է

57 Դ. Ս. Լոտտեն բավական հանգամանորեն է քննել բաղադրյալ տերմինների տերմինաբանական տիպերը։ Նա գտնում է, որ բոլոր տիպերն էլ քերականորեն բաժանելի են։ Ըստ նրա այդ կապակցությունները տերմինաբանական իմաստայնության բաժանելիության տեսակետից հավասարաթեք չեն (54,735)։ Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ Լոտտեն բաղադրյալ տերմինների մեջ առանձնացնում է շորս տիպի Առաջինին հատկացնում է այն բաղադրյալ տերմինները, որոնց բաղադրիչները գործածվում են սովորական, չաղճատված իմաստով։ Այս տեսակը նա բնորոշում է տաբուլումի (բաժանելի) տերմին-բառակապակցություններ անունով։ Երկրորդ տիպի մեջ են մտնում այն կապակցությունները, որոնց մի բաղադրիչը տերմին է, իսկ մյուսը՝ ընդհանուր գործածական բառ։ Սրանց մեջ էլ նա առանձնացնում է երկու ենթատեսակ՝ ըստ որոշյալ և որոշիչ բաղադրիչների տերմինների պատկանելության։ Սրանք Լոտտեն որակում է զայմանակաբուրեն բաժանելի (տաբուլումի) տերմին-բառակապակցություններ անունով։ Երրորդ տիպի՝ կիսատաբուլումի տերմին-բառակապակցությունների առանձնահատկությունն այն է, որ իրեն տերմիններ հանդես եկող բաղադրիչներից մեկը չի գործածվում իր հիմնական իմաստով։ Վերջին տեսակը, որի երկու բաղադրիչներն էլ տերմիններ չեն, նա անվանում է անտաբուլումի տերմին-բառակապակցություններ (55,79—80)։

հետևյալին՝ առաջին բաղադրիչի (այսինքն, ինքնուրույն կերպով տերմին չհանդիսացող անդամի) դերում հանդես եկող ածականի իմաստը կարող է ինչ-որ չափով մասնագիտացման ենթարկվել։ Այս երևույթը, տվյալ դեպքում, պայմանավորված է լեզվաբանության՝ որպես գիտության որոշակի բնագավառի մի շարք առանձնահատկություններով։ Այսպես օրինակ, անկանոն ճշդվում, զարտուղի խոնարհում, խառը ճշդվում, պարզ ստորոգրյալ և նման կարգի այլ բաղադրյալ տերմինների ածական-բաղադրիչները (անկանոն, զարտուղի, խառը, պարզ) գիտության հիշյալ բնագավառի լեզվում, փաստորեն, ենթարկվել են այս կամ այն աստիճանի մասնագիտացման։

Երկանդամ բաղադրյալ տերմինների մեջ $S+S$ կառույցի յուրաքանչյուր լինելը բնական և օրինաչափ երևույթ է։ Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ընդհանուր առմամբ տերմինի (տվյալ դեպքում լեզվաբանականի) դերում պետք է հանդես գա երկրորդ անդամը։ Քանի որ առաջինը լրացնողն է, ուստի նըպատակահարմար է, որ այն արտահայտվի լեզվի ընդհանուր գործածական բառով։ Երկրորդ բաղադրիչի դերում հանդես եկող լեզվաբանական տերմինի հիմքում ընկած է սեռային հասկացություն։ Տվյալ դեպքում տեղի է ունենում կոնկրետացում՝ հիշյալ հասկացության բովանդակության սահմանափակմամբ։ Այսինքն, մեծ մասամբ մենք գործ ունենք ավելի նեղ հասկացություն բնորոշող տերմինի հետ, քան թե ինքնուրույն գոյականով բնորոշված հասկացության դեպքում։ Սա պատճառաբանվում է այն հանգամանքով, որ լեզվաբանական տերմիններն ընդհանուր առմամբ միմյանց նկատմամբ գտնվում են սեռի և տեսակի հարաբերության մեջ։ Այսինքն, տերմինների հիմքում ընկած են հավասար կամ առավել նեղ ու լայն հասկացություններ։ Իսկ նման կարգի հարաբերությունների արտահայտման համար, թվում է, որ ամենից ավելի հարմար է հիշյալ կառույցը, որն ապահովում է համակարգայնությունը թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պլաններում։ Այս բանն ավելի պարզ կդառնա, երբ քննենք տերմինի բաղադրիչների միջև եղած ջարահյուսական հարաբերությունները⁵⁸։

Ա. Ա. Սանկինը բավական հանգամանորեն վերլուծելով $\overline{S}+S$ կառույցը, դրա մեջ առանձնացնում է երկու տարատեսակ՝

⁵⁸ Նման հարցերի քննությանը կանգրագառնանք ավելի մանրամասնորեն։

ըստ առաջին բաղադրիչի մասնագիտացման առկայություն-բացակայության հանգամանքի (64,170—173), Առաջին տեսակի բաղադրյալ տերմինների առաջին բաղադրիչը, այսինքն՝ ածականը ոչ մասնագիտական բառապաշարի բառ լինելով, գործածվում է իր սովորական իմաստով: Տվյալ դեպքում բացակայում է այս կամ այն աստիճանի մասնագիտացումը՝ կապված գիտության որոշակի բնագավառի առանձնահատկության հետ (64,170):

Երկրորդ տեսակի բաղադրյալ տերմինների առաջին բաղադրիչի՝ ածականի իմաստը ենթարկվում է մասնագիտացման: Այս երևույթը պայմանավորված է ինչպե՛ս գիտության որոշակի բնագավառի, այնպե՛ս էլ տերմինի բովանդակության, արտացոլված առարկայի, երևույթի առանձնահատկություններով: Այդ իսկ պատճառով միևնույն ածականը տարբեր կապակցություններում կարող է ստանալ իմաստի մասնագիտացման տարբեր երանգներ (64,172): Սանկինը գտնում է, որ բաղադրյալ տերմինների մեջ ածականի իմաստի մասնագիտացումը կարող է իրականանալ տարբեր ուղիներով՝ իր ընդհանուր իմաստի որոշակի սահմանափակմամբ (իմաստին տրվում է գիտության կամ տեխնիկայի որոշակի բնագավառի առանձնահատկության հետ կապված այս կամ այն որոշակիություն), ինչպես նաև փոխաբերական գործածությամբ (64,172—173):

Երկանդամ բաղադրյալ տերմինների կանոնավորապես դրսևորվող մի այլ կաղապարն արտահայտվում է $S+\overline{S}$ կառույցով⁵⁹: նման կաղապար ունեցող տերմիններն երկանդամ կառույցների ընդհանուր թվի 22,5%-ն են կազմում: Այդ կարգի տերմիններից են՝ բառիմաստի բնդլայնում, բսոային կազմ, դեր-բայական ձև, ենթակայի խումբ, խոսքի մասեր, նախադասությամբ անդամ, շարահյուսական միավոր, վանկի կենտրոն, ֆեռականական կարգ և այլն:

Այս կառույցի առանձնահատկությունը ոչ միայն այն է, որ լեզվաբանական տերմինի դերում հանդես եկող բաղադրիչն ունի սահմանափակող դեր, այլև այն, որ դրա շնորհիվ նման կաղապարով կազմված տերմինները որոշակի տեղ են գրավում գիտության հիշյալ բնագավառի տերմինաբանական համակարգում:

⁵⁹ Ժիշտ է, այս կառույցը նախորդի հետ ինչ-որ ընդհանրություն ունի, բայց մենք նպատակահարմար դրանք դրանք միմյանցից առանձնացնել, նկատի ունենալով դրանց արտահայտած իմաստային տարբերությունը, ինչպես նաև կանոնավորվածության տարբեր աստիճանի դրսևորման հանգամանքը:

$S+\bar{S}$ կառույցի առաջին բաղադրիչը, որն ինքնուրույն տերմին է, բնորոշում է լեզվաբանական որոշակի հասկացություն: Երկրորդ բաղադրիչի դերում, բացի լեզվի ընդհանուր գործածական բառերից (լեզվական ազդեցություն, բառիմաստի ընդլայնում), կարող են հանգես գալ ընդհանուր գիտական տերմիններ (հնչյունական համակարգ, լեզվի կառուցվածք և այլն), ինչպես նաև գիտության տարբեր բնագավառներից փոխառված տերմիններ (հնչուլթի տարբերակ, լեզվական կաղապար և այլն):

Հիշյալ կառույցի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երկրորդ բաղադրիչը կարող է իր մեջ ընդգրկել ամբողջ կապակցության իմաստը և տվյալ գիտակարգում հանդես գալ ամբողջ բաղադրյալ տերմինի փոխարեն (64,175—176): Այսպես՝ լեզվական մակարդակ, լեզվի կառուցվածք, լեզվի համակարգ և նման կարգի այլ բաղադրյալ տերմինների երկրորդ բաղադրիչները գիտության հիշյալ բնագավառի լեզվում կարող են առանձին հանդես գալ (մակարդակ, կառուցվածք, համակարգ):

Երկանդամ բաղադրյալ տերմինների տերմինաբանական մի այլ կաղապարի մեջ հանդես եկող երկու բաղադրիչներն էլ լեզվաբանական տերմիններ են ($S+\bar{S}$): Այս կաղապարով կերտված տերմինները երկանդամ կառույցների ընդհանուր թվի 20,5%-ն են կազմում: Նման կարգի տերմիններից են՝ ածանցավոր բառ, բայական ստորոգյալ, դարձվածաբանական հոմանիշ, եղանականիշ նախամասնիկ, հնչույթային բառ, միավանկ բառ, շեշտակիր վանկ, վանկային գիր, տառային հապավում, փերականական համանունություն և այլն:

Այս կապակցությունների կազմի մեջ եղած տերմիններից յուրաքանչյուրը պահպանում է այն իմաստը, որ ունի առանձին գործածվելիս: Տվյալ դեպքում պարզապես տեղի է ունենում «տերմինի բովանդակության իմաստային սահմանափակում» ամբողջությամբ (64,167):

Մասնագետները հիշյալ կարգի տերմինների յուրահատկությունն ու առանձնահատկությունը համարում են այն, որ դրանց բաղադրիչներից յուրաքանչյուրը, որպես կանոն, պատկանում է տերմինաբանական որոշակի շարքի:

Ինչպես նշվեց, երկանդամ բաղադրյալ տերմինների տերմինաբանական մյուս կաղապարի բաղադրիչներն առանձին վերջրած լեզվաբանական տերմիններ չեն: Երկու անդամների միացությունն է, որ լեզվաբանական տերմինների դաշտում տվյալ

կառույցին տալիս է տերմինային արժեք: Այսինքն, կապակցությունն ամբողջությամբ ձեռք է բերում մասնագիտացված բովանդակություն:

Ի դեպ, $\overline{S+S}$ կառույց ունեցող տերմինները հրկանդամ բաղադրյալ տերմինների մեջ շունեն լայն դրսևորում և, բնականաբար, դրանով կերտված տերմինները շատ քիչ են հանդիպում (սրանք հրկանդամ բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 8%-ն են կազմում): Այս կարգի տերմիններից են՝ առանձնահատուկ արտահայտություն, անջատման նշան, գաղափարական վերլուծություն, լրիվ ներմարմնավորում, «խաշավորման տեսություն», վիճակի կարգ և այլն:

Քանի որ հիշյալ կառույցի մեջ կապակցությունն ամբողջությամբ է ձեռք բերում իմաստի մասնագիտացում, ուստի դրա մեջ անհնար է առանձնացնել ինքնուրույն բաղադրիչներ: Այսինքն, այս կարգի բաղադրյալ տերմիններն անբաժանելի են տերմինաբանական տեսակետից: Եվ նման բաղադրյալ տերմինների բաղադրիչների միջև եղած կապը, փաստորեն, ավելի սերտ է քան թե մյուս տիպի բաղադրյալ տերմիններին:

$\overline{S+S}$ կառույց ունեցող տերմինների քննությունը ցույց է տալիս, որ դրանց բաղադրիչներն էլ ոչ միայն լեզվի ընդհանուր գործածական բառեր են, այլ նաև ուրիշ գիտությունների տերմինաբանական համակարգի տերմիններ: Վերջիններս լեզվաբանական տերմինների դաշտում, իհարկե, ձեռք են բերում իմաստային այս կամ այն առանձնահատկություն:

Ա. Մ. Տերպիգորեը քննելով բաղադրյալ տերմինների տերմինաբանական կաղապարների տիպերը, գտնում է, որ $\overline{S+S}$, $\overline{S+S}$, $\overline{S+S}$ կառույցներում արտացոլված է հասկացությունների հատկանիշները և հասկացությունների միջև եղած կապը: Բաղադրիչների ճիշտ ընտրության և կապակցելիության դեպքում նման կաղապար ունեցող տերմինները օժտվում են համակարգայնության հատկանիշով: Մյուս տեսակի կառույց ($\overline{S+S}$) ունեցող տերմինները չեն արտացոլում գիտության որոշակի բնագավառի հասկացությունների համակարգը, դրանք արտացոլում են միայն առարկաների արտաքին որոշ հատկանիշները (70,74):

* * *

Այժմ համեմատենք ձևաբանական և տերմինաբանական կաղապարների դասերը, որից և պարզ կդառնա, թե բաղադրյալ

տերմինների բաղադրիչներից յուրաքանչյուրի դերում ո՞ր խոսքի մասերն են գլխավորապես կիրառվում⁶⁰:

Հայտնի է, որ բաղադրյալ տերմինների մեջ (անկախ բաղադրիչների քանակից) վերջին բաղադրիչը հայերենում որպես կանոն արտահայտվում է գոյականով: Այստեղից կարելի է ասել, որ $S+S$ և $\bar{S}+S$ կառույցներում (այսինքն, որոնց երկրորդ բաղադրիչը լեզվաբանական տերմիններ են) տերմին-բաղադրիչները արտահայտվում են գոյականով: Քանի որ այս կառույցները երկանդամ բաղադրյալ տերմինների մեջ 69,5% են կաղմում, ուստի սրանց երկրորդ բաղադրիչների 69,5%-ը գոյականներ են ($\Phi-S=69,5\%$): Տերմինաբանական մյուս կառույցների ($S+\bar{S}$ և $\bar{S}+\bar{S}$) երկրորդ բաղադրիչների 30,5%-ը, փաստորեն տերմիններ չեն ($\Phi-S=30,5\%$):

Առաջին բաղադրիչները համեմատելու համար բավական է չորս կառույցներից վերցնել երկուսը՝ $S+S$ -ը և $S+\bar{S}$ -ը, քանի որ մյուսների առաջին բաղադրիչները տերմիններ չեն ($\bar{S}+S$ և $\bar{S}+\bar{S}$):

Ձևաբանական կաղապարների քննությունը ցույց տվեց, որ առաջին բաղադրիչի դերում գլխավորապես հանգես են դալիս ածականները ($Ա+\Phi$) և գոյականները ($\Phi+\Phi$), իսկ մնացած խոսքի մասերը (թվական, դերբայ) չնչին մասնակցություն են ցուցաբերում տերմինների կազմությանը:

Տեսանք, որ երկանդամ բաղադրյալ տերմինների մեջ $Ա+\Phi$ կառույցը 80% է կազմում, իսկ $\Phi+\Phi$ -ը՝ 13%: Այստեղից հետևում է, որ $S+S$ և $S+\bar{S}$ կառույցների (սրանք տերմինաբանական կաղապարների 43%-ն են) մեջ ածականով արտահայտված տերմին-բաղադրիչները կլինեն մոտ 37%: Առաջին բաղադրիչները (տերմինները) մնացած դեպքերում գլխավորապես արտահայտվում են գոյականներով:

Ի դեպ, ինչպես նշվել է, բաղադրյալ կառույցների մեջ ածականով արտահայտված տերմին-բաղադրիչները, առանձին վերցրած, ըստ էության գոյականներ են: Բաղադրյալ կառույցների մեջ կապակցելիությունն իրականացնելու համար գոյական-տերմինները ստանում են ածականական վերջածանցներ:

⁶⁰ Քննությունը կատարում ենք միայն երկանդամ կառույցների հիման վրա, քանի որ, ինչպես ասվեց, դրանք են կանոնավորապես դրսևորվում բաղադրյալ տերմինների մեջ:

Ըստ բաղադրիչների քանակի բաղադրյալ տերմինների մեջ կարելի է առանձնացնել նաև հոանդամ և բազմանդամ կառույցներ: Վերջիններիս երկու կարգի հնարավոր կաղապարների քանակը ավելի շատ է, քան նախորդին՝ հակառակ դրանցով կազմված տերմինների ընդհանուր թվին և կանոնավորվածության աստիճանին:

Եռանդամ կառույցները բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 15%-ն են կազմում:

Ձևաբանական կաղապարների մեջ կանոնավորապես հանդես են գալիս չորս կարգի կառույցներ: Ամենից ավելի բնորոշը Ա+Ա+Գ կաղապարն է, որի միջոցով կազմվում են հոանդամ բաղադրյալ տերմինների մեծ մասը: Օրինակ՝ առաջնալեզվային պայթյալան բաղաձայն, բարդ ստորադասական նախադասություն, ընդհանուր պատմական հնչյունափոխություն, ժամանակակից հայոց լեզու, ծավալուն դերբայական դարձված, հարաբերական զերադրական սուտինան և այլն:

Ձևաբանական մյուս երեք կաղապարները ըստ նվազող կանոնավորվածության հետևյալներն են՝ Գ+Ա+Գ (բարբառների հնչյունական դասակարգում, բայի ժխտական ձև, լեզուների համեմատական փերականություն և այլն), Ա+Գ+Գ (առաջնային շարքի ձայնավոր, բաց վանկի օրենք, կցական տիպի լեզու և այլն), Գ+Գ+Գ (խոսքի մասերի փոխանցում, ձայնավորների ներդաշնակության օրենք և այլն):

Ձևաբանական մնացած կաղապարների քանակը թեև շատ է, բայց դրանցով կազմված տերմիններ շատ քիչ են հանդիպում: Այսպես օրինակ՝ Թ+Գ+Գ (գրո սուտինանի ձայնդարձ), Գ+Թ+Գ (բաղաձայնների առաջին տեղաշարժ), Դրբ.+Գ+Գ (զեղված ենթակայով նախադասություն), Գ+Դրբ.+Գ (եղելություն նշանակող բառեր) և մի շարք ուրիշ կառույցներ:

Եռանդամ կառույցների մեջ առանձնանում են այնպիսի տերմիններ, որոնց բաղադրիչները միացած են շաղկապներով (ի դեպ, սրանք շատ քիչ տոկոս են կազմում): Այսպես օրինակ՝ բացառման ու զիջման կապեր, անձի և իրի առում, հիմունքի ու պատճառի կապեր, չափ ու ֆանակի պարագա և այլն: Նման կարգի տերմինների առանձնահատկությունն այն է, որ դրանք բնորոշում են միավորված երկու հասկացություններ:

Ծռանդամ տերմինների տերմինաբանական կաղապարներից ամենից ավելի կանոնավորապես դրսևորվողը $S+S+S$ կառույցն է: Ի տարբերություն երկանդամների, որոնցում իբրև տերմին գլխավորապես հանդես է գալիս վերջին բաղադրիչը, այս կառույցում վերջին երկու բաղադրիչները մեծ մասամբ ընդհանուր գործածական բառեր են: Նման կարգի տերմիններից են՝ ածականների համեմատության աստիճաններ, բառի ներքին ձև, նշյունի երկարության նշան, լեզվական արտահայտության միջոցներ և այլն:

Մյուս կաղապարները (ըստ նվազող կանոնավորվածության) կազմված են հետևյալ զուգորդություններիով՝ $S+S+S$ (բարձր աստիճանի ձայնդարձ, պարզ ընդարձակ նախադասություն և այլն), $\bar{S}+S+S$ (բարդ ածանցավոր բառ, երկրորդական պարագայական նախադասություն և այլն), $S'+S+S$ (երկրորդական խոսքի մասեր, եռաստիճան բաղաձայնական համակարգ և այլն), $S+\bar{S}+S$ (անշաղկապ բարդ նախադասություն, բայական բաղադրյալ ստորոգյալ և այլն), $S+S+\bar{S}$ (բայի եղանակային ձևեր, բառերի շարանյութական կապ և այլն), $\bar{S}+S+S$ (աշխատանքային ճիշերի տեսություն, անմիջական բաղադրիչների վերլուծություն և այլն):

Ի տարբերություն երկանդամ բաղադրյալ տերմինների, եռանդամ կառույցների այն տիպը, որի բոլոր բաղադրիչները լեզվաբանական տերմիններ են, չունի կանոնավոր դրսևորում, և համապատասխանաբար այդ կաղապարով կազմված տերմիններ շատ քիչ են հանդիպում:

Բաղադրյալ կառույցների (երկանդամ և եռանդամ) մեջ գոյականների և ածականների կիրառության հարցում նկատվում է յուրահատուկ օրինաչափություն: Այսպես, երբ հիշյալ կառույցների մեջ գոյականը ինքնուրույն կերպով գործածվող տերմին է, ապա նման դեպքերում, ածականը մեծ մասամբ ընդհանուր գործածական բառ է: Այս երևույթը դրսևորվում է Ա+Գ և Ա+Ա+Գ կառույցներում: Իսկ երբ գոյականը ընդհանուր գործածական բառ է, ապա ածականը մեծ մասամբ հանդես է գալիս լեզվաբանական տերմինի դերով:

* * *

Բազմանդամ (քառանդամ և ավելի) կառույցների հնարավոր կաղապարների թիվը բոլորից էլ շատ է, բայց այդ կարգի կազմություններն այնքան էլ շատ չեն բաղադրյալ տերմինների մեջ:

Այս կառույցների անկենսունակությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ, գործառական տեսակետից գիտական տեղեկատվության համար բոլորովին էլ նպատակահարմար չէ այգքան երկար կազմությունների կիրառությունը: Նման կարգի տեղեկանքները առաջացնում են անբարեհնչունություն, տնտեսման սկզբունքի խախտում, գործածության ժամանակ ի հայտ է գալիս որևէ բազադրիչի բաց թողման հնարավորություն: Երկրորդ, որքան տեղեկանքի բազադրիչներն ավելանում են, այնքան այդ կարգի կազմությունները դառնում են նկարագրական բնույթի:

Բազմաբազադրիչ տեղեկանքներով առաջնորդվելը չափազանց դժվար է, մասնավորապես եթե դրանք բնորոշում են գիտության տվյալ բնագավառի տարածված և առանցքային հասկացությունները:

Բազմաբազադրիչ կառույց ունեցող տեղեկանքներից են՝ քառապաշարի հաբստացման ներքին միջոց, երկրորդական կարգի երկրորդական նախադասություն, նյութական իմաստ ունեցող խոսքի մասեր, փոխադարձաբար իրար փոխարինող հնչյուններ և այլն: Այս կառույցին պատկանող տեղեկանքների նկարագրական բնույթը ավելի պարզ երևում է հետևյալ օրինակներից՝ իմաստափոխություն գաղափարախոսության փոփոխության հետևանքով, շեշտի հետ կապված հնչյունափոխություն և այլն:

Այստեղ, ինչպես և մյուս կառույցների ձևաբանական կաղապարների մեջ առկա է խոսքի մասերի կիրառության նույն պատկերը (այսինքն, տեղեկանքի բազադրիչների դերում գերազանցապես հանդես են գալիս գոյականներ և ածականներ): Իսկ տեղեկատվական կաղապարների մասին կարելի է ասել որ բազադրիչների դերում ավելի շատ հանդես են գալիս լեզվի ընդհանուր գործածական բառեր, քան թե լեզվաբանական տեղեկանքներ:

ՈԱՂԱԴՐՑԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՐԻՆԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Գիտական տեղեկատվության կարևորագույն պահանջներից մեկն էլ, ինչպես ասվեց, այն է, որ տեղեկանքը այս կամ այն համակարգում պետք է ճիշտ կողմնորոշի իր հիմքում ընկած հասկացության տեղը: Դրա համար հարկավոր է, որ արտահայտության պլանում տեղեկանքի բազադրիչներից որևէ մեկը պատկանի որոշակի շարքի: Փաստորեն, տեղեկանքների գերակշռող մասի

ածանցված և բարդ բառեր ու բառակապակցություններ լինելու հանգամանքը հնարավորություն է տալիս իրականացնել տերմինի համակարգային դերը՝ տերմինաբանական շարքեր կազմելը: Տերմինները կառուցվածքա-իմաստային առումով կարող են շարքեր կազմել այն դեպքում, երբ դրանցից յուրաքանչյուրն ունի ընդհանուր բաղադրիչ, որը և հանդես է գալիս իբրև որոշակի շարքի ցուցիչ (նշան): Պարզ է, որ կարևոր է նաև այն հանգամանքը, որ այդ բաղադրիչը հանդես դա միայն տվյալ շարքի տերմինների մեջ, որպեսզի տերմինաբանական մի շարքը սահմանազատվի մյուսից:

Հաշվի առնելով տերմինների ընդհանուր բաղադրիչների կառուցվածքաիմաստային առանձնահատկությունները, լեզվաբանական տերմինաբանության մեջ էլ հնրավոր է վեր հանել տերմինաբանական տարբեր կարգի շարքեր: Տվյալ դեպքում նկատի են տոնվում հետևյալ հանգամանքները՝ նախ, որպես շարքի ցուցիչ հանդես եկող ընդհանուր բաղադրիչը առանձին վերցրած ի՞նչ կարգի հասկացություն (սեռայի՞ն, թե՞ տեսակային) է բնորոշում, ապա այդ բաղադրիչը ընդհանուր գործածական բա՞ռ է, թե՞ լեզվաբանական տերմին և համապատասխանաբար ի՞նչ խոսքի մասով է արտահայտված: Նման սկզբունքով լեզվաբանական տերմինների մեջ կարելի է առանձնացնել հետևյալ բնորոշող շարքերը⁶¹:

1) Տերմինաբանական շարք, որտեղ ընդհանուր բաղադրիչի դերում հանդես եկող լեզվաբանական տերմինը բնորոշում է սեռային հասկացություն: Նման կարգի բաղադրիչները որպես կանոն արտահայտվում են գոյականներով: Ամենից շատ շարքեր կազմում են սրանք, քանի որ յուրաքանչյուր սեռային հասկացություն բնորոշող տերմին իր հերթին մասնակցում է մի քանի կամ բազմաթիվ տեսակային հասկացություն բնորոշող տերմինների կազմությանը: Այդ կարգի բազմաթիվ շարքերից որպես օրինակ բերենք մի երկուսը⁶²: Այսպես, շեշտ տերմինը որպես ընդհանուր բաղադրիչ դրսևորվում է հետևյալ շարքի մեջ՝ բառային, բարձրացող, գլխավոր, երաժշտական, երկրորդական, թեթև,

⁶¹ Վերլուծությունը դարձյալ կատարվում է երկանդամ բաղադրյալ տերմինների հիման վրա:

⁶² Տերմինաբանական այս շարքի վերլուծությանը մանրամասն շենք անդադառնում, քանի որ տարբեր առիթներով տերմինները ընդհանուր առմամբ քննում ենք սեռային և տեսակային հասկացությունների կապի հաշվառմամբ:

իջնող, կայուն, հավասար, շարժական, վերջավանկ, ուժային, տրամաբանական, փոփոխական ...ՇԾՇՏ:

Տերմինների շարք, որոնցում որպես ընդհանուր բաղադրիչ հանդես է դալիս վանկ տերմինը՝ անշեշտ, բաց, նախաշեշտ, նախավերջին, շեշտակիր, վերջընթեր, փակ... ՎԱՆԿ:

Օրինակներից երեում է, որ այս կարգի տերմինները բնորոշում են շեշտի և վանկի տարատեսակները:

2) Տերմինաբանական շարք, որտեղ ընդհանուր բաղադրիչի դերում հանդես եկող սեռային հասկացությունը բնորոշված է ոչ լեզվաբանական տերմինով: Այսպես օրինակ՝ լեզվական, խոսքային, հնչյունական, արտասանական, հնչույթաբանական, բառային, դարձվածաբանական, ձևաբանական, շարահյուսական... ՄԻԱՎՈՐ:

Տերմինաբանական նման շարքին են պատկանում նաև հետևյալ տերմինները՝ ֆերականական, ժամանակային, եղանակային, սահմանափակման, շարահյուսական, լրացական, ռոշակական, պարագայական, ստորագելիական... ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ:

3) Տերմինաբանական շարք, որտեղ ընդհանուր հանդիսացող բաղադրիչը լեզվաբանական տերմին է և գործածվում է տեսակային հասկացություն բնորոշելու համար: Պարզ է, որ այս դեպքում ընդհանուր բաղադրիչը կարող է արտահայտվել ածականով կամ զոյականով:

ա) Տերմինների շարք, որի ընդհանուր բաղադրիչն արտահայտված է ածականով՝ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ արտահայտություն, դաս, դեմք, թիվ, իմաստ, կանոն, կառուցվածք, կարգ, սեռ...:

Ի դեպ, նման շարք կազմող ընդհանուր բաղադրիչների քանակը շատ է (լեզվաբանական, հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական և այլն) լեզվաբանական տերմինների շրջանում: Այսպես օրինակ՝ ՀնԶՅՈՒՆԱԿԱՆ այբուբեն, լեզու, կադապար, կառուցվածք, համակարգ, համապատասխանություն, շղթա, պրոցես, փոխանցում, օրենք և այլն: Յուրաքանչյուր ընդհանուր բաղադրիչով կազմվում են բազմաթիվ տերմիններ՝ ԼԵԶՎԱԿԱՆ ազդեցություն, անընդհատականություն, արտահայտություն, երևույթ, ընդհանրություն, ընտանիք, կադապար, համակարգ, միասնություն, միավոր, նշան, նորմ, փոխազդեցություն, փոխաբանություն... կամ՝ ԲԱՌԱՅԻՆ վերացություն, արտահայտություն, ընդհանրություններ, իմաստ, կազմ, շեշտ և այլն:

բ) Տերմինների շարք, որի ընդհանուր բաղադրիչն արտահայտված է գոյականով՝ ՀնՁՅՈՒՆԻ անկում, դիրք, երկարություն, թուլացում, կարճություն, սղում, փոփոխություն...: Նման շարք են կազմում նաև հետևյալ տերմինները՝ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ դասակարգում, կրկնավորում, կուտակում, հերթագայություն, տեղաշարժ...:

Բերված օրինակներն այն բանն են վկայում, որ հիշյալ շարքի ընդհանուր բաղադրիչի դերում մեծ մասամբ հանդես են գալիս լեզվաբանության առանցքային տերմինները:

4) Տերմինաբանական շարք, որտեղ ընդհանուր բաղադրիչը լեզվաբանական տերմին չէ: Այս դեպքում էլ ընդհանուր բաղադրիչը կարող է արտահայտվել թե՛ ածականով, թե՛ գոյականով (Իհարկե, երբեմն էլ թվականով):

ա) Տերմինաբանական այս շարքի ածականով արտահայտված ընդհանուր բաղադրիչը իմաստի արտահայտման տեսակետից տարբերվում է մյուսներից: Կանոնավորապես դրսևորվող ընդհանուր բաղադրիչներից են՝ բազմակի, բարդ, բուն, Խտադաս, կանոնավոր, համադաս, հաստատական, միջադաս, ակադագրական, պատմական պարզ և այլն:

ԲԱՁՄԱԿԻ—այս ընդհանուր բաղադրիչը գործածվում է միևնույն բառի կրկնությամբ կազմված խոսքի մասերի, ինչպես նաև միևնույն նախադասության մեջ երկու և ավելի անդամների կապակցությունը բնորոշելու համար՝ բազմակի անդամներ, լրացումներ, բացահայտիչ, խնդիր, ենթակա, ստորոգյալ և այլն:

ԲԱՐԴ—մի շարք բաղադրյալ տերմինների մեջ հանդես եկող այս ընդհանուր բաղադրիչը բնորոշում է կազմության տեսակը՝ բարդ անուն, ածական, բայ, թվական, մակբայ, նախադասություն, շաղկապ...:

ԿԱՆՈՆԱՎՈՐ—մի շարք բաղադրյալ տերմինների մեջ հանդես եկող այս ընդհանուր բաղադրիչը բնորոշում է լեզվական այս կամ այն իրողության համապատասխան լինելը տվյալ կանոնին, որը ճանաչված է որպես հիմնական կամ օրինաչափ: Այսպես օրինակ՝ կանոնավոր թայեր, խոնարհում, հոգնակի, հոլովում, շարադասություն...:

ՀԱՄԱԿԱՍ—մի շարք բաղադրյալ տերմինների մեջ հանդես եկող այս ընդհանուր բաղադրիչը բնորոշում է լեզվական տվյալ միավորի խնդնություն կամ անկախ լինելը նույն կարգի մյուս

միավորների հարաբերությամբ՝ համադաս բառեր, լրացումներ, նախադասություններ...:

բ) Ասվեց, որ տերմինաբանական հիշյալ շարքի մի այլ ընդհանուր բաղադրիչը արտահայտվում է գոյականով:

Տեղ(ի)— այս ընդհանուր բաղադրիչով կազմվում են մի շարք բաղադրյալ տերմիններ՝ սեղի բացառական, գործիական, հայցական, պարագա...⁶³,

Ուսումնասիրելով տերմինաբանական տարբեր տիպի շարքերը, կարելի է պարզել գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանական համակարգերին վերաբերվող մի շատ կարևոր հարց ևս. այն է, թե բաղադրիչների ուրում հանդես եկող լեզվաբանական տերմիններից որո՞նք են, որ ավելի շատ (և հետևապես ի՞նչ կանոնավորվածությամբ) մասնակցություն են ցուցաբերում տերմինակազմությանը: Դրանով իսկ, փաստորեն, կարելի է վերհանել լեզվաբանության և նրա տարբեր բնագավառներին պատկանող հիմնական («միջուկային») տերմինները:

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱՀՑՈՒՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բաղադրյալ տերմինների (ինչպես նաև բարդ տերմինների) կառուցվածքա-իմաստային առանձնահատկությունը կապված է նաև բաղադրիչների դերառնության բնույթի հետ: Տերմինների գիտականությունն ապահովելու համար կարևոր նշանակություն ունի ոչ միայն բաղադրիչների ձևերի ճիշտ ընտրությունը, այլև դրանց միջև շարահյուսական հարաբերությունների իրական արտացոլումը: Ուստի, այս առումով հետաքրքիր է պարզել, թե շարահյուսական ի՞նչ կարգի հարաբերություններ գոյություն ունեն բաղադրյալ տերմինների բաղադրիչների միջև:

Հայտնի է, որ բաղադրյալ տերմինների հատկանշական գծերից մեկը բաղադրիչների անտեղափոխելիությունն է: Բաղադրիչները միմյանց հետ կապակցված են որոշակի հաջորդականությամբ (55,125): Սա ամենից առաջ պայմանավորված է հետևողական ստորադասության առկայությամբ (30,134):

Նման կարգի տերմինների մեջ բաղադրիչների տեղափոխությունը կարող է առաջացնել դասակարգողական հատկանիշների,

63 Ի դեպ, նման կարգի ընդհանուր բաղադրիչներով չեն կարող կազմվել տերմինաբանական բնորոշ շարքեր:

հասկացական հարաբերությունների, համակարգայնության, ճշգրտության, ինչպես նաև բաղադրիչների քերականական կապակցելիության խախտում:

Բաղադրյալ տերմինների բոլոր տեսակները երկանդամ շարահյուսական հարաբերություններ արտահայտող կառույցներ են, որոնց կազմում քերականական տեսակետից առանձնանում են գլխավոր և կախյալ (երկրորդական) բաղադրիչներ: Որպես կանոն վերջին անդամն է հանդես գալիս գլխավոր բաղադրիչի դերում, քանի որ հիմնականում դրա մեջ է կենտրոնացված տվյալ անվանման տերմինաբանական էությունը: Բնական է, որ այս կառույցների երկրորդական բաղադրիչները, ի տարբերություն գլխավորների, պետք է արտահայտեն ավելի նեղ իմաստային հարաբերություն (անկախ բաղադրիչների՝ տերմինների և ընդհանուր գործածական բառերի պատկանելու հանգամանքից):

Մեզ հետաքրքրողն այն է, թե՞ բովանդակության պլանում ի՞նչ կարգի հարաբերությունների մեջ են գտնվում գլխավոր և երկրորդական բաղադրիչները:

Բաղադրյալ տերմինների բոլոր կառույցները, անկախ իրենց բաղադրիչների քանակից, գերազանցապես արտահայտում են լրացում և լրացյալի հարաբերություն (այսինքն, բնորոշը լրացական հարաբերությունն է): Եռանդամ և բազմանդամ բաղադրյալ տերմինների արտահայտած հարաբերությունների երկանդամությունը պայմանավորված է բաղադրիչների կառուցվածքա-իմաստային հատկանիշներով:

Լրացական հարաբերությունը իրականում արտահայտվում է տվյալ լեզվին բնորոշ շարահյուսական առանձնահատուկ կապերով: Հայերենում բաղադրյալ լեզվաբանական տերմինների մեջ հիմնականում առկա են որոշչական (որոշիչ և որոշյալի) և հատկացական հարաբերություններ:

Դ. Ս. Լոտտեն խոսելով որոշչական հարաբերության մասին, գտնում է, որ այս դեպքում մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե բաղադրիչներից յուրաքանչյուրը (մանավանդ որոշիչը) ստացել է իր համապատասխան արտահայտման ձևը, թե՞ ոչ: Այլ խոսքերով այդ բաղադրիչը պետք է ճառավել հստակ արտահայտի հասկացության բնորոշման համար ընտրված հատկանիշը» (56,5):

Որոշչական հարաբերություն արտահայտող բաղադրյալ տերմիններից են՝ դիրֆային հնչյունափոխություն, թեփակեմ լեզու, գլխավոր նախադասություն, անկանոն հոլովում և այլն:

Փաստորեն այս կարգի տերմիններն արտահայտում են սեռատեսակային կապեր: Սրանց համար էականը այն է, որ ամբողջ տերմինով և որոշյալ բաղադրիչով բնորոշված հասկացությունը պատկանում է միևնույն դասակարգողական սխեմային: Որոշիչ բաղադրիչը այստեղ միշտ բնորոշում է կամ պետք է բնորոշի տեսակային դասակարգողական հատկանիշ⁶⁴: Որոշյալ բաղադրիչի կոնկրետացումը իրականացվում է որոշիչ բաղադրիչի միջոցով, որը որոշյալ բաղադրիչը հատկացնում է հասկացությունների համակարգին և հենց դրանով դասակարգում է նշանակելին (45,84):

Քննելով բաղադրյալ տերմինների տարբեր կառույցների միջև առկա հարաբերությունների համահնարավոր տեսակները, պարզվում է, որ գլխավորապես ռոշիչ-որոշյալ հարաբերությունը նկատվում է այնպիսի տերմինների մեջ, որոնք արտահայտում են տերմինաբանական տարբեր կարգի հասկացություններ» (55,84):

Հատկացական հարաբերություն արտահայտող բաղադրյալ տերմիններից են՝ լեզվի կառուցվածք, խոսքի մասեր, նախադասությամբ անդամ, հնչյունի երկառություն, վանկի կենտրոն և այլն: Ինչպես գիտության մյուս ճյուղերի, այնպես էլ լեզվաբանական տերմինների բաղադրյալ կառույցների մեջ ամենից ավելի բնորոշը որոշական հարաբերությունն է: Վերջինիս կենսունակությունը պայմանավորված է ճածականների բառակազմական շատ կենսունակ տիպերի իմաստային ճկունությամբ, այդ տիպերի միջոցով արտահայտված որակական և հարաբերական հատկանիշների լայն ընդգրկմամբ» (53,145—155):

Մասնագետները որոշական հարաբերությամբ արտահայտված երկանդամ բաղադրյալ տերմինները շարահյուսական մակարդակում դիտում են որպես միանդամ, քանի որ դրանց մեջ առաջին բառը միաձուլվում է երկրորդի հետ որպես մեկ ամբողջ-

64 Գ. Ս. Լոտտեն գտնում է, որ բացի սրանից գոյություն ունի նաև տերմինների մի այլ տիպ, որում ակնառու կերպով ընդգծվում է ոչ այնքան սեռատեսակային հասկացությունների միջև եղած կապը, որքան դասակարգողական տարբեր սխեմաներին պատկանող հասկացությունների միջև եղած կապը: Այսինքն, տվյալ դեպքում առաջին պլանի վրա է մղվում ոչ թե ամբողջ տերմինի և որոշյալ բաղադրիչի հարաբերությունը, այլ ամբողջ տերմինի ու որոշիչ բաղադրիչի կամ էլ որոշյալ և որոշիչ բաղադրիչների միջև եղած հարաբերությունները (54,745—746):

շություն» (36,44)։ Քանի որ հատկացական հարաբերություն արտահայտող տերմինների մեջ, լրացում-բաղադրիչը պահպանում է իր անկախությունը, ուստի դրանք այս տեսանկյունից համարվում են երկանդամ կառույցներ։

Գիտական լեզվում շարահյուսական հիշյալ կառույցների կիրառության ժամանակ երբեմն անհրաժեշտություն է առաջանում դրանք միմյանցով փոխարինել։

* * *

Չնայած որ տարբեր քանակի բաղադրիչներ ունեցող բաղադրյալ տերմինների շարահյուսական կառուցվածքը միշտ էլ երկանդամ է, բայց այնուամենայնիվ բացի երկանդամ տերմիններից, մյուսների մեջ առկա են նաև շարահյուսական այլ հարաբերություններ։

Խորանալու դեպքում տերմինների այդ կարգի կառույցներում կարելի է ի հայտ բերել ամենատարբեր բնույթի հարաբերություններ։ Պարզ է, որ այստեղ կխոսվի ամենատարածված և բնորոշ հարաբերությունների մասին։ Իսկ տվյալ դեպքում կարևոր է մի շարք տարբերիչ հատկանիշների ընտրությունը, որով և հնարավոր կլինի շարահյուսական հարաբերության մի տեսակը առանձնացնել մյուսից։

Քանի որ երկուսից ավելի բաղադրիչ ունեցող տերմինների մեջ ամենից ավելի տարածվածը հռանդամ բաղադրյալ տերմիններն են, ուստի և ուսումնասիրությունը կատարենք այդ կարգի կառույցների հիման վրա⁸⁵, Օգտվելով Դ. Ս. Լոտտենի նշանակումներից, շարահյուսական մակարդակում հռանդամ բաղադրյալ տերմինների մեջ առանձնացնում ենք հետևյալ բաղադրիչները՝ ա) երկրորդային որոշիչ բաղադրիչ (X), բ) առաջնային որոշիչ բաղադրիչ, որն իր հերթին որոշյալի հետ միասին բաղադրյալ կառույցներում կազմում է տերմինի որոշյալ մասը (Y), գ) որոշյալ բաղադրիչ (Z)։

Եռանդամ բաղադրյալ տերմինների բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերությունների (հետևապես և շարահյուսա-

⁸⁵ Նման հարցերին մանրամասն և հատուկ ուսումնասիրությամբ անդրադարձել է Դ. Ս. Լոտտենը՝ ՏԵՄ 56։ Այստեղ որոշ շփոթվ հետեւելով Լոտտենին, առանձին դեպքում ցուցաբերում ենք այլ մոտեցում։

կան կաղապարների ու տիպերի) առանձնացման ժամանակ նախ և առաջ հարկավոր է պարզել, թե երկրորդական բաղադրիչները ի՞նչ կերպ են կապակցվում (անմիջական-ուղ անմիջական) գլխավորի հետ: Կախյալ (որոշիչ) բաղադրիչների բնույթը պարզելու համար այս կարգի տերմինները անհրաժեշտության դեպքում թվում է, որ ավելի լավ կլինի վերլուծել ժամանակակից լեզվաբանության մեջ լայն տարածում գտած փոխակերպական եղանակով (խոսքն այն մասին է, թե այդ որոշիչ-բաղադրիչները հնարավոր է փոխարինել լեզվաբանական տերմինաբանության մեջ գոյություն ունեցող այլ անվանումներով):

Նման սկզբունքներով եռանդամ բաղադրյալ տերմինների մեջ հիմնականում կարելի է առանձնացնել շարահյուսական հարաբերությունների երեք ընդհանուր տիպ:

Շարահյուսական հարաբերությունների առաջին տիպ. այս դեպքում առաջնային որոշիչ բաղադրիչը անմիջականորեն կապակցված է գլխավորին, իսկ երկրորդային որոշիչ բաղադրիչը լրացնում է առաջնայինին: Այսինքն, կարելի է ասել, որ երկրորդային բաղադրիչը միջնորդավորված ձևով է կապված գլխավորին կամ ավելի ճիշտ այն լրացնում է ամբողջ կառույցի որոշյալ մասին (առաջնային որոշիչ բաղադրիչին և գլխավորին): Այս կարգի շարահյուսական հարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ $x \rightarrow (y \rightarrow z)$ Օրինակ՝ եռաստիճան $\rightarrow$ (բաղաձայնական $\rightarrow$ համակարգ):

Պարզ է, որ շարահյուսական այս ընդհանուր կառույցում կարելի է առանձնացնել հարաբերությունների մի շարք մասնավոր տեսակներ:

ա) Եռանդամ բաղադրյալ տերմիններ, որոնց բոլոր բաղադրիչների միջև էլ առկա է որոշչական հարաբերություն (այսինքն, ամբողջ կառույցը որոշչական է): Այսպես օրինակ՝ ետադաս $\rightarrow$ (դերբայական $\rightarrow$ դարձված), ինչպես նաև՝ ենթակա երկրորդական նախադասություն, բայական անդեմ ձև և այլն:

բ) Եռանդամ բաղադրյալ տերմիններ, որոնց առաջնային որոշիչ բաղադրիչի և գլխավորի միջև առկա է հատկացական հարաբերություն, իսկ երկրորդային որոշիչ բաղադրիչը ամբողջ կառույցի որոշյալ մասի հետ կապված է որոշչական հարաբերությամբ: Փաստորեն, կարելի է ասել, որ տվյալ դեպքում ամբողջ կառույցը դարձյալ որոշչական է: Այսպես օրինակ՝ երկրորդական $\rightarrow$ (խոսքի $\rightarrow$ մասեր), ինչպես նաև՝ բազմանդամ հոմանիշների

շարժ, բարդ նախադասության պարզեցում, վերաբերական խոսքի մասեր և այլն:

գ) Եռանդամ բաղադրյալ տերմիններ, որոնց բոլոր բաղադրիչների միջև առկա է հատկացական հարաբերություն (այսինքն, ամբողջ կառույցը հատկացական է): Այսպես օրինակ՝ սւժականների→(նամեմատության→աստիճաններ), ինչպես նաև՝ լեզվի նախնական ֆունկցիա, հնչյունի արտասանության տեղում, լեզուների խաչավորման տեսություն և այլն:

դ) Եռանդամ բաղադրյալ տերմիններ, որոնց առաջնային որոշիչ բաղադրիչի և գլխավորի միջև առկա է որոշական հարաբերություն, իսկ երկրորդային որոշիչ բաղադրիչը ամբողջ կառույցի որոշյալ մասի հետ կապված է հատկացական հարաբերությամբ: Այս դեպքում էլ ամբողջ կառույցը արտահայտում է հատկացական հարաբերություն: Օրինակ՝ պատճառականության→(բայական→կարգ), ինչպես նաև՝ նախադասության երկրորդական անդամներ, ուրիշի ուղղակի խոսք, լեզուների ձևաբանական դասակարգում և այլն:

Շարանյութական հարաբերությունների երկրորդ տիպ. այս դեպքում որոշիչ բաղադրիչներից յուրաքանչյուրը անմիջականորեն է կապակցված գլխավորին (որոշյալին): Այսպես, արդի գրական հայերեն բաղադրյալ տերմինի մեջ հանդես եկող երկու որոշիչ բաղադրիչներն էլ անմիջականորեն են կապակցված որոշյալին, որի շնորհիվ էլ այս կառույցը, կարելի է արտահայտել լեզվաբանական տերմինաբանության համակարգում հղած հետևյալ երկանդամ տերմիններով՝ արդի հայերեն և գրական հայերեն:

Ուրեմն, նման կառույց ունեցող տերմինների բաղադրիչների միջև առկա շարահյուսական հարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ $X_1 X_2 Z^{66}$:

Օրինակ՝ Խոնավեզվային շփական բաղաձայն, ինչպես նաև՝ քայական պարզ ստորոգյալ, բառակազմական երկրորդական ձևավույթներ և այլն: Պարզ է, որ շարահյուսական այս կառույցի համար ամենաբնորոշ հարաբերության տեսակը պետք է լինի որոշչականը:

66 Քանի որ նման կառույցներում հանդես եկող երկու որոշիչ բաղադրիչներն էլ համարյա նույն արժեքն ունեն, ուստի դրանք պայմանականորեն նշանակում ենք X_1 , X_2 և ոչ թե՛ X , Y :

Քննությունը ցույց տվեց, որ հիշյալ կառույց ունեցող տերմինների երկու որոշիչ բաղադրիչներն էլ հիմնականում հնարավոր է ազատ փոխակերպման ենթարկել (իհարկե, լեզվաբանական տերմինաբանության մեջ գոյություն ունեցող այլ տերմիններով): Այսպես, սուղի գրական հայերեն տերմինի բաղադրիչները կարելի է փոխարինել հետևյալ տերմիններով՝ առղի $\Rightarrow$ ճին հայերեն և գրական $\Leftarrow$ խոսակցական հայերեն: Նույն կերպ՝ բառակազմական երկրորդական ձևությամբ՝ բառակազմական $\Leftarrow$ բառահարաբերական և երկրորդական $\Rightarrow$ ճիմական ձևությամբ և այլն:

Շարահյուսական հարաբերությունների երրորդ տիպ. այս դեպքում որոշիչ բաղադրիչները միասին են կապակցվում գլխավորին (այսինքն, այդ բաղադրիչները ամբողջ կառույցի որոշիչ մասն են կազմում): Նման հարաբերությունը պայմանականորեն կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ $(X \rightarrow Y) \rightarrow Z$: Օրինակ՝ (չեզոք $\rightarrow$ սեռի) $\rightarrow$ բայ, ինչպես նաև՝ սատեմ խմբի լեզու, միջին բարձրացման ճնշյուն, բարձր աստիճանի ձայնդարձ, առաջնային շարքի ձայնավոր, բաց վանկի օրենք և այլն:

Օրինակներից երկուսն է, որ շարահյուսական նման կառույց ունեցող տերմինների համար բնորոշն այն է, որ կախյալ բաղադրիչները միմյանց հետ կապակցվում են որոշչական, իսկ գլխավորի հետ՝ հատկացական հարաբերությամբ: Իհարկե, տվյալ դեպքում հնարավոր է, որ կախյալ բաղադրիչներն էլ կապակցվեն հատկացական հարաբերությամբ: Այսպես՝ (խոսքի $\rightarrow$ մասերի) $\rightarrow$ փոխանցում, ձայնավորների ներդաշնակության օրենք և այլն:

Շարահյուսական այս ընդհանուր կառույց ունեցող տերմինների կախյալ բաղադրիչները չեն կարող առանձին կապակցվել գլխավորի հետ: Այսպես, չենք կարող ասել ոչ «միջին ճնշյուն», ոչ էլ՝ «բարձրացման ճնշյուն» (միջին բարձրացման ճնշյուն):

Բաղադրյալ տերմինների շարահյուսական հարաբերությունների այս համառոտ քննությունից մի անգամ ևս գալիս ենք այն համոզման, որ ամեն դեպքում էլ բնորոշը և կենսունակը որոշչական կապակցությունն է՝ թե՛ երկանդամ, թե՛ եռանդամ բաղադրյալ տերմինների մեջ, ինչպես նաև դրանց տարբեր կառույցներում:

ԲԱՂԱԿՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քանի որ գիտական տերմինների առանձնահատուկ կողմերից մեկը հասկացության հետ եղած կապն է, ուստի հետաքրքիր է

բաղադրյալ տերմինները վերլուծել տրամաբանական տեսանկյունից: Այսինքն, պարզել, թե այս կարգի տերմինները ի՞նչպիսի կառուցվածք ունեն տրամաբանական տեսանկյունից (տերմինավորված հասկացության տեսակները), ի՞նչ դեր ունի տերմինի հիմքում ընկած հասկացություններից յուրաքանչյուրը, ո՞րն է հասկացության բովանդակությունը և նման կարգի այլ հարցեր:

Ասվեց, որ բաղադրյալ տերմիններն անկախ իրենց կազմումում եղած բաղադրիչների քանակից երկանդամ շարահյուսական հարաբերություններ արտահայտող կառույցներ են: Այսինքն, որոշչային կապակցության կազմի մեջ մտնում են որոշյալ և որոշիչ բառեր: Սրանցից յուրաքանչյուրին համապատասխանում է որոշակի հասկացություն, իսկ ամբողջ բառակապակցությանը՝ հասկացությունների կապակցություն: Այսպես, քայական ստորագյալ բաղադրյալ տերմինի բաղադրիչներից յուրաքանչյուրը բնորոշում է առանձին հասկացություն, այն է «բայական» և «ստորոգյալ», իսկ տերմինն ամբողջությամբ՝ մի նոր հասկացություն: Ինչպես այս տերմինի, այնպես էլ բոլոր կարգի բաղադրյալ տերմինների որոշյալ բաղադրիչով (ստորագյալ) բնորոշված հասկացությունը հասկացությունների կապակցության (բաղադրյալ ստորոգյալ) հիմքն է, գլխավոր տարրը: Որոշիչ բառով («քայական») բնորոշված հասկացությունն արտացոլում է ինչ-որ հատկանիշ: Ընդունելով Ն. Մ. Գոգերի բնորոշումները, մենք ևս հասկացություններից առաջինը կոչում ենք «հիմք-հասկացություն», իսկ երկրորդը՝ «որոշիչ-հասկացություն» (12,50): Սրանք, փաստորեն, սեռի և տեսակային տարբերության գործառությամբ օժտված հասկացություններ են: Հիմքը («ստորոգյալ») ցույց է տալիս որոշչային կապակցության մեջ արտացոլված դասը, իսկ մյուս հասկացությունը («բայական») սահմանափակում է այդ դասը, նրանից առանձնացնում է մեզ հետաքրքրողը (տվյալ դեպքում՝ «բայական» և ոչ թե ասենք՝ «անվանական»):

Բաղադրյալ տերմինների բովանդակության պլանի քննությունը ցույց է տալիս, որ դրանք կերտված են սեռային հասկացության հետևողական սահմանափակմամբ: Այսինքն, այս կառույցում յուրաքանչյուր նոր բաղադրիչ արտահայտում է տեսակային հասկացության գաղափար: Այսպես, ընդհանուր պատմական Ֆեյուենափոխություն տերմինը կերտված է ճեյուենափոխություն տերմինի հիման վրա, վերջինիս բովանդակության հետևողական սահմանափակմամբ:

Բաղադրյալ տերմինների հիմքում ընկած հասկացությունների բովանդակությունը փոխվում է ըստ հասկացության ծավալի և բովանդակության հակադարձ հարաբերության օրենքի: Այսպես, պարզ է, որ նույնը չեն ստորոգյալ և բայական ստորոգյալ տերմիններով բնորոշված հասկացությունների բովանդակությունը և ծավալը:

Հիմք-հասկացությանը ավելացնելով մի ինչ-որ որոշիչ, արդյունքում կունենանք նոր հասկացություն, որը միացնում է միայն այդ երկու կարգի հասկացությունների բովանդակության մեջ մտնող հատկանիշները: Կապակցությանը կցելով նորանոր որոշիչներ, դրանով իսկ մենք ավելացնում ենք բաղադրյալ տերմինների հիմքում ընկած ամբողջ հասկացության բովանդակությունը կազմող հատկանիշների քանակը: Այսպես, «հնչյուն» հասկացությանը կցելով մի շարք որոշիչներ (օրինակ՝ ձայնավոր հնչյուն, առաջնային շարժի ձայնավոր, վերին բարձրացման առաջնային շարժի ձայնավոր), տեսնում ենք, որ անընդհատ ավելանում է ամբողջ կապակցության բովանդակության մեջ մտնող հատկանիշների քանակը (ձայնավոր, առաջնային շարժի, վերին բարձրացման): Եվ բազմանդամ բաղադրյալ տերմինների իմաստը ըմբռնելու համար, բնական է, որ ճիշտ պատկերացում պետք է ունենանք առանձին բաղադրիչների հիմքում ընկած հասկացությունների մասին: Այսպես, հասկանալու համար ստորին բարձրացման առաջնային շարժի փակ ձայնավոր կապակցությունը, նախ պետք է պարզել «փակ ձայնավոր», «առաջնային շարժ», «ստորին բարձրացում» հասկացությունները բնորոշող տերմինների իմաստը: Այսինքն, տվյալ կապակցությունը պետք է ենթարկել անմիջական բաղադրիչների վերլուծության:

Պարզ ընդարձակ նախադասություն, բայական բաղադրյալ ստորոգյալ և այլ կարգի բաղադրյալ տերմինների կազմի մեջ մտնող որոշիչները բնորոշում են միմյանց հարաբերությամբ տրամախաչվող հասկացություններ: Դրանցից յուրաքանչյուրը կապակցության՝ մնացած մասի հարաբերությամբ զխափորապես նույն դերն է կատարում, ինչ որ հիմքի հարաբերությամբ: Ընդ որում, որոշիչներից յուրաքանչյուրի ծավալը մասնակիորեն է համատեղվում առանձին կապակցության մնացած բաղադրիչներից յուրաքանչյուրի հետ:

Պարզ է, որ բաղադրյալ տերմինների բաղադրիչների հիմքում ընկած հասկացությունները պետք է առաջին հերթին լինեն

համատեղելի, քանի որ անհամատեղելի հասկացությունները որոշչափին կապով չեն կարող միանալ...» (12,53)։ Ինչ վերաբերում է անհամատեղելի հասկացությունների քերականական միացմանը, ապա այն հնարավոր է, որ իրականանա, բայց արդյունքում կունենանք ոչ ճշգրիտ, ոչ իրական (կեղծ) հասկացություն բնորոշող կապակցություն։ Բացի անհամատեղելի հասկացություններից, բաղադրյալ տերմինների բաղադրիչների հիմքում ընկած հասկացությունները չպետք է լինեն նույնական։ Հիմնական հասկացությանը ծավալով և բովանդակությամբ նույնական որոշիչ կցումը ո՛չ որևէ բան է առանձնացնում նրանից, ո՛չ էլ որևէ բան է ավելացնում նրան։ Փաստորեն, տվյալ դեպքում կունենանք կրկնաբանության տիպիկ նմուշ։

Այսպիսով, բաղադրյալ հասկացության ճշգրտության նախապայմանը տրամաբանական երկու ընդհանուր սկզբունքների (հասկացությունից և կրկնաբանությունից զերծ լինելը) պահանջների պահպանումն է (12,56)։

ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բնօրինակ տեղական զբաղմունքներ

1. Մ. Արևիյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967:
3. Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
4. Գ. Սևվակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
5. Ա. Սևիթյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971:
6. Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, ՀԳՄԻ ԳԱ, Հայոց լեզվի բաժին, № 2, 1967, էջ 17—161:
7. Օ. Ս. Ախմանով, Очерки по общей и русской лексикологии, М., 1957.
8. Р. А. Будагов, Введение в науку о языке, М., 1965.
9. Л. А. Булаховский, Введение в языкознание (часть II), М., 1953.
10. В. В. Виноградов, Русский язык (грамматическое учение о слове), М.—Л., 1947.
11. Е. М. Галкина-Федорук, Современный русский язык. Лексика. Курс лекции (для вузов), М., 1954.
12. Н. М. Голдер, О логической структуре понятия, выраженного словосочетанием. Логико-грамматические очерки. М., 1961, стр. 49—58.
13. Л. Ельмслев, Можно ли считать, что значения слов образуют структуру? НЛ, вып. 2, М., 1962, стр. 117—136.
14. М. Н. Захарова, О некоторых вопросах словотворчества, УЗ Кишинев., гос. ун-та, вып. I (филологический), 1962, стр. 23—29.
15. Б. А. Ларин, Очерки по фразеологии. УЗ ЛГУ № 198. Серия филологических наук, вып. 24. Очерки по лексикологии, фразеологии и стилистике. Л., 1956, стр. 200—224.
16. К. А. Левковская, О принципах структурно-семантического анализа языковых единиц (на материале немецкого языка). ВЯ, 1957, № 1, стр. 41—45.
17. К. А. Левковская, Теория слова, принципы ее построения и аспекты изучения лексического материала. М., 1962.
18. Общее языкознание (внутренняя структура языка). М., 1972.
19. С. И. Ожегов, О структуре фразеологии. ЛС, вып. II, 1957, стр. 31—53.
20. А. А. Реформатский, Введение в языковедение. М., 1967.
21. Ю. В. Рождественский, О современном строении языкознания, ВЯ, 1965, № 3, стр. 60—69.
22. Л. В. Сахарный, О двух уровнях синхронного словообразовательного анализа. Вопросы методологии и методики лингвистических исследований. Уфа, 1966, стр. 158—162.

23. *И. Е. Торопцев*, Лексическая мотивированность. УЗ ОГПИ, том 22 (историко-филологический факультет), Орел. 1964, стр. 3—178.
24. *Н. М. Шанский*, Очерки по русскому словообразованию, М., 1968.

ՏԵՐՄԻՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) ընդհանուր դրականություն

25. Էդ. Աղայան, *Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին*, ԼՀԳ, 1971, № 1, էջ 85—96.
26. Կ. Զանուկյան, *Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը*, ԼՀԳ, 1971, № 9, էջ 93—98.
27. Ա. Սուգիայան, *Հայերեն տերմինները և նրանց համանիշության հարցը*, ԲՅՀ, 1969, № 3, էջ 96—110.
28. Յ. Տաշեան, *Բառաբանական դիտողություններ հայերէն դիտական լեզվի մասին*, Վիեննա, 1926.
29. *Е. И. Амосенкова*, Некоторые принципы обозначения технических терминов в современном французском языке. АДК, Л., 1953.
30. *Н. Д. Андреев, В. Л. Замбжицкий*, Именное словообразование в спортивной терминологии. Развитие современного русского языка, М., 1963, стр. 119—135.
31. *С. М. Барак*, Терминологическая лексика. Ее место в словарном составе языка (на материале современной английской терминологии железнодорожного транспорта). АДК, Л., 1955.
32. *М. Г. Бергер*, Лингвистическое требование к термину. РЯШ, 1965, № 3, стр. 64—68.
33. *С. Д. Береснев*, О терминологической фразеологии. Сб. работ Свердл. гос. мед. ин-та, вып. 29. Вопросы частной лингвистики, 1960, стр. 126—136.
34. *С. М. Бурдин*, Роль М. В. Ломоносова в создании естественнонаучной терминологии в русском литературном языке. АДК, М., 1962.
35. *В. В. Виноградов*, Вступительное слово (на совещании по вопросам терминологии 1959 г.). ВТ, М., 1961, стр. 3—10.
36. *Г. О. Винокур*, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии. Труды МИФЛИ, 1939, т. V, стр. 3—54.
37. Вопросы терминологии. Материалы Всесоюзного терминологического совещания (сборник). М., 1961.
38. *Б. Н. Головин*, О некоторых задачах и тематике исследования научной и научно-технической терминологии. УЗ Горьковского гос. ун-та, вып. 114. Серия лингвистическая. 1970, стр. 17—25.
39. *В. П. Даниленко*, Как создаются термины? РР, 1967, № 2, стр. 37—64.
40. *О. М. Добровольский-Доливо*, Французская военная терминология, источники и пути ее образования. АДК, М., 1954.

41. Кам работать над терминологией. Основы, методы. Пособие составлено по трудам Д. С. Лотте и Комитета научно-технической терминологии АН СССР. М., 1968.
42. Л. А. Капанадзе, О понятиях «термин» и «терминология». Развитие лексики современного русского языка. М., 1965, стр. 75—85.
43. Л. А. Капанадзе, Терминологическая лексика в общелитературном языке. РЯШ, 1965, № 3, стр. 68—71.
44. Р. Ю. Кобрин, Опыт лингвистического анализа терминологии. АДК, Горький, 1969.
45. А. Н. Кожин, О характере отношений в терминированных устойчивых выражениях. УЗ МОПИ им. Н. К. Крупской, том 160. Русский язык, вып. II, стр. 71—115.
46. В. В. Кондрашова, К вопросу об изучении номенклатуры в советском языкознании. Труды Самаркандского гос. ун-та, вып. 204, стр. 74—91.
47. В. Н. Костров, Языковеды должны изменить свое отношение к терминологической работе (письмо в редакцию). ВЯ, 1959, № 2, стр. 127—130.
48. Н. Л. Кузькин, К вопросу о сущности термина. Вестник ЛГУ, № 20. Серия истории, языка и литературы, вып. 4, 1962, стр. 136—146.
49. Л. Л. Кутина, Формирование терминологии физики в России. Период предломоносовский: первая треть XVIII века. М.—Л., 1966.
50. Г. А. Лаврентьева, Связь классификаций, определений и терминов в технической терминологии. ИАН ОТН, 1952, № 7, стр. 1061—1076.
51. Н. Н. Левинский, Двучленные термины-словосочетания с препозитивным определением (на материале американской военно-уставной терминологии). АДК, М., 1954.
52. К. А. Левковская, О некоторых особенностях терминологии (на материале немецкого языка). ТИЯ, т. 9, 1959, стр. 355—387.
53. К. А. Левковская, Именное словообразование в современной немецкой общественно-политической терминологии. М., 1960.
54. Д. С. Лотте, Образование системы научно-технических терминов. 1. Элементы термина, ИАН ОТН, 1948, № 5, стр. 727—754.
55. Д. С. Лотте, Основы построения научно-технической терминологии. М., 1961.
56. Д. С. Лотте, Образование и правописание трехэлементных научно-технических терминов. М., 1969.
57. Д. С. Лотте, Краткие формы научно-технических терминов. М. 1971.
58. Место терминологии в системе современных наук (научный симпозиум. тезисы докладов и сообщений). М., 1970.
59. А. И. Моисеев, О языковой природе термина. ЛПНТТ, М., 1970. стр. 127—138.
60. В. В. Налимов, Э. М. Мульченко, К вопросу о логико-лингвистическом анализе языка наук, ПСЛ-1971, М., 1972. стр. 534—554.
61. А. А. Реформатский, Что такое термин и терминология? ВТ, М., 1961, стр. 46—54.

- 62 А. А. Реформатский, Термины как член лексической системы языка. ПСЛ—1967, М., 1968, стр. 103—125.
- 63 А. А. Санкин, Конструкция «прилагательное + существительное» в английской технической литературе (на материале радиотерминологии). АДК, М., 1952.
- 64 А. А. Санкин, О характерных чертах составных терминов типа «прилагательное+существительное» в английском языке. УЗ I МГПИИЯ, 1959, т. 9, стр. 161—179.
- 65 Семиотические проблемы языков науки, терминологии и информатики. Материалы симпозиума—рефераты и аннотации, часть 1—2 МГУ, 1971.
- 66 В. Н. Семичев, Продуктивные модели терминологического словообразования (на материале литературоведческой терминологии). УЗ Моск. ордена Трудового Красного Знамени гос. пед. ин-та им. В. И. Ленина, № 296. Современный русский язык, М., 1968, стр. 160—174.
- 67 В. Н. Семичев, Вопросы терминологического словообразования (на материале терминологии литературоведения) АДК, М., 1968.
- 68 Э. Ф. Скороходько, Систематичность в терминологии. Проблемы государственной стандартизации терминов в СССР. Сборник статей по материалам конференции. М., 1968, стр. 32—58.
- 69 Н. К. Сухов, Об основных направлениях современной терминологической работы в технике. ВТ, М., 1961, стр. 71—83.
- 70 А. М. Терпигорев, Об упорядочении технической терминологии. ВЯ, 1953, № 3 стр. 71—76.
- 71 Е. Н. Толикина, О системном соотношении терминологического сочетания и фразеологической единицы. Проблемы фразеологии (исследования и материалы). М.—Л., 1964, стр. 150—172.
- 72 Е. Н. Толикина, Термин в литературном языке. Нормы современного литературного словоупотребления. М.—Л., 1966, стр. 43—65.
- 73 В. Н. Ульянов, Немецкая авиационная терминология. АДК, М., 1956.
- 74 А. Д. Хаютин, Общественно-политическая терминология Жан-Жака Руссо в свете современного понимания термина. АДК, Калинин, 1970.
- 75 М. К. Шарашова, К разграничению терминов и номенклатурных единиц. УЗ Калининского гос. пед. ин-та, т. 66, ч. 1. Очерки по русскому языку. 1969, стр. 75—81.

բ) Լեզվաբանական տերմինաբանական գրականություն

76. Ա. Մուրադյան, Հոնարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971.
77. Կ. Սեվակ, Խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀ ԳԱ, 1939, հ. 11, էջ 189—244.
78. О. С. Ахманова, К вопросу об основных понятиях метаязыка лингвистики. ВЯ, 1961, № 5, стр. 115—121.
79. О. С. Ахманова, В. В. Веселитский, О современной лингвистической терминологии (письмо в редакцию). ЛС, вып. V, 1962, стр. 167—168.

- 80 *М. А. Балабан*, О грамматической терминологии (письмо в редакцию). ИЯШ. 1956, № 1, стр. 98—101.
- 81 *Е. А. Бокарев*, Вступительное слово (доклад, секция лингвистической терминологии). ВТ, 1961, стр. 163—166.
- 82 *Б. Н. Головин*, О минимально-достаточном определении слова. УЗ Горьковского гос. ун-та, вып. 52, 1961, стр. 397—406.
- 83 *П. Ивич*, К проблеме лингвистической терминологии и условных обозначений в славянских языках. ВЯ, 1963, № 1, стр. 18—28.
- 84 *А. В. Исаченко*, Некоторые вопросы лингвистической терминологии, в частности славянской. ИАН ОЛЯ, т. XX., вып. 1, 1961, стр. 44—53.
- 85 *А. В. Исаченко*, Термин-описание или термин-название? Славянская лингвистическая терминология (сборник статей I). София, 1962, стр. 19—25.
- 86 *И. А. Кузнецов*, О лингвистической терминологии и лингвистических формулировках. Вопросы английского и немецкого языкознания (материалы научной конференции вузов Урала). Уфа, 1962, стр. 111—123.
- 87 *Н. Б. Кузьмина*, Морфолого-семантический очерк русской терминологии языкознания. АДК, Минск, 1971.
- 88 *З. Н. Левит*, К вопросу о пополнении словарного состава французского языка. УЗ I МГПИИЯ, т. 10, 1956, стр. 137—150.
- 89 *Ю. С. Маслов*, О некоторых расхождениях в понимании термина «морфема», УЗ ЛГУ, № 301, Серия филолог. наук, вып. 60, 1961, стр. 140—152.
- 90 *В. С. Минавичев*, Фонетическая терминология в трудах И. А. Бодуэна де Куртене. Лингвистическая терминология и прикладная топонимастика. М., 1964, стр. 7—30.
- 91 *И. И. Ревзин*, Некоторые замечания о методах введения математических терминов в лингвистику. Славянская лингвистическая терминология (сборник статей I). София, 1962, стр. 57—62.
- 92 *И. И. Ревзин*, О логической форме лингвистических определений (на примере определения морфемы). Применение логики в науке и технике, М., 1960, стр. 140—148.
- 93 *А. А. Реформатский*, «Словарь лингвистики пражской школы» (рецензия). ВЯ, 1961, № 3, стр. 126—129.
- 94 *Т. Н. Солдатова*, Словосочетание в функции терминов (на примере построения грамматических терминов). Ставропольский гос. пед. ин-т. Конференция по итогам выполнения планов научно-исследовательской работы за 1958/59 учебный год. Тезисы докладов, вып. I, Гуманитарные науки, 1960, стр. 44—48.
- 95 *И. А. Субботина*, Пути и тенденции развития грамматической терминологии современного немецкого языка. УЗ I МГПИИЯ, т. 39, 1968, стр. 214—229.
- 96 *Р. М. Трифонова*, К определению термина (на материале лингвистической терминологии). Материалы и тезисы XV итоговой научн. конференции (Оренбург. гос. пед. ин-т). 1967, стр. 107—108.

- 97 Р. М. Трифонова. О месте мотивированных и немотивированных терминов (на материале грамматической терминологии). Материалы к тезисы докладов XV итоговой научной конференции (Оренбургский пед. ин-т). 1967, стр. 108—109.
- 98 А. Б. Шапиро, Пражское совещание по вопросам лингвистической терминологии (состоявшееся в Праге с 11 по 15 марта 1960). ИАН ОЛЯ, т. XIX, вып. 5, 1960, стр. 443—445.
- 99 А. Б. Шапиро, Второе совещание членов лингвистической секции международной терминологической комиссии при международном комитете славистов (хроника). ИАН ОЛЯ, т. XXI, вып. 4, 1962, стр. 372—375.
- 100 Р. О. Якобсон, Круговорот лингвистических терминов. «Фонетика, Фонология. Грамматика», М., 1971, стр. 384—387.

ՐԱՌԱՐԱՆՆԵՐ

101. Մ. Հաղորդյան, Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան (ձեռագրի իրավունքով), Երևան, 1963:
- 102 О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969.
- 103 Я. Вахек, Лингвистический словарь пражской школы (перевод И. А. Мельчука и В. З. Сапникова, под редакцией и с предисловием А. А. Реформатского). М., 1964.
- 104 Ж. Марузо, Словарь лингвистических терминов, М., 1960.
- 105 А. Л. Трахтеров, Английская фонетическая терминология, М., 1962.
- 106 Э. Хэмп, Словарь американской лингвистической терминологии (перевод под редакцией и с предисловием В. И. Звегинцева) М., 1964.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԳՁ ԺՏՏ — Գ. Զախովյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
- ԷԱ ԺՀՀ — Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
- ԷԱ ՀՔ ՀԼ — Էդ. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու (դասագիրք միջնակարգ դպրոցի 5—6-րդ դասարանների համար), Երևան, 1971:
- ՀՔ ԱՀՔՏ — Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
- ՀՕ ԱԺՀ — Հ. Օհանյան, Ածականը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
- ՄԱ ԱՔ — Մ. Արեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վազարշապատ, 1906:
- ԱԴԿ—Автореферат кандидатской диссертации.
- ВТ—Вопросы терминологии. Материалы всесоюзного терминологического совещания (сборник). М., 1961.
- ВЯ—Вопросы языкознания.
- ИАН ОЛЯ—Известия АН СССР. Отделение литературы и языка.
- ИАН ОТН—Известия АН СССР. Отделение технических наук.
- ИРТ—Исследования по русской терминологии. М., 1971.

ИЯШ—Иностранные языки в школе.
ЛПНТТ—Лингвистические проблемы научно-технической терминологии
(сборник. М., 1970).
ЛС—Лексикографический сборник.
ПСЛ—Проблемы структурной лингвистики (сборник).
ПЯНТ—Проблемы языка науки и техники. М., 1970.
РЯШ—Русский язык в школе
СПТНТ—Современные проблемы терминологии в науке и технике.
М., 1969.
ТИЯ—Труды Института языкознания АН СССР.
ТН—Терминология и норма, М., 1972.
Труды МИФЛИ—Труды Московского института истории, философии и
литературы.
УЗ ЛГУ—Ученые записки Ленинградского гос. ордена Ленина универ-
ситета им. А. А. Жданова. Серия филологических наук.
УЗ I МГПИИЯ—Ученые записки I Московского гос. педагогического
института иностранных языков.
УЗ МГУ—Ученые записки Московского гос. университета.
УЗ МОПИ—Ученые записки Московского областного педагогического
института им. Н. К. Крупской.
УЗ ОГПИ—Ученые записки Орловского гос. педагогического института.